



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՏԻԿԻՆ ԱԶԵՐԻ ՀՐԱԶԵԱՑ


ԻՄ ՅԻՇՈՂԱԿԹԻՒՆԵՐՈ



ՆԵՐՍԼԵՍՆԵՐՆ ՑՊԱՐՈՎՆ

ՓԱՐԻԶ

1909



9pm

ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԵՐՍ

Բ  
23.987

Տիկին Աջուկ Հրազեան

# ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՍ



ՓԱՐԻԶ

ԵՐՍԽՍԵԱՆ Տպարան

1909





639-2005



Տիկին ՀՐԱԶԵՆՅԱ

Բանասեղծ Յովհաննես Թումանեանին,

Ազնիւ բարեկամ ,

Դուք խնդրեցիք եւ ստիպեցիք որ գրեմ իմ  
յիշողութիւններս : Առաջին պահուն , ինձ հա-  
մար՝ տա դժուար եղաւ ձեր խնդիրքը կատարել .  
Գրիչս անզօր կը զգալի արտայայտելու իմ զգա-  
ցումներս , կենդանի զոյներով պատկերացնելու  
իմ անցեալի յիշատակներս : Մուսան ինձ չէ  
տնորհեր իր բնարի թելերէն եւ ոչ իսկ ամենա-  
փոքր մասնիկ մը . բնարը նուիրեր և ուրիշնե-  
րուն եւ ինձ բոլեր և լոկ արձագանքի պատօնը :  
Ի՞նչ փոյք : Չեր սիրալիր իւրախուսանէն մըդ-  
ւած , ես գրեցի : Երէ չեմ ալ յաջուղած կենդա-  
նագրել իմ հին օրերուս պատկեր՝ ինչպէս կը  
ցանկայի , գեր մեր քատրոնի պատմութեան մեկ  
գլուխը ուրուազծած եղայ . քոյլ տուիք որ  
ձեզի՝ ձօնեմ զայն :

ՀՐԱ.ԶԵՍԱՑ

Պարու , 1904



Ծնած եմ Կ. Պոլսոյ Բերա թաղը՝ 1859  
մայիս 20 ին։ 1866 ին հայրս վախճանեցաւ։  
Հայրական սէրէն զրկուիլս զիս շատ կը մաշե-  
ցնէր ու սիրոս կը կրծէր։ Ի՞նչքան լաց եմ  
եղած ու խեղձ մայրս և ուրիշներն ալ լացու-  
ցած՝ երգելով թբքերէն կազէլի մը սա տողերը.

Պարիմ Ալլան, սէն նազար իր, պէն ժամիր բալէնսիզ էմ.  
Զիրա եօֆ իմսաս պիր եւրտն, Շիմսէտն բալէնսիզ էմ.  
Խւմիւտիմ սէն սին, նազմիւսն, պօյուն էյտրմէ Շիմսէյէ,  
Նէ բուրտում նալտը էլիմտէ, վա՞ն պանա, բալէնսիզ էմ.  
Պապամտամ էօսիսզ նալտը, վա՞ն պանա, բալէնսիզ էմ\*).

(Օրինեալ Ասուած, դուն աչքդ վրաս դարձուր, ևս խեղն  
անբաղդ էմ.  
Վասնզի ոչ մէկ տեղէ, ոչ մէկէ յոյս չունիմ, անբաղդ էմ.  
Ցոյս դուն ևս, Ամենողորմ, ոչ մէկուն վիզը ծուռ մի՛  
ձգեր.  
Ինչ բռնեցի՝ ձեռխս մնաց, վա՞յ ինձի, անբաղդ էմ.  
Հօրմէս որբ մնացի, վա՞յ ինձի, անբաղդ էմ)։

\*). Վերջին տողը երգին մէջ սապէս էր՝ Տիւնեանց  
կէլտիմ կէլէլի կիւլմէտիմ, բալէնսիզ էմ (Աշխարհ զալէս  
ի վեր՝ չխնդացի, անբաղդ էմ). ևս այդ տողը փոխած էւ  
վինակիս յարմարցուցած էի։

Եւ այս զգացմանս դրգոմանը ուժ կուտային Խըռնառուլայի ուսումնարանի երախաները, որտեղ կ'երթայի ամէն օր Սաղմոս կարդալու . անոնք միշտ կը խօսէին իրենց հօր մասին , թէ ի՞նչ կ'ըսէ իրենց , թէ ինչե՛ր կ'առնէ իրենց համար: Անոնց արտասանած ամէն մէկ բառը իմ ներքին կրակս կը հրահրէր : Ես տուն կը դառնայի , ոչ իր երախայ , այլ քսանեռութը տարեկան պատանի , որ իր սիրուհին նոր թաղած է : Մայրս , զիս սաստիկ սիրելուն , գրեթէ արգելք կը դառնար ուսումնարան երթալուս , օր մը “տաքութիւն ունիս” , ուրիշ օր մը՝ “տկար ես” ըսելով : Յաճախ եկեղեցի կը տանէր , յոյս ունէր կրօնական զգացմամբ մեղմացնել իմ վիշտը . փոքր առ փոքր ես սկսայ յարի՝ այն փարզապետին որ եկեղեցւոյ բեմէն Քրիստոսի չարչարանքները կը պատմէր : Երբ տուն կը դառնայինք , անմիջապէս բարձրաւանդակի մը վրայ կ'ելլէի , գլուխս կ'անցընէի տոպրակ մը՝ երբ վեղար , և ձեռքս առնելով փայտ մը , կը կրկնէի մեծ ոգեսրութեամբ այն խօսքերը զոր լսած էի եկեղեցւոյ բեմէն . մայրս ու մեծ մայրս լալով մտիկ կ'ընէին ինձի . յանկարծ մեծ մայրս կը սկսէր ողբասացութեան . “Իմ մէկ որդիս , իմ մէկ որդիս , ո՞վ է մատներ Յիսուս որդիս”: Այս ներկայացումները տեսեցին մինչև այն օրը ուր մայրս իմ խնդրանօքս զիս դրաւ

Քրանսացի Գթութեան Քոյրերու Թագսիմի ուսումնարանը : Ես մինչև այդ վայրկեանը եղած էի , և հոտ ալ շարունակեցի ըլլաւ , ծոյլ աշակերտ մը :

Պարզեաբաշխութեան հանդէսի համար կը պատրաստէին վատվիլ մը , այս վօտվիլին մէջ կար ծեր կնոջ գեր մը , զոր յանձնած էին դասընկերուհւոյ՝ օրիորդ Անժէլին . անոր փորձերը անցածող էին , ես համարձակեցայ խնդրել Գթութեան Քոյրէն՝ որ այդ գերը ինձ տրուի . “Ծո՞յլ , ըսաւ , ամէն օր դասատան մէջ գէշ նօթեր կ'առնես , ասոր մէջ ի՞նչպէս պիտի յաջողիս” : Խնդրեցի , թախանձեցի որ անգամ մը փորձէ , և հաւանեցաւ : Թէ ի՞նչ եմ զգացած այն բռպէին ուր դպայ այդ խաղը պարունակող տետրակին , նկարագրել անկարող եմ: Եթէ աղքատ մարդ մը վիճակահանութեան տոմսակ մը ունենար , և ինք առանց գիտնալու թէ իր տոմսակը արդէն մեծ թիւը շահած է՝ յանկարծ բերէին ոսկիները և ըսէին՝ Աչա՛ , քուկդ է , ինչ օր պիտի ըլլար այդ մարդուն հոգեբանական դրութիւնը՝ աչա այդ դրութեան մէջ էի . չէի գիտեր ո՞ւր պահեմ տետրակս : Երբ տուն հասայ , մայրս տեսնելով արտասուալից աչքերս , լեղապատառ հարցուց . “Ի՞նչ է , ի՞նչ ունիս” : — “Անուշիկ մայրիկս , ըսի , ասոնք ուրախութեան արցունքներ են . ես միշտ դասերուս

Համար գէշ նօթ եմ առեր , այնպէս չէ՞ բայց  
այժմ ես ալ պարզեւ պիտի ստանամ , կը  
տեսնե՞ս :

Այդ գիշերը մինչև լոյս աշխատեցայ , և  
երկրորդ օրը դերս անդիր գիտէի : Երկու թէ  
երեք օրէն տեղի ունեցաւ պարզեաբաշխութեան  
հանդէսը : Այդ օրը իմ յաղթանակի օրս էր :  
Ծափահարուեցայ , տասնի չափ պասկներ ու  
գրքեր ստացայ , բերայի ֆրանսական լրագիր-  
ները գովեստով խօսեցան իմ մասիս : Ուրախու-  
թեանս ոչ չափ կար ոչ սահման : Այժմ ես ալ  
ուսումնարանին մէջ իմ տե՛ղս ունէի :

Քանի մը շաբաթ յետոյ , արգէն մեր տան  
սրահը թատրոնի էր փոխուած : Մէկ քանի  
երախայ՝ միանալով խումբ մը կազմեցինք . շա-  
բաթական հինգ զրուշ վճարողը անդամ էր .  
այդ զրամով շինեցինք թղթէ փարագոյրներ ,  
սաղաւարտներ , մէկ քանի պատմական զգեստ-  
ներ , ևն : Առաջին ներկայացումն էր “Սուրբն  
Ներսէս” : Հանդիսականներն էին մասնակցողնե-  
րու ընտանիքները . իսկ փողոցէն անցնողները  
տան առջեւ խոնուած՝ կը գոռային . “Մենք ալ  
կուզնէք տեսնել . զրամով չէ՞ առէք , ու թոյլ  
տուէք որ մենք ալ տեսնենք” :

Երկրորդ ներկայացման պատրաստուելու  
վրայ էինք . խաղին մէջ կար տղամարդու դեր  
մը՝ որուն համար կը պակսէր գերակատար . ես

ստանձնեցի այդ գերը , իսկ խնդրեցի օրիորդ  
Աղաւնի Զապելէն (այժմ տիկին Պիննէմէճեան ,  
որու չետ դասընկեր էինք ֆրանսական ուսում-  
նարանին մէջ) ստանձնել իմ դերս , ինչ որ  
ուրախութեամբ ընդունեցաւ :

Ներկայացման իրիկունը , հասաւ վարա-  
գոյրը բարձրացնելու ժամը , բայց Օր Աղաւնին  
դեռ չեր եկած . մէկ ժամ ուշանալէն յետոյ ,  
վերջապէս եկաւ . հետաքրքրուեցայ թէ ինչո՞ւ  
էր ուշացեր . խոստովանեցաւ թէ ինքը արդէն  
գերասանուչի է , և խնդրեց որ այս գաղտնիքը  
մէկուն չյայտնեմ , որովհետեւ եթէ իմացուէր՝  
զինքը կարտաքսէին ուսումնարանէն . փորձի էր  
գացեր , և այդ պատճառով ուշացեր էր : —  
“Ա՛յ , Ազնի՛ւ , գիտե՞ս , ըստ , մենք պիտի  
ներկայացնենք “Թափառական Հրեայ” , որուն  
մէջ ես պիտի կատարեմ Պլանշի դերը , իսկ  
Ռոզի գերը կատարող գեռ մէկը չունինք . եթէ  
Պաղաքեանը քեզ տեսնէր , կուգար մօրմէդ  
խնդրելու որ գուն կատարես Ռոզի դերը” : Ես  
երբ լսեցի թէ Աղաւնին արդէն գերասանուչի  
է և քանի մը անգամ բեմ նլեր է , ուժերս  
կորսնցուցի , ձեռքերս թուլցան , և այդ բո-  
պէին՝ սառեցայ մեր սրահէն ու մեր առանին  
ներկայացումներէն : “Խնդրեմ , Աղաւնի , ըսի ,  
որ Պաղաքեանին ըսէ՛ որ գայ ձեր տունը ան-

դամ՝ մը զիս փորձէ, կարելի է յարմարութիւն չունիմ:

Երկրորդ առտուն կանուխ, Աղաւնին զիս կանչեց մօրմէս գաղտնի. գացի տեսայ Պ. Մաղաքեանը, փորձեց զիս և բացագանչեց. “Գիւտէ, զիւտ է:” Անմիջապէս եկաւ մօրմէս խնդրելու որ ինձ թոյլ տայ բեմ ելլել. սրտատրոփ սպասեցի թէ մայրս ի՞նչ դատավճիռ պիտի արձակէր: Առանց վարանման, մայրս վճռեց.

— Ո՛չ, ո՛չ, իմ աղջիկս թատրոնի աղջիկ ըլլալու համար չէ ծնած, ո՛չ, ըսաւ, առանց ուշ դնելու աչքերէս վազած արցունքներուն: Ի չարկէ, Մաղաքեանը մէկ քանի խօսքով ուղեց բացատրել՝ թատրոնի նշանակութիւնը և ապագային անոր կատարելիք մեծ գերը. բայց մայրս անդրդուելի մնաց:

Կեանքս թունաւորուեցաւ. չճաշեցի, չընթրեցի, գացի մտայ անկողին, ուր՝ սաստիկ ջերմի մէջ՝ մինչև առտու զառանցեր եմ՝ “Թոյլ տուր, մայրիկ, թոյլ տուր:” Առտուն՝ մայրս զիս բժշկին տարաւ, պատմեց թէ ինչպէս զառանցեր եմ և զառանցած ատենս ի՞նչ խօսքեր. եմ բսեր: Բժիշկը լաւ մարդ էր. ստիպեց մայրս որ թոյլ տայ ինձ մէկ կամ երկու անգամ ներկայացնելու. “Դեռ փոքր է. վասահ եմ որ եթէ թոյլ տաք, կ'առողջանայ:” Ուրախութենէս՝ բժշկին ձեռքերը համբուրեցի:

Մայրս յանձնեց զիս Մաղաքեանին՝ ըսելով. — Սիմիայն մէկ անգամ, Պ. Մաղաքեան. ու բան մը պիտի չվճարէք. անունն ալ փոխեցէք, ինդրեմ:

Ի հարկէ, Պ. Մաղաքեանը խոստացաւ՝ ոչ միայն անունս, այլ զէմքս ալ փոխելու՝ եթէ մայրս ցանկար: Անմիջապէս երկրորդ օրը գացի “Թափառական Հրէայի փորձին՝ Բերայի Փրանսական թատրոնը:” Երբ ներս մտայ, օդային կազի հոտը զիս գինովցուց: Ինձ կը թուէր թէ աշխարհիս վրայ չկայ այդպիսի անուշահոտ բուրմունք. Կ'ամչնամ ըսելու որ մինչեւ այսօր նոյն կարծիքը ունիմ. Ես ատ անուանեցի “թատրոնի հոտ:”

Առաջին անգամն էր որ կը տեսնէի իսկական թատրոն ու գերասաններ: Այդտեղ տեսայ տիկին Արուսեակ Պէզիրճեանը, իր քոյրը՝ Աղաւնի Վալիսէեանը, և մեր տաղանդաւոր գերասան Ազամեանը, որ ստանձնած էր Գաբրիէլ Քահանայի գերը: Փորձը յաջող անցաւ: Ներկայացման իրիկունը, Արուսեակ Պէզիրճեան՝ համբուրելով՝ ինքը անձամբ հագցուց ինձի ու Զապելին՝ սև զգեսաններ: Ես վերացած էի: Զեմ յիշեր թէ ինչ անցաւ շուրջա: Գիտեմ միայն որ այդ երեկոյ իմ փոքրիկ գերիս մէջ անգամ մը ծափահարուեցայ. ուսուցիչս և թարգմանիչը գոչ էին ինձմէ: Պ. Մաղաք-

մայրիկէս գաղտնի՝ վճարի ինձ հինգ  
մէջիտ . թարգմանիչն ևս նուիրեց նոյնքան .  
ստացայ ուրախութեամբ այդ գումարը և տարի  
գաղտնի մեր տան կտուրին տակ պահեցի :

Չեմ յիշեր ինչքան ժամանակ էր անցեր  
այդ ներկայացումէն յետոյ , օր մը՝ Պ. Մա-  
ղաքեանը եկաւ զիս գտաւ ուսումնարանը , հաս-  
կըցուց թէ պիտի ներկայացնեն “Վարդան” .  
անոր մէջ՝ “Ոգի-Հայաստանի”ի դերը ինձ շատ  
յարմար էր . թէ՛ պէտք էր երգէի և թէ՛ պէտք  
էր արտասանէի . մօրմէս գաղտնի գացի մեր  
հանրածանօթ երաժիշտ Տիգրան Չուխաճեանի  
մօտ , սորվեցայ երգը , նոյնպէս՝ ոտանաւորը :  
Սկսայ ինդրել մօրմէս որ թոյլ տայ , կրկին  
մերժեց , բայց երբ իր առջե արտասանեցի ու  
երգեցի , տեսնելով որ ես արդէն դերը պատ-  
րաստեր եմ , երկրորդ անգամուան համար իր  
համաձայնութիւնը տուաւ : Այդ իրիկունը շատ  
ծափահարուեցայ , և երկու անգամ կրկնել  
տուին երգը : Հեղինակէն ստացայ հինգ մէջիտ ,  
Պ. Մաղաքեանէն՝ տասը , և այդ գումարն ալ  
տարի դրի թաքստոցիս մէջ :

Երագրութիւնը մանաւանդ ուշադրութիւն  
էր գարձուցեր իմ վրաս . զիս կ'անուանէր “տա-  
ղանդ” , և կը ինդրէր Պ. Մաղաքեանէն տալ  
ինձ դեր :

Քանի մը շաբաթ յետոյ , ուսումնարանէն

արձակման պահուն , կրկին երկցաւ Պ. Մա-  
ղաքեանը . կարծես թէ սիրահարներ ընկալի  
գացինք քովի փողոցը , որպէս զի ոչ ոք մու-  
տեսնէ : Այդտեղ ինձ տուաւ մեծ դեր մը՝  
“Հայկ Գիւցաղն”ի մէջ , Հայկանուշի դերը .

Պատրաստէ՛ , Ազնիւ . բան մը կ'ընենք ,  
այս անգամ ալ հրաման կը ստանանք :

Եւ որովհէտեւ ձմեռնային շրջանին վերջն  
էր , այդ իսկ պատճառով դիւրութեամբ ստա-  
ցանք հրամանը :

Առաջին փորձին , իմ դիմացս կանգնած էր  
Պետրոս Ադամիեանը , սիրահարի գերով . այն-  
պիսի ոգեսորութեամբ դրկեց զիս՝ “Հայկանուշ” ,  
կը սիրե՛մ գքեզ , ըսելով , որ ես խրտչեցայ և  
սկսայ լալ : — “Պարոն Մաղաքեան , չեմ իսա-  
զար այս դերը , առէք , ինծի նորէն փոքրիկ  
դերեր տուէք” :

Փորձը խանգարուեցաւ : Երկրորդ օրը՝ Պ.  
Մաղաքեան զիս համոզեց՝ ըսելով . — “Տե՛ս , ես  
դերը առի այն պարունէն և տուի ուրիշի մը ,  
Պ. Գաւիթ Թարեանցի , որ ամուսնացած է և  
սիրունիկ աղջիկ մը ունի” :

Մեծ էր ուրախութիւնս տեսնելով համեստ  
պարոն մը , որ պիտի ըլլար բեմի սիրահարս :  
Պ. Մաղաքեան կարեր էր ինձ համար մասնաւոր  
կօշիկներ բարձր կրունկներով . շաբաթի մը

չափ՝ երկայն փեշ հագցնելով փորձեր ընել  
տուաւ:

Ներկայացման իրիկունը՝ թատրոնը լեցուն  
էր, և մեծ էր ոգևորութիւնը: Այն ժամանակ  
ողբերգութիւնները մեծ տեղ կը բռնէին. այն  
դերասանը որ կը կարողանար երեք քայլ առաջ  
և երեք քայլ ետ երթալ, ձեռքերը օդին մէջ  
տարածել, ոտքին մէկը բարձրացնել, և աչքերը  
տախտակամածին վրայ յառելով “Հեռո՛ւ, հեռո՛ւ,  
արիւնալից ուրուական” պուալ, արդէն  
տարած էր յաղթանակը, և կը կոչուէր առա-  
ջին դերասան կամ դերասանուչի:

Վարագոյրը բացուեցաւ. ես նստած էի  
պարտէզի մէջ, սկսայ մենախօսութիւնս. ինչ-  
պէս թութակ, կը խօսէի լեզուով մը զոր չէի  
հասկնար.

“Հրալար փանդիռն սիրոյս հուրը արծար-  
ծելով խանգարեց քնոյս քաղցրութիւնը. ճա-  
ճանչք արեւոն վարդից թերաբացիկ թերթերը  
կը համբուրեն և ցողք արշալցին նոցա կարմիր  
շրթներէն լուսասիփեւ մարդարիտ կը կախեն:”

Բայց կը խօսէի բնական կերպով, ձեռքս ու  
ոտքերս հանդարտ էին, որովհետև ինձ ծանօթ  
չէր “առաջին” ըլլալու պայմանը: Ժողովրդին  
համար՝ ատիկա նորութիւն էր. կերևայ թէ  
հաճելի եղան իրեն՝ այդ հանդարտ ու ոչ-  
բռնազբօսիկ ձևերը. շատ շատ անդամներ ծա-

փահարեց զիս և ի տես կանչեց ուրախ տրա-  
մադրութեամբ: Այդ ժամանակուան թերթերը,  
Մասիս, Մանզումեկ, Մամուլ, գովեստով խօ-  
սեցան իմ մասիս: Պ. Մաղաքեանը ինձ վճարեց  
տանուչինդ մէջիտ, իսկ հեղինակը՝ Պ. Ռո-  
մանոս Սէտէֆձեան՝ տասը մէջիտ նուիրեց. ձեզ  
այժմ յայնի է իմ թաքստոցս, այս անգամ  
ալ կարողացայ յաջողութեամբ այնտեղ հասցնել  
քսանուչինդ մէջիտը:

Մեր տան մէջ կը բնակէր մօրեղբայրս, որ  
ունէր կին և երեք աղջիկ. այդ կնոջ լեզուն  
սուր էր և ռամիկ, շարունակ կը նախատէր  
մօրեղբայրս. “Քոյրդ իր մէկ հատիկ աղջիկը  
հասարակաց կին պիտի գարձնէ. եթէ ան  
ըլլար Արուսեակ Պէղիրձեան մը, այդ ուրիշ  
բան. բայց այդ խլլոտը ի՞նչ է որ ընելիքը  
ի՞նչ ըլլայ:”

“Հայկ Դիւցազնի, ներկայացման յաջորդ  
օրը այր ու կին՝ նստած իրենց սենեակին մէկ  
անկիւնը՝ կանչեցին մայրս և սկսան պախարակել  
զայն՝ կրկնելով նոյն խօսքերը. “Ի՞նչ է որ ընե-  
լիքն ի՞նչ ըլլայ:”

Ա՛լ չկրցայ համբերել. գացի կտուրը, լե-  
ցոցի փէշի մէջ մէջիտիէներու կոյտը, բերի ու  
վերէն թափելով անոնց գոգը՝ ըսի.

— Եթէ ես ոչինչ եմ, ինչո՞ւ են տուեր

Այս որ տեսան , լեզունին կարկամեցաւ ,  
ա՛լ չկրցան խօսիլ . իսկ մայրս բարկացաւ ինծի .  
“Քեզի չէի՞ ըսած որ դրամ պիտի չընդունիս” :  
— Ինչո՞ւ չառնէի . ես վաստկած եմ այդ  
դրամները . իմ արդար վաստակս է ատիկա :

Այսքան պիտի ըլլար իմ գործունէութեանս  
սկիղըն ու վերջը , եթէ անակնկալ դէպք մը  
չյեղաշընէր մեր կեանքը . այդ դէպքն էր բե-  
րայի մեծ հրդեհը , որ տեղի ունեցաւ 1870ին:  
Թերեւս աւելորդ չըլլայ այստեղ քանի մը  
խօսք ըսել ձնողացս մասին :

Հայրս էր Գրիգոր Մինասեան , վաստարան ,  
ընդունակ և բանիմաց մարդ . ծնած էր Անկորս ,  
պապական ծնողքէ . երեք տարեկան՝ որբ էր  
մացած հօրմէ ու մօրմէ , որ իրեն ձգած էին  
մեծ կարողութիւն . իր հօրեղբայրը պէտք էր  
կառավարէր այդ հարստութիւնը , մինչեւ որ  
ինքը չափահաս ըլլար : Այդ հօրեղբայրը զինքը  
իր հետը Պոլիս բերելով կը դնէ գիշերոթիկ  
վարժարան և ինք կը սկսի վաճառականութեամբ  
պարապիլ . Պոլսոյ մէջ մեծ վարկ ունէր . տա-  
նկութը տարեկան հասակին մէջ հայրս ուսում-  
նարանէն ելլելով՝ կը պահանջէ իր հարստու-  
թիւնը , բայց հօրեղբայրս անոր ձեռքը չինդ  
համ վեց ամիս յետոյ , այդ գումարը վերջա-  
ցած ըլլալով հայրս կը դիմէ իր խնամակալին ,

որ նորէն հինգ-վեց հարիւր ոսկի տալով կը  
լուեցնէ զայն : Այսպէս քանի մը անդամներ  
կրկնելէ յետոյ՝ այլ ևս կը մերժէ վճարել՝  
ըսելով . “Դուն սպառեցիր քու դրամներդ , ա՛լ  
ոչինչ ունիս իմ մօտս” : Հայրս կը ստիպուի դա-  
տարան դիմել , և դատէ դատ՝ խելամուտ կ'ըլ-  
լայ օրէնքի բոլոր նրաութիւններուն , օրինագիրը  
կ'ուսումնասիրէ , կ'իւրացնէ , և վերջ ի վերջո  
կը սկսի ասոր անոր դատը պաշտպանել և փաս-  
տաբանութիւնը իրեն պաշտօն կ'ընէ . այն ժա-  
մանակ՝ եթէ չեմ սխալիր՝ Պօլսոյ մէջ չկար  
հայ վաստաբան , հայրս առաջին հայ վաստա-  
բանն էր . յետոյ եկան Եւրոպայէն համալսա-  
րանաւարտ հայ վաստաբաններ :

Մայրս էր Արմաւենի Մինասեան , ծնեալ  
Պօլաձեան , շատ գեղեցիկ , բարի , ողորմած ,  
աղքատաց խնամող , անձնուեր : Երբ փողոցէն  
կ'անցնէր , ամէն կողմէ կը գոչէին՝ “Չարխ իշի  
բուպիէ” , նմանցնելով Ճախարակէ անցած փայ-  
լուն րուպիէ ոսկիներուն . շատ հարուստներ  
ուզեր էին ամուսնանալ հետը , բայց կաթոլիկ  
ըլլալուն համար մեծ հայրս ու մեծ մայրս  
հաւանութիւն չէին տուած : Հայրս իմանալով որ  
պապական մնալով պիտի չկրնայ ամուսնանալ  
անոր հետ , կ'երթայ լուսաւորչականաց եկեղե-  
ցին , լուսաւորչականութիւն կ'ընդունի և հինգ  
տարի յետոյ կ'ամուսնանայ . կ'ունենան երկու

աղջիկ ու մէկ մանչ . մանչը և մէծ աղջիկը մօրս  
նման հանդարտ տղաք էին , ես՝ հօրս նման  
անհանդարտ և համարձակ . այդ պատճառաւ  
զիս շատ կը սիրէր . ես ալ կը պաշտէի զինքը ,  
և սաստիկ ցաւ զգացի երբ վախճանեցաւ :

Քոյրս և եղբայրս մեռան . ես մնացի մինակ :  
Հայրս շատ կը շահէր , բայց շատ ալ կը  
շռայլէր : Եւ երբ վախճանեցաւ , երեք հազար  
սակի ձգեց ինձ համար . ատոնք արժեթղթեր  
էին , զոր մայրս կտուրին տակ պահած էր իրբ  
ապահով տեղ . այն տունը ուր կը բնակէինք  
մօրս էր :

Եկաւ յանկարծ Բերայի հրդեհը : Անկարող  
եմ նկարագրել այդ սոսկալի աղետը , այդ սար-  
սափելի օրը՝ ինչպէս որ էր : Այսքանը միայն  
պիտի ըսեմ որ ամբողջ Բերա թաղը հրոց ճա-  
րակ եղաւ , հարուստներ աղբատացան , մայրեր  
անդաւակ մնացին , զաւակներ անմայր . չկար  
ընտանիք մը որու անդամներէն մէկը կամ եր-  
իսբովին խղդուած գտնուեցան քարաշէն տու-  
ներու մէջ : Հրդեհը լափեց ոչ միայն անբաւ  
հարստութիւն , այլ և հազարաւոր կեանքեր .  
Բերան կը բռնկէր տասնուշորս կողմէ , կարծես  
կրակը երկնքէն կը թափէր . շատ մարդիկ փո-  
ղցներուն մէջ այրեցան :

Աղետը մեծ էր , ժողովուրդի լաց ու կոծի

ձայնը հասաւ մինչև Սուլթանին ականջը . ու-  
ղարկեց հազարաւոր վրաններ և հաց :

Շատերու հետ մենք ալ էինք այժմ ան-  
տուն , աղքատ , կիսամերկ , բոպիկ , որովհետեւ  
փողոցէն կրակին վրայէն անցած ատեննին՝ իմ  
կօշիկներս և մօրս շրջագգեստը այրեցան :

Մեզ վիճակուած վրանն էր Հայոց գերեղ-  
մանատան մէջ : Ամէն մէկ վրանի տակ կար  
գերեզմանաքար մը . մեր վրանը՝ պատահմամբ  
թէ վերին տնօրինութեամբ՝ կը գտնուէր ձիշդ  
այնտեղ ուր էր սիրելի հօրս գերեզմանաքարը :  
Ես նկատեցի քարին վրայի արձանագրութիւն-  
ները , և կարգացի՝ “Աստ հանգչի Գրիգոր Մի-  
նասեան , Սրբուհի Մինասեան , Մաքսուտ Մի-  
նասեան :” Մայրս որ լսեց , այնպիսի սոսկալի  
ձիչ մը արձակեց , որ մինչև այժմ կարծես կը  
հնչէ ականջիս .

— Գրիգոր , քովիկդ տեղ տուր մեզի .  
մենք ալ կ'ուղենք թաղուիլ . մենք կենդանի  
թաղուած ենք ձեր մօտը . տե՛ս , սիրելի զա-  
ւակդ , աղքա՛տ , մե՛րկ :

Կը պուար , և այնպիսի կոկծալի հառա-  
չանքներ կ'արձակէր , որ մօտակայ վրաններէն  
հաւաքուեցան մարդիկ և մեզ բռնի դուրս հա-  
նցին , ուրիշ վրան մը փոխադրեցին :

Այդ գիշերը հողի վրայ քնացանք , մայրս  
ինձմէ գաղանի՝ ես մօրմէս գաղանի՝ լալով . կը

մտածէի թէ ի՞նչ ընեմ որ քանի մը ոսկի ձեռք  
անցընեմ, մօրս շրջազգեստ, ինձ կօշիկ և ան-  
կողին ձեռք բերեմ: Յանկարծ դույ:

Հասակէս երկայն ճոխ մազեր ունէի: Ու-  
սումնարան յաճախած միջոցիս, վարսավիրայ մը  
շարունակ կ'ըսէր իր քովի մարդոցը. “Ի՞նչ մա-  
զեր. ի՞նչ չէի տար”:

Առաջուն կանուխ գացի դույ այդ մարդը:  
Անոր խանութը Խըսնառուլայի ուսումնարանին  
մօտն ըլլալուն, ոչ այդ խանութը ոչ ալ ու-  
սումնարանը այրած էին:

— Ի՞նչ կուտաս մազերուս:

— Չորս ոսկի, պոռաց անմիջապէս:  
— Շուտ կտրէ:

Տասը բոպէէն արդէն ամէն բան աւարտած  
էր: Անաստուածը վերջին ծայր կարծ էր ձգած  
մազերս:

Չորս ոսկին ձեռքս, իսկոյն մտայ մեր  
վրանը. մայրս որ զիս տեսաւ, իսկոյն բացա-  
գանչեց.

— Հապա մազե՞րդ:

— Չորս ոսկիի ծախեցի. աւելորդ բեռ էին  
մազերս. չիմա այս դրամով մեր նախնական  
պէտքերը կը հոգանք:

Մայրս ալ իր կարգին ինձ ցոյց տուաւ եր-  
կու ոսկի. պատմեց թէ երկու մարդ են եկեր,  
զիս են ինտուեր և մօրս յանձներ են երկու

ոսկի՝ պատուիրելով որ ինձ լաւ մնունդ տայ:  
“Են ապագային հայ բեմին առաջին զարդը  
պիտի ըլլայ, ըսեր էին. ան մեր յօյն է”:  
Յետոյ, գերեզմանատան փոքրիկ մատուռը եր-  
թալով, բեմէն գորդ մը վերցուցեր էին, ըսե-  
լով “Թող վարդապետը առանց խալիչայի քա-  
րոզէ”, և տուեր էին մօրս. — “Ճիմակուհիմա  
գետինը փոէ՛ այս գորզը”: Ետքէն իմացայ որ  
այդ մարդոց մէկն էր Մամուլի խմբագիր Գէորգ  
Այվազեանը, իսկ միւսը՝ կարծեամ Մանզումենի  
խմբագիր Կարապետ Փանոսեանը:

Բոլոր տէրութիւնները, նուիրատուութիւն-  
ներ ընելով նպաստներ էին ուղարկած հրկիգ-  
եալներուն: Ճիմա կը բաժնէին վերմակ, անկո-  
ղին, ձերմակեղէն, բրինձ, իւղ, վերջապէս ամէն  
բան որու անմիջական պէտք կար, բաժանման  
գործը յանձներ էին “Գթութեան Քոյրերուն”,  
որոնք գժբաղդաբար միայն իրենց ցանկացած  
մարդոց կուտային: Նպաստներու բաշխումը  
պէտք էր որ կատարուէր առանց կրօնի խտրու-  
թեան. բայց յանուն գթութեան, Գթութեան  
Քոյրերը անգթութիւն կ'ընէին, մեզ լուսաւոր-  
չականներս զրկելով: Յանկարծ գաղափար մը  
ունեցայ, երթալ իմաց տալ այս գարշելի արար-  
մունքը Մեծ-Եպալքոսին, որու համար մեծ  
վրան մը սարբած էին թաքսիմի պարտէզին մէջ:

Այսո՛, բայց ի՞նչպէս կարողանայի ներս

Հասնիլ : Դունէն քիչ մը հեռու , պահապան զինուորներ կանգնած էին , իսկ անմիջապէս դրան առջեր կային երկու համր և խուլ պահապաններ : Կերպով մը անցայ զինուորներուն մօտէն , և երբ հասայ դրան մօտ , սկսայ այդ համրերուն հետ նշաններով կատակել : Հազիւ տասը տարեկանի երեսով ունէի : Անոնք չկարծեցին թէ ես կարող եմ համարձակուիլ այդպիսի քայլ մընել , երբ յանկարծ վրանէն ներս սողալով ինկայ փաշային ոտքերը : Ներսը շատ մարդիկ նստած կային . բայց ես անգիտակցաբար ուղղակի նպատակիս հասեր էի : Համրերը վագեցին ետեւէս , բայց փաշան արգիլեց անոնց զպէլ :

— Ի՞նչ է , բարակեօղ բոզրմ (սեւաչուի աղջիկ) :

— Տէր , չնորհ ըրէք , ո՛չ հայր ունիմ ո՛չ աղդական . հրդեհը մոխրի վրայ նստեցուց մայրս ու զիս : Նպաստներէն մեղի ոչինչ կը հասնի , քանի որ լուսաւորչական ենք : Աղորմեցէք :

— Ի՞նչ կ'ըսես , փոքրիկ , ըսածներդ ձըշ մարտութիւն են :

— Տէր իմ , կարող էք ստուգել : Զիս այնտեղ պահեցին , և մարդիկ ուղարձիւ որ քննեն թէ արդեօք ձիշդ է ըսածս , քառորդ ժամ մը յետոյ՝ իրողութիւնը

հաստատուած էր . փաշան կանչեց իրեղէններու վերակացուն և հրամայեց տալ ինձ ինչ որ հարկաւոր էր : Մեծ պարկի մը մէջ լեցուցին վերմակներ , ձերմակեղէնի վերաբերեալ կտորներ , բրինձ , ևն , և բեռը տալով զինուորի մը՝ փաշան հրամայեց անոր որ ինձ ընկերանայ : Ընորհակալութիւն յայտնեցի և մեկնեցայ :

Կէս ձամբան հանդիպեցայ խղճալի տեսաբանի մը : Արանի մը մէջ կար վեց հոգւով ընտանիք մը , այր ու կին իրենց չորս երախաներով . ամուսնոյն մէկ ոտքը այրած էր . թշուառութեան աղեխարը պատկեր մըն էր ատ խեղճերը կեղտոտութեան մէջ թաթիսուած էին՝ գարշահոտութեան մէջ ապրելով . երախաները կը ձչային , ու մայրը կուլար :

Ճէի ձանչնար այդ ընտանիքը , բայց կնոջ լացը տեսնելով մօտեցայ իսկոյն և ամէն ինչ հասկցայ : Առի պարկս զինուորին ձէռքէն և այդ խեղճերուն հետ կիսեցի ամէն ինչ որ փաշան ինձ տուած էր : Իսկ իմ բաժինս հասցուցինք մօրս մօտ , որ շատ ուրախացաւ :

Կարծեմ չէր եղեր քառորդ ժամ մը որ ես դարձած էի տեղս , յանկարծ զինուորը կրկին երեցաւ . — « Ծո՛ւտ , փոքրիկ , փաշան քեզ կ'ուզէ , շո՛ւտ ըրէ , շո՛ւտ » :

Մայրս որ լսեց թէ փաշան զիս կը կանչէ , այլայլուեցաւ : Ես հանգստացուցի զինքը և զի-

նուորին հետ նորէն գացի վրանը։ Փաշան զիս  
որ տեսաւ, յանդիմանեց . — “Ես քեզ տուի  
որ դուն ուրիշներո՞ւն բաշխես” :

— Տէ՛ր, ան ինձմէ աւելի պէտք ունէր .  
բոլորը չտուի . ինծի շատ էր, կիսեցի :

Փաշան զիս քովը նստեցուց, և հրամայեց  
որ ինձ տան առաջուան տուածնուն կրկնապա-  
տիկը . յետոյ՝ “Զաւա՛կս, ըսաւ, ա՛ռ մայրդ,  
եկուր իմ ապարանքս բնակէ . մեր տունը եւրո-  
պացի օրիորդներ կան ուսուցչուհւոյ պաշտօնով .  
ես կուտամ ձեզ երկու սենեակով բաժանմունք  
մը, և ձեր բոլոր պէտքերը իմ տանս մէջ կը<sup>Հոգացուին” :</sup>

Ապա հրամայեց որ թոյլ տան ինձ ազատ  
մուտք ունենալ իր վրանին մէջ :

Մօրս պատմեցի թէ փաշան մեզ երկուքս  
իր տան մէջ կ'ընդունէր :

— Ո՛չ, ըսաւ մայրս՝ սաստիկ յուղուած,  
և չեմ երթար, քեզ ալ չեմ ձգեր . անոնք  
քեզ կը թըքացնեն :

Այդ ըսպէին մեզ մօտ եկաւ Պ. Մաղա-  
քանը : Առաջարկեց ինձ Վարդովեանի կողմէն  
16 սոկի տասնեհինդ օրուան համար :

— Թագաւորը թէլիատութեան հանդէս կա-  
տարել կուտայ, և այդ առթիւ պիտի տեղի  
ունենան ժողովրդական ներկայացումներ : Ամ-  
բողջ խումբը վարձուած է: Ես կ'ուզեմ որ դուն

ալ մասնակցիս, պիտի ներկայացնենք վօտվիլներ:

Ես ուրախութեամբ ընդունեցայ անոր առա-  
ջարկութիւնը, որ իմ վրկութիւնս էր: Խեղճ  
մայրս, այլ ևս հարկագրուած՝ յօժարեցաւ զիս  
յանձնել Մաղաքեանին :

Գացինք անմիջապէս անշուք թաղ մը (ար-  
դէն առաջնակարգ ալ չէր մնացեր), վարձեցինք  
կտուրի մը տակ՝ մէկ սոկի ամնականով, փոխա-  
դրեցինք մայրս այնտեղ, իսկ ևս փոխադրուեցայ  
այն վրանը ուր կը բնակէր ամբողջ խումբը :

Երբ Սուլթանը իր որդիներէն մէկը թէլիա-  
տելու ըլլայ, մեծ հանդէսներ ու ժողովրդական  
խնջյքներ սարքել կուտայ, որոնք կը տեսն  
15-20 օր: Թաշ-Քըշլա և Կիւմիւշ-Սույու զօ-  
րանոցները հիւանդանոցի էին վերածուած, հա-  
զարաւոր հիւանդաներ (նոր թէլիատուածներ)  
պառկած էին . երկու տարեկանէ սկսած մինչեւ  
յիսուն տարեկան մարդիկ կային հիւանդաներուն  
մէջ: Թագաւորը ամէն գիւղ ու քաղաք կը<sup>յայտարարէր</sup> թէ ով որ կը ցանկայ կատարելա-  
պէս ըլլալ միւսիւլման և աղքատութեան պատ-  
ճառով չէ թէլիատուած, կարող է գալ: Թէլիատ-  
ողներուն համար պատրաստ է անկողին, ձեռք  
մը զգեստ, տասը մէծիտ փող և ճանապարհա-  
ծախս: Եւ ահա ամէն կողմէ Պոլիս կուգան,  
յանուն միւսիւլմանութեան արիւն թափելու և  
դրամներն ստանալու: Թուրք և թըքահայ թա-

տերական խումբերը , ըմբշամարտներ , լարա-  
խաղացներ , թուրք ու եւրոպացի երգիչներ ,  
բոլորն ալ վարձուած էին տէրութեան կողմէ :  
Տօլմապահէի հրապարակին մէջտեղը շինուած  
էր մեծ բեմ մը : Մէկ խումբը միւսին ետևէն  
ներկայացումներ կուտար անդադար : Մենք ընդ-  
հանրապէս փոտփիլներ կը խաղայինք . մեր ձայնը  
կը կորչէր նուագածութեանց և ժողովրդի գո-  
ռում գոչումին մէջ . ժողովուրդը մեր շարժում-  
ները տեսնելով միայն կը զուարձանար :

Վերջացան հանդէսները , և Մաղաքեան  
կրկին ինձ առաջարկեց մոնել Վարդովեանի  
խմբին մէջ , ուր ինքն ալ ոէժիսօրութեան պաշ-  
տօն էր ստանձնած . ինձ առաջարկեցին ամսա-  
կան ութը ոսկի : Պայմանաւորուեցանք Վար-  
դովեանի հետ , և փոխադրուեցանք իւսկիւտար-  
ներկայացումները տեղի պիտի ունենային Ազ-  
դիէ թատրոնին մէջ :

Քանի մը խօսք Մաղաքեանի մասին :

Գետրոս Մաղաքեան կօշկակար է եղած , երբ  
Արևելեան թատրոնը բացուած է : Իբրև սիրող՝  
ամէն օր ներկայ կը լլայ եղեր փորձերուն :  
Արևելեան թատրոնի գերացուցութեան համար  
մասնաւորապէս հրաւիրուած է եղեր եւրոպացի  
մը , կարծեմ Կոչի անուամբ : Մաղաքեան ամե-  
նայն ուշադրութեամբ կը հետեւի անոր , և սի-  
րողը կը դառնայ գերասան : Արևելեան թատ-

րոնը փակուելէ յետոյ , կօշկակարութիւնը շա-  
րունակելով հանդերձ , իր առաջնորդութեամբ  
կուտար ներկայացումներ : Մասնաւորապէս՝ “Աի-  
կոլէթթօնի մէջ իսեղկատակի գերը կը կատարէր  
վերջին ծայր յաջող ու բնական : Դեռ կը յի-  
շեմ՝ Պլանշի գերը կատարած ատենս , ես կը  
սիրահարուէի այդ չեչոտ երեսով տգեղ , կուզիկ  
մարդուն , այնքան ոգեւորութեամբ կարտասա-  
նէր՝ “Պլանշ , որգեա՛կ իմ , չեմ կարող ըսել թէ  
ո՞քան և ի՞նչպէս կը սիրեմ քեզ : Մանաւանդ  
վերջին տեսարանին , երբ կիմանայ թէ վիրա-  
ւորուածը իր ազջիկն է , ի՞նչպիսի բուռն սիրով  
և քնքշութեամբ կարտասանէր այս բառերը .  
“Պլանշ , հոգեա՛կ , ո՞րտեղդ է ցաւդ ։ Ես կը  
մոռնայի թէ Պլանշը չեմ և թէ ան թրիպուլէն  
չէ . աչքերէս արցունքը հեղեղի նման կը հոսէր :  
Կոյնպէս “Թափառական Հրեայի մէջ՝ Տակո-  
պէսի , Տօն Արիկորիօի , “Աստղագէտի” մէջ  
Աստղագէտի և Մոլիէրի Սրափէնի գերերը , զոր  
կատարէր , իբեն համար մեծ յաղթանակներ  
կը կատարէր , իբեն համար մեծ յաղթանակներ  
էին : Այս գերերուն մէջ՝ մինչեւ այսօր զինքը  
փոխարինող չէ եղած : Իբր ոէժիսօր այնքան  
յաջող էր որքան վերոյիշեալ գերերուն մէջ իբր  
դերասան : Ան եղաւ իմ մենաորս , կեանքիս  
առաջնորդը : Ան էր որ կը ծանօթացնէր ինձ  
չարին ու բարին : Անոր մահէն յետոյ միայն  
կարողացայ ընտանեացը փաքրիկ ծառայութիւն

մը մատուցանել՝ բարեկամներէս ինդրելով ընդունել տալ իր որդին թուրքիոյ ծխախոտի րէժիի ընկերութեան մէջ, և ընդունուեցաւ, ու կարծեմ թէ մինչև ցարդ կը հայթայթէ իր մօր ու քրոջ օրապահիկը :

Բ.

Ամառուան եղանակի առաջին փորձը տեղի պիտի ունենար Խւսկիւտար, նոյն Ազիզիէ թատրոնին մէջ: Կանակուած էր փորձ՝ ժամը 3ին (ըստ եւր. 9ին): Բայց արդէն ամբողջ խումբը 2 ½ ին հաւաքուեր էր: Խմբապեան էր Վարդովեան, րեժիսոր՝ Մաղաքեան, ընկերներս էին Երանուհի Գարագաշ, Վիրգինիա Գարագաշ, Թէրէզա Չուհաճեան, Գարեգին Ռշտունի, Մանուկ Սիսակ, Ակրովը Պէտնկլեան, Նալեան, Թօսպատեան, Սանձաքձեան, Զափրաստձեան, Գէորգ Պէրպէրեան, Տէօիւձեան, Տիրան Գալատութեան հանդէսներու ժամանակ: Չախ կողմի քուլիսներու քով նստած էին տղամարդիկ և աջ կողմը՝ կանայք, այսինքն Գարագաշ քոյրերը և Թէրէզա Չուհաճեան, որոնցմէ տասը քայլ հեռու էր փողոցի դուռը: Ես ալ գրեթէ տասը քայլ հեռու նստած էի օրիորդներէն, դրան հակառակ կողմը:

Այդ միջոցին ներս մտաւ պատանի մը, երկար հասակով ու երկար զզով. ունէր երկայն քիթ. գունատ էր: Մոխրագոյն ու շատ մաշած զգեստ էր հագած: Թեհին տակ կար տետրակ մը: Երբ երեցաւ, գերասանուհիները սկսան ծիծաղիլ, ըսելով. “Քա՛ Թէրէզա, քուկինդ եկաւ” : Իսկ Թէրէզան պատասխանեց. “Այնքան գունատ է, որ ինձի պէտք չէ. շուտով կը մեռնի” : Ես լսեցի այդ խօսքերը, բայց չէի կարծեր թէ պատանին ալ լսած էր:

Այդ ցնցոտիներ հագած ու գերեզմանին մօտեցած պատանին Գուրեանն էր, մեր քողորիս սիրելի բանաստեղծը: Իսկ իր թեհի տակի տետրակն էր “Թատրոն”, խաղը, զոր կ'ուզէր կարդալ Վարդովեանին և ընդունել տալ խաղացուցակին մէջ:

Երբ իր մահէն յետոյ կարդացի անօր բանաստեղծութիւնները, այն ատեն իմացայ թէ ան ալ լսած էր Թէրէզա Չուհաճեանի խօսքերը, քանի որ գրեր էր.

“Ծատերը զիս մերժեցին,

“Քընար մ'ունի սոսկ” ըսին.

Մին՝ “գողգոջ է, գոյն չունի” .

Միւսն ալ ըսաւ՝ “Կը մեռնի . . .”

Փորձը սկսաւ: Խաղն էր “Ալպեանց Հովուուհի”, որու մէջ պիտի կատարէի անմեղ ու միամիտ հովուուհի գերը: Մինչև երրորդ

արարուածը շատ լաւ տարի դերս : Զորբորդ  
արարուածէն պիտի սկսէր տուամը , ուր լալով  
պիտի պատմէի օրիորդի մը իմ գրութիւնս ,  
բայց ես չկարողացայ լաւ պատկերացնել լացը :  
Քանի մը անգամ՝ Մաղաքեան ցոյց տուաւ ,  
կրկնեց , բայց ես դարձեալ չյաջողեցայ : Այն  
ատեն այնպիսի ուժով թևս կսմթաեց , որ սսս-  
տիկ ցաւեն սկսայ լալ . — “Ահա այդպէս պէտք  
է պատմես :” Թէև այդ միջոցին սստիկ վշտա-  
ցայ , բայց յետոյ մտածելով որ ես երբեք չպիտի  
կարողանայի կատարել այդքան բնական , դացի  
ու համբուրեցի անոր ձեռքը :

Այդ դերը իմ առաջին հրապարակային  
“տեպիւս” էր . Խւկիւտարի ժողովուրդը շատ  
համակրեցաւ ինձի : Ազդարարութիւններուն  
վրայ իմ անուանս տեղ իբր կեղծանուն տպած  
էին կարծեմ՝ Օր Մաղաքեան . բայց նոյն իսկ այդ  
առաջին ներկայացման հետեւեալ օրը՝ արդէն  
Մաղաքեանը սրբուած էր ազդարարութեանց  
վրայ և տեղը գրուած՝ Հրաշեայ : Ժողովուրդին  
մէկ մասն ալ զիս անուաներ էր Վարդանուշ ,  
բայց վերջ ի վերջոյ “Հրաշեայ” անունն էր որ  
յաղթանակեց :

Ամիսը ուժը ներկայացում կուտայինք ,  
չորսը թուրքերէն լեզուով , և չորսը հայերէն :  
Խակ բամազանին , երեսուն գիշեր շարունակ կը

ըստ պայմանագրութեան , երկու ամսէն  
տեղի պիտի ունենար իմ նպաստիս ներկայա-  
ցութիւնը : Թատրոնի ծախքը հանելէ յետոյ , մնա-  
ցածին կէսը իմն պիտի ըլլար :

Կարծեն ներկայացուելիք խաղը ողբերգու-  
թիւն մըն էր : Հասարակութեան մէջ ոգեսորու-  
թիւնը այն սստիճանի էր հասեր , որ ազդա-  
րարութեանց երկրորդ օրը՝ տոմսակներն արդէն  
սպառած էին : Այդ առթիւ կը յիշեմ թէ  
“Մամուլի մէջ այսպիսի բան մը գրուած կար .

“Ու յուսանք որ Խւկիւտարի հասարակու-  
թիւնը կը գիտնայ գնահատել իր փաքրիկ սիրելի  
գերասանուհին , որուն քանի մը զայդ կօշիկ մա-  
շել տուին այս ամառ ամէն ներկայացման տասն  
անգամ ի տես կոչելով :

Ներկայացման երբորդ արարուածի միջնա-  
րարին , քովի սենեակէն ձայներ լսեցի : Գացի  
այնտեղ , տեսայ որ Երանուհի Գարագաշ ուշա-  
գնաց է եղեր , և երբ ուզեցի օգնել , օրիորդը՝  
ուշքի գալով՝ խիեց ձեռքիս և “Կորի՛ր” պոռաց :  
Ես ոչինչ հասկցայ : Գիմեցի գէպ ի տեսարան ,  
ուզեցի տեսնել Պ. Մաղաքեանը և հասկնալ եղե-  
լութիւնը , բայց արդէն Պ. Վարդովեան բանալ  
տուեր էր վարագոյրը և կըսէր ժողովրդին .

— “Մեծարգոյ հանդիսականք , գուրսը Օր-  
Հրաշեայի համար գրամ՝ կը ժողվին կոր գիտցէք  
որ ես չեմ ընդունիր . այդ մուրացկանութիւն է :

Այդ միջոցին հանդիսականներուն մէջէն  
պարոն մը , ձեռքէն նետելով սիրունիկ կողով  
մը որուն մէջ կային արծաթ և սովի գրամմեր ,  
գոռաց սրահին մէջտեղէն .

— “Վարդովեա՞ն , մուրացկանութիւն չէ ,  
երբ Օր Գարագաշի ձեռքէն բունած՝ Թուրքերէ  
նուիրատուութիւններ կը ժողվես : Գողութիւն  
չէ , երբ Օր Հրաշեայի նպաստին կէսէն աւելին  
կ'առնես : Ամօթ չէ որ երկու տնօրէն ունենա-  
լով հանդերձ մինչև այսօր Օր Հրաշեան առանց  
վերաբերուի է մնացեր : Եւ երբ մենք կամաւոր  
նուէրներով կուզենք օգնել իրեն , դուն մու-  
րացկանութիւն կ'անուանեա՞ն :

Այդ իսկ լուսէին , Օր Ե՛ Գարագաշ , վա-  
րագցրին քովէն այդ պարոնին նայելով՝ բացա-  
դանչեց . — Այ զլիսո՞ւդ . . . :

Երկրորդ օրը՝ այդ գէպքը լրագիրներուն  
մէջ գրուեցաւ : Իսկ Օր Ե՛ Գարագաշը անուա-  
նեցին “Այ զլիսուդ գերասանուշին” :

Հետաքրքրուեցայ թէ ո՞վ էր այդ պարոնը  
որ զիս այդպէս կը պաշտպանէր : Ինձ ըսին թէ  
անոր անունն է Գուանեան Աւետիս :

Գ.

Քանի մը ամիս յետոյ սկսաւ ձմեռնային  
շրջանը Պոլսոյ Կէտիկ-Փաշայի թատրոնին մէջ :  
Ատիպեցի Վարդովեանը որ աւելցնէ ամսականս ,



ՀՐԱԶԵԱՅ ՀՈՎԻՌՈՒՅԻ

( « Հովիլ-Հովլումի » երգին մէջ ) .

և մէկ ոսկի յաւելում ստացայ: Այդ շրջանին  
էր որ մեր տան մէջ պատրաստեցի Աստղիկը,  
և ընդունուեցաւ խումբին մէջ հինգ ոսկի ամ-  
սականով (մինչդեռ սկզնակներուն կը վճարէին  
երկու ոսկի): Աստղիկը իմ՝ մօրաքրոջ թռոն էր:

Մենք ընդհանրապէս կը ներկայացնէինք  
խառնիխուռն՝ տուամիներ, կատակերգութիւններ  
և փոտվիլներ. նամանաւանդ մեծ գերեր կատա-  
րելէ յետոյ՝ կ'երգէինք “շանսօնէթ” մը: Իմ  
երգերս էին “Քթէն զժզոհ աղջիկը”, “Հովիւ-  
Հովւուչին”, “Ոիրելն ինչ բան է՝ բնաւ չգիտեմ”,  
և ասոր նման երգեր: Ժողովուրդը թատրոնէն  
չէր ուզեր մեկնիլ եթէ գարեգին Ոշտունին կամ  
Հրաշեան բան մը չերգէին:

Գարեգին Ոշտունին միջահասակ, նիշոր,  
թխագոյն, կուրծքի տկարութեամբ տառապող  
երիտասարդ մըն էր: Այս պարոնը ձշմարիտ  
տաղանդ էր. ափսո՞ս որ չէինք հասկնար ինչ որ  
կ'ընէր անիկա: Գիտէինք միայն թէ լու գերա-  
սան է: Այս գիշեր Տօպանմօն դատաւորի գերը  
կը կատարէ, ժողովուրդը զայն կը լոէ իբր  
Տօպանմօն: Վաղը գիշեր Փունչինէլլայի գերին  
մէջ՝ Փունչինէլլա էր: Ան տեսարան գար թէ չէ,  
ժողովուրդը կը սկսէր ինդալէն մարիլ: Իր զէմ-  
քին վրայ չէր տեսնուեր ո և է ծամածութիւն:  
Աերջին ծայր բնական էր իր բոլոր գերերուն  
մէջ: Ինչ մեծ տաղանդ պէտք էր բոլոր այդ

մարդը՝ որ անբնական գերասաններու մէջ բնականութիւնն էր ընդգրկեր :

Մաղաքեան առանց բացառութեան բոլորին ուսուցիչն էր: Ամէն օր տեսրակին մէջ կը գրէր ներկայ գերասաններուն անունները: Եթէ ուշանային կամ բացակայ գանուեին, բայ ներքին կանոնագրութեանը՝ կ'ենթարկուեին տուգանքի:

Կանոնագրութիւնը խիստ էր, և պէտք էր ամենքս ալ հնազանդէինք :

Նոյնպէս թուրքերէն արտասանութեան դասեր կ'առնեինք: Մէր ուսուցիչներն էին յայտնի գրագէտ քէմալ պէյ և Ալի պէյ :

Այս կերպով կը շարունակէինք դործը, ամառ՝ իւսկիւտար և ձմեռը Կէտիկ-Փաշա:

Երկրորդ ձմեռնային եղանակին՝ ֆասուլեածեան նախօջեւանէն գալով իր հետ բերաւ մեզ Ագամեանը: Ի՞նչ գրել Ագամեանի մասին, քանի օր ամենուն յայտնի է թէ ան ի՞նչպիսի գերասան էր. ո՛չ, ան “գերասան” չէր, տաղանդ էր, հանձար էր. բաւական էր զայն անխօս առանել բեմի վրայ և գուք արդէն կը զգալիք թէ ի՞նչ խոշոր ուժ մը կանգնած է ձեր գէմը: Ան իր կարճ հասակով բեմի հսկան էր: Ես կ'ըսեմ որ անոր նմանները շատ քիչ են նշյն իսկ եւրոպական բեմերու վրայ: Խեղձ Ագամեան. քանի՛ անգամ անոր ոսկորները գերեղանին մէջ անհանդիս ըրած են՝ նորելուկ

գերասան մը մէջտեղ ելածին պէս “Աղամեանը վերակենդանացաւ,” գոչելով չէ՛, պարոններ, այդքան ալ դիւրին չէ Աղամեաններ ունենալ. գարեր գժուար կ'արտադրեն, մայրեր գժուար կը ծնին այդպիսի արուեստագէտ մը:

Աղամեան փորձեց թուրքերէն լեզուով խաղալ, բայց չյաջողեցաւ արտասանութիւնը շատ գէշ էր, այդ պատճառով հրաժարուեցաւ խումբէն, մանաւանդ օր երկրորդական տեղ բռնելու համար ծնած չէր:

Մինչեւ երկրորդ “սէզօն”ը, ես կը կատարէի “Սուպրէթ”, “Արիգէթ” և էնժէնիւ“ի գերերը, խակառաջին գերերը կը կատարէր Օր. Ե. Գարագաշ:

Այդ թատրոնական եղանակին՝ յանձնախումբ մը կազմուեցաւ թուրք աւագանիէն, Ալի պէյ, Նաղըմ պէյ, Զիա պէյ ևն. ասոնք հարուստ մարդիկ էին, Եւրոպա կրթուած, շատ հասկցող: Թարգմաննեցին “Քալթերին Հօվարտ” խաղը, և ստիպեցին Վարդովեանը որ ինձ խաղալ տայ Քաթերինի գերը մէկ անգամ, խակ երկրորդ ներկայացման՝ Օր. Ե. Գարագաշին:

Երբ Մաղաքեան ինձ յանձնեց գերը, ես մերժեցի ու սկսայ լուլ.

— Ես առաջին գեր չեմ կրնար կատարել, գեռ պատրաստուած չեմ:

Մաղաքեան համոզեց զիս օր ես կարող եմ, և պէտք է փորձեմ վերջապէս:

Իմ սենեակս Մաղաքեանի սենեակին մէկ բաժանմունքն էր, և մուտքս՝ անոր սենեակէն։ Գիտմամի այդպէս էր ըրած, որպէս զի միշտ կարողանայ հեռու պահել զիս վասակար տարրերէ։ Եղան գերասաններ որ այլ կերպ մեկնեցին այդ հսկողութիւնը, բայց միայն չարամիտները իրաւունք չեն տար քառասուն տարեկան մարդու մը տասնըշորս տարեկան աղջիկ մը իրրե իր հարազատ զաւակը հովանաւորելու։

Ներկայացման երեկոյին՝ հագուելու միջոցին՝ կուլայի. Մաղաքեան զիս կը խրախուսէր.

— Կը յաջողիս, բնաւ մի՛ տարակուսիր։ Դուն տարիներով չէ որ յառաջ կ'երթաս, այլ օրերով։ Հաւատա՛ ըսածիս. մինչեւ այսօր ես միթէ քու գէշութիւնդ ուզա՞ծ եմ. ես շատ աշակերտներ ունիմ, բայց անոնցմէ ոչ մէկը չեմ սիրեր ինչպէս քեզ կը սիրեմ, որովհետեւ դուն խօսքս մտիկ կ'ընես ամէն կերպով։ Եւ ես կը պաշտեմ քեզ իրրե հարազատ զաւակս։

Այս խօսքերը ինձ ուժ տուին, և իմ մենաբիս օրշնութիւնը առնելով՝ բեմ ելայ։

Աէտիկ-Փաշայի փայտաշէն թատրոնը շատ մէծ էր, իսկ բաղմութիւնը թատրոնէն աւելի մէծ։ Առաջին անգամ ըլլալով պիտի քննէին զիս հանդիսականները մէծ դերի մը մէջ, և մթէ արժանի էի՝ “առաջնութեան” տիփլոմ պիտի տային։ Անոնք էին մեր փրօֆէսորները։

Յաջողութիւնը շատ մէծ եղաւ, և եթէ կարելի է այսպէս ըսել՝ փոխանակ տիփլոմի ոսկի մէտայլ ստացայ։

Բայց ես ինձմէ միշտ գժգոհ էի։ Գիտէի թէ ի՞նչ է որ կը վրիպի անոնց աչքէն։ մենախօսութիւնն էր տկար կողմն։ Սաստիկ կը նեղուէի այդ միջոցին։ չէի ցանկար մինակ մնալ բեմի վրայ. կարծէք երկու ուսերուս վրայ աներեւոյթ ձեռք մը կը ծանրանար։ Իսկ երբ մենախօսութիւնը կը վերջանար, արդէն գերիս մէջ էի։

Այդտեղ սկսաւ նախանձը։

Առաջին գերասանուհին, որ Վարդովեանին շատ մօտիկ էր, չհամաձայնեցաւ փորձուիլ Քաթերինի դերին մէջ։

Հայ հասարակութիւնն ալ ցանկութիւն յայտնեց զիս տեսնել առաջնակարգ գերերու մէջ։ Բայց մենք մասնաւորաբար հայ ժողովրդի համար կը ներկայացնէինք կամ ողբերգութիւն և կամ հայ հեղինակներու գրուածքներ։

Որո՞նոս Աէտէփճեանի գրած “Հինձքի եղեռնագործութիւն” խաղին մէջ պիտի կատարէի տիպար օրիորդի դերը։ Ներկայացման իրիկոնը, խմբագիրներ, գրագէտներ և քննադատներ, որոնց մէջ էր և Մինսո Զերազ, գրաւեր էին իրենց օթեակը։ Այս անգամ պիտի քննէին թէ՛ գերասանուհին և թէ՛ հեղինակը։

Մինչև չորրորդ արարուածը մէծ էր յաջո-

զութիւնս : Արարուածի վերջը , ունէի մեծ մենախօսութիւն մը : Խօսքերը պիտի ուղղէի շուրջս կանգնած պարսներուն . կերպով մը՝ խաղին բարյական դասը պիտի ըլլար ատիկա : Երբ ուղղեցի խօսքս զէնլեանին , “Դո՛ւ տէր Հա՛յր” , քրիչաց ու հեռացաւ : Գարձուցի երեսս Կալեանի կողմը , “Դո՛ւ Միհրա՞ն” . Միհրանն ալ խնդարով փախաւ բեմէն : Գարձայ Թոսպադեանին . “Դո՛ւ Վահրա՞մ” . ան ալ ինդալէն մարելով հեռացաւ : Իսկ այդ միջոցին , Ոսմանոս Սէտէֆեան , որ իր խաղին յուշարարն էր . կիսով չափ ծակէն դուրս ելած սկսաւ պուտալ , — Ծունշանորդինե՞ր , խաղիս խերը անիծեցիք :

Ես որ տեսայ ծակէն դուրս ելած Ոսմանոսը , “Էյ ա՞ս ալ փըռո՞ւ” ըսելով , բեմին մէջտեղը կանգնած՝ անզսպելի ջրային ծիծաղով մը սկսայ ծիծաղիլ ու լալ միանգամայն :

Այս տեսարանը կարծեմ տեսեց տասը վայրկեան : Վարագոյր իջեցնելու նշանը ոչ մէկը կուտար : Իսկ ես անկարող էի տեղէս հեռանալու : Վերջապէս հասաւ Մաղաքեան , փակեց վարագոյրը : Բայց իմ ջրային տագնապս դեռ կը շարունակուէր :

Հանդիսականներէն շատեր ներս խուժեցին ու սկսան զիս միիթարել :

— Դուք յանցաւոր չէք կ'ըսէին , յանցանքը դերասաններուն է ու հեղինակինը :

Երկրորդ օրը , լրագրութիւնն ալ ներողամիտ էր ինձ նկատմամբ : Բայց Պէնլեանին և Հեղինակին քաղաքավար դաս մը տուին :

Աչա այս կերպով չկրցայ հայ ժողովուրդէն տիվլոմ ստանալ այդ գիշեր :

Թուլը քոմիթէի աղղեցութիւնն ու զուարձութիւնները հետզէտէ կ'աւելնային տեսարանի վրայ : Այդ պարսները ամէն փորձի ներկայ կը գտնուէին : Ու փորձերը այլ ևս կանոնաւոր չէին ինչպէս առաջ :

Օր մը , փորձի ժամանակ , ես նստած էի քուլիսին մէջ և ուշադրութեամբ կը հետեւէի փորձին : Աալի պէյ ձեռքը բռնած ունէր փիեսին երկրորդ օրինակը : Թէև պէյին ուշադրութիւնը ըստ երևացմին փիեսին վրայ էր , բայց ես զգացի որ անոր ուշադրութիւնը իսկապէս իմ վրաս էր , և մէ բան մը կը պատրաստէր մաքին մէջ : Յանկարծ , իրը թէ անուշադրութեամբ , մօտեցաւ ու գիրկս պիտի նստէր : Ես անմիջապէս երկու ձեռքով կոնակէն հրեցի , և տախտակամածին վրայ ինկաւ :

Ցետոյ ոտքի ելլելով , բարկութեամբ պուաց :

— Այո՛ , ի՞նչպէս չէ . կոյսին դպանք , անմեղութիւնը վեստուեցաւ :

Մաղաքեան , իսկոյն նետուելով պէյին վրայ , սոսկալի ապտակ մը տուաւ անոր :

Գործը մեծցաւ : Աստիկանութիւնը՝ միջամտեց, նոյնպէս և լրագրութիւնը : Մաղաքեան կերպով մը աղատեցաւ անոնց ձեռքէն, և մենք տուինք մեր հրաժարականը թուրքօ-հայ թատրոնին :

Դ.

Յաջորդ ամառնային "սէզօն"ին էր որ Գոռուշեածեան Պ. Գոռանեանի միջոցաւ վարձեր էր Խոկիւտարի Ազիզիէ թատրոնը, և ինքը կը բնակէր Ենի-Մահմէտ կոչուած թաղը :

Մաղաքեանի հաւանութեամբ, գացի մասնակցելու ֆասուլեածեանի խմբին, ուր և ծանօթացայ Պ. Գոռանեանին :

Հաղիւ մէկ քանի ներկայացումներ էինք տուած, Ենի-Մահմէտ ամբողջովին հրոյ Ճարակ եղաւ : Գասուլեածեանի գոյքերը, զգեստներն ու գրքերը այրեցան, և ինքը հարկադրուեցաւ թողուլ խմբապետութիւնը և մոնել Վարդովեանի թատրոնը երբ դերասան :

Ես մնացի անգործ : Խոկիւտարի Ա. Խաչ Վարժարանին հոգաբարձութիւնը Պ. Գոռանեանի միջոցաւ առաջարկեց ինձ ամսական եօթը ոսկի նպաստ, գովելով իմ պատոյ նախանձանդրութիւնս՝ որով հեռացայ թուրքօ-հայ թատրոնէն :

Մերժեցի քաղաքավարութեամբ .

— Մենք երկու հոգի ենք . Ես կարող եմ մայրս պահէլ : Մեծ ծախք չունինք : Կ'աշխատիմ, և կար ու ձեռագործ ընելով՝ կ'ապրինք : Միմիպէն, կը ինդրեմ, թող հոգաբարձութիւնը ըլլայ այնքան բարի որ թոյլ տայ ինձ ուսումնարանէն փոխ առնել հարկաւոր եղած գործիքները :

Ուսումնարանին մէջ կային կարի և ձեռագործի ամէն տեսակ գործիքներ : Խոստացան ինձ ընծայէլ ամէն դիւրութիւն :

Ուրբաթ օր մը, մայրս հետ առնելով գացի Քիւչիւկ-Զամլըճա, ուր Թուրքուհիներ յածախ կը հաւաքուին զուարձանալու :

— Հանրմեր, ըսի, շատ գեղեցիկ զգեստներ կը կարենք, և ամէն տեսակ ձեռագործ : Զեղ ծառայելու պատրաստ ենք : Հասցէնիս այս ինչ փողոց այս ի՞նչ թիւ :

Հետեւեալ օրը՝ արգէն բաւական յածախորդ ունէինք : Կարերը շատ աժան կ'ընդունէինք : Օրինակի համար՝ հասարակ կերպասէ շրջագգեստ մը մէկ րուպլիի կը կարէի . երեակայեցէք սակայն, կոնակը ծուռ, քղանցքը կարճ : Երբ ինձ դիւրութիւն կ'ընէին,

— Այ հանրմ, կը պատասխանէի, ձեր կազմը ծուռ է . Ես ի՞նչ յանցանք ունիմ :

Այս գործը երկու ամիս շարունակեցի: Այդ միջոցին Պ. Գոռան ամէն կիրակի ճաշէն յետոյ մեղ մօտ կուգար ինձ լուրեր բերելու Պ. Մա-

Դաքեանէն որ միշտ բերա կը բնակէր, կամ  
հարցնելու թէ արդեօք ու է գործիքի պէտք  
ունի՞մ ուսումնարանէն :

Լուր օրերը աշխատութեամբ կ'անցընէինք .  
Կիրակի օրերը կարծէք մէկ մէկ դար էին :

Մեր բնակարանը աղքատիկ ու փայտաշէն  
տուն մըն էր . մեր նստած սենեակէն կարող  
էինք չուանը քաշելով դուռը բանալ :

Երբ կը հասնէր զ. Գուանեանի այցելու-  
թեան ժամը, այն բոպէին արդէն չուանը կը  
քաշէի, քաջ գիտնալով որ ան վայրկեան մը  
իսկ պիտի չուշանար : Զսպելով ուրախութիւնս  
իմ մէջս, անտարբէր՝ բայց շատ քաղաքավար  
ձեռք կ'ընդունէի զինքը : Ան վերջին ծայր ուրախ  
տրամադրութեամբ կը բարեւր մայրս և զիս .  
մէկ քանի խօսք Մաղաքեանի, մէկ քանի խօսք  
թատրոնի, մէկ քանի խօսք քաղաքի եղելու-  
յեանց մասին . այսպէս՝ քանի մը ժամ խօսելէ  
յեայ, կը հեռանար :

Մօրմէս ինդրած էի որ զիս մինակ չթողու-  
պարոնին հետ, և անոր մեկնելու պահուն՝ ինք  
ալ հետս դայ մինչև սանդուխը՝ զայն ձանա-  
պարհ դնելու : Չեմ գիտեր ինչո՞ւ կը վախնայի  
անոր հետ մինակ մալու :

Կարծեմ վեցերորդ կիրակին էր որ զ. Գո-  
ման այցելութեան կուգար մեզի : Երկայն բաղ-  
պայ նստած էինք այդ օրը՝ երեքս,

Բայրս մէջտեղը, ես աջ կողմի ծայրը, պարոնը  
ձախ ծայրը :

Յանկարծ հարցուց ինծի .

— Օրիորդ, նախանձո՞ւ էք :

Ես շուարեցայ .

— Չեմ հասկնար, զ. Գուան, ի՞նչ կու-  
զէք ըսել :

— Օրիորդ, ներեցէք, ես թաքուն նպա-  
տակով չհարցուցի . այլ պարզապէս ուզեցի իմա-  
նալ թէ արդեօք այդ զգացումը ունի՞ք: Խնդրեմ,  
ըսէք, կ'աղաշեմ՝ ըսէք, նախանձո՞ւ էք :

Այնքան պաղատեցաւ, որ վերջապէս մայրս  
հրամայեց ինձ որ պատասխանեմ:

— Դուք ինձ կը հարցնէք քաղցրութեանը  
կամ դառնութեանը մասին այնպիսի կերակուրի  
մը որ գեռ չեմ ճաշակած : Չեմ սիրած մինչեւ  
այսօրս, և չեմ կարող գիտնալ ապագան: Կարող  
եմ միայն երեակայել որ եթէ օր մը մէկը  
սիրեմ, չպիտի նախանձիմ, քանի որ քաջ գի-  
տեմ թէ ան ալ զիս պիտի սիրէ: Ինձ համար  
ուրիշ մը գոյութիւն պիտի չունենայ, ուրեմն  
անոր համար ալ նոյնը պիտի ըլլայ . միայն,  
կրնայ ըլլալ որ փորձեմ զինքը :

— Ի՞նչպէս, օրիո՞րդ, ըսէք՝ ինդրեմ:

— Բայց ի՞նչ պէտք կայ այժմ, քանի որ  
չեմ սիրեր և ոչ ոք կը սիրէ զիս :

Կրկին մայրիկը միջամտեց :

— Օրինակ . . . ի՞նչ բաեմ . . . պատուիրել որ  
օրիորդ \* \* \* ը թէը չառնէ երբեք , տեսնելու  
համար թէ իմ խօսքս , իմ կամքս կարո՞ղ է  
յարգել :

— Օ՛ , այդ ի՞նչ դժուար բանով կ'ուզէք  
փորձել . ասիկա ամենադիւրին բանն է :  
Քանի մը շաբաթ յետոյ , Մաղաքեան եկաւ  
ինձ ծանուցանելու թէ ինքը բռներ է Օրթա-  
գիւղի թատրոնը և այնտեղ պիտի կատարէի  
առաջին դերեր : Պէտք էր նոյն դիշերն իսկ  
հաւաքել մեր գոյքերը և հետեւեալ առտուն  
կանուխ փոխադրուիլ Օրթագիւղ :

Այդ լուրը զիս ուրախացուց : Վերջապէս  
նորէն պիտի սկսէի իմ սիրած դործս : Այդ  
լուրը միւնչըն ժամանակ տիրեցուց զիս . պէտք  
ցած կիրակիներուս :

Յանկարծ փողոցէն լսեցի ծանօթ ոտնա-  
ձայնը : Անդաշլաբար՝ քաշեցի չուանը , “Պ-  
Գուանն է” ըսելով : Ան , սահիպուած , ներս  
մտաւ : Բայց ա՛լ այն ուրախ մարդը չէր .  
ախուր էր և յուզուած : Մոռցաւ որ Մաղաքեան  
և մայրս նստած են :

— Օրիո՞րդ , ըստւ , Օրթագիւղի երիտա-  
սարդութիւնը ձեզ գլխէ պիտի հանէ :

— Պարո՞ն Գուան , իւսկիւտարի երիտասար-  
դութիւնը չկրցաւ զիս գլխէ հանել , կ'ապա-

Հովցնեմ ձեզ որ Օրթագիւղի երիտասարդու-  
թիւնն աւ չի յաջողիր :

Անոր մեկնելու միջոցին , աչքով մօրս նշան  
ըրի որ հետեւի ինձ , բայց մայրս չհասկցաւ :  
Ստիպուած՝ ճրագն առի և հետեւեցայ պարոնին :

Հասանք սանդուխի գլուխը : Այդտեղ , մէկ  
ձեռքը գնելով չուանի վրայ , միւս ձեռքը ինձ  
երկնցուց՝ մնաք բարով ըսելու : Եւ երբ ես  
ձեռքս երկնցուցի , յուզուած՝ համբուրեց ձեռ-  
քըս , չուանը քաշեց և հեռացաւ :

Ձեռքէս ճրագն ընկաւ : Կստած՝ սանդուխին  
վրայ , թէ՛ կամչնայի , և թէ՛ ուրախ էի :  
Զէի ուզեր ձեռքս տեղ մը դպցնել՝ որպէս զի  
շապականուի :

Վերջապէս՝ տեղէս վեր կենալով , մտայ  
սենեակ : Կարծեցի թէ անոնք կարդացին երե-  
սիս վրայ ինչ որ տեղի էր ունեցեր սանդուխին  
գլուխը :

— Մայրի՛կ , գոչեցի յուզուած , ես քեզի  
աչքով նշան ըրի , գուն չեկար , զիս մինակ  
ուղարկեցիր , ան իմ ձեռքս համբուրեց :

Մաղաքեան անմիջապէս պատասխանեց .

— Ոչի՞նչ . ան քեզի շատ կը հաւնի . ինձի  
խօսեր է այդ մասին : Պէտի ի քեզ շատ մաքուր  
զգացումներ և մտածումներ ունի :

Տեղափոխուեցանք Օրթագիւղ : Մեր տան  
դիմացը սենեակ մը վարձեր էր Պ. Գուանը :

Թատրոնը սասափէ կը սիրէր, և ուզեր էր ներ-  
կայացման իրիկուները բացակայ չմնալ՝ և գի-  
շերելու համար այդ սենեակը վարձեր էր :

Ե.

Այդ “սէզօն”ը պրլսահայ թատրոնի ոսկե-  
դարն էր : Մեր խումբը կազմուած էր սապէս .  
Մաղաքեան՝ իմբաղեա և ըեժիսօր, Աղամեան,  
Մնակեան, Սիսակ, Թրեանց, Անտոն Ռշտունի,  
Վարժապետեան, ևն Հրաչեայ, Աստղիկ, տիկին  
ցողի մէջ Մետածծայի դերն համար պատրաս-  
տեցի և ընդունուեցաւ : Մեր խաղացանկն էր  
երկու յիսնապետ, Փիեր ս’Արեցցո, Քաթերին  
Հովուարդ, Արեան բիծ, Լիոնի սուրհանդակ,  
մոռիւն, Արքայն զրուեռ, ևն :

Ներկայացումները կը արուեին Բարեսիրաց  
էր. դպրոցի բակը՝ թատրոնը : Շատ խորհրդաւոր  
դեցի :

Այս երրորդութիւնը դուրս էր վաներ Օր-  
Պոլսայ Հայոց ամենէն լուսաւորեալ թաղն էր :  
Այստեղ Հայերը մեծամասնութեամբ շատ լաւ

Հայերէն կը խօսէին, կրթուած էին և ուսեալ:  
Այդ միջոցին լեզուաբանական պայքար կար.  
ժողովուրդը երկու մասի էր բաժնուած . Յակոբ  
պէյ Պալեան և Տօքթ. Ուուսինեան աշխարհա-  
բարը զարգացնելու և կոկելու ուղղութեան  
պարագլուխներն էին, իսկ Էմմանուէլ Խսայեան՝  
գրաբարին : Ուուսինեան գլուցին համար՝ հօր-  
եղորորդին հօրորդի պէտք էր ըլլար, Խօրեղ-  
բայրը՝ Մօբար, Խօրեղբայրը՝ հօբար, պարոնը՝  
Տիայր : Աղամեանին և ինձ առաջարկեր էին  
ամէն մէկ Տիայրի և հօբարի համար զոր պիտի  
արտասանէինք բեմէն՝ մէկ ոսկի օսմանեան :  
Անոնք՝ ձեռքերնին բռնած մատիտ և թուղթ,  
նստած էին օթեակին մէջ մեր Տիայրներուն  
հաշիւը նշանակելու : Պէտք է ըսել որ երկուք-  
նուս ալ հաճելի էր Տիայր բառը, լաւ կ’ար-  
տասանուէր՝ բեմէն : Ատկից զատ, գիտէինք որ  
ամէն մէկ Տիայր կ’արժէր մէկ ոսկի : Ուստի՝  
փոխանակ մէկ Տիայր ըսելու, կ’ըսէինք՝ Տիայր,  
Տիայր : Այդ միջոցին, ժողովրդին մէջէն կը  
լսուէր Էմմանուէլ Խսայեանի ձայնը՝ Տէ՛ր, Տէ՛ր.  
բայց մենք ուշագրութիւն չէինք գարձներ :

Ամէն մէկ ներկայացման իրիկուն, Աղամեան  
և ես կը ստանայինք յիսունական ոսկի Յակոբ  
պէտէն :

Մէկ ամիս հաղիւ անցեր էր “սէզօն”ի սկիզ-  
բէն . գիշեր մը, թատրոնը պէտք էր լսարանի

Վերածուէր : Թօսիչանէլեան պիտի խօսէր , չեմ  
յիշեր ի՞նչ բանի մասին : Այդ իրիկուն , ևս  
չգացի թատրոն , բայց Պ. Գոռան այնտեղ էր :  
Ես՝ սենեակս նստած , մութ տեղը , կը սպասէի  
անոր վերադարձին :

Կէս գիշերին , լսեցի ոտնաձայններ հեռու-  
էն , և Օր . \* \* \* ի ձայնը .

— Թեկերնիդ ինձ չէք շնորհեր , Պ. Գոռան :

— Խնդրեմ , ըստ ան ու թել տուաւ  
օրիորդին : Սիսակն ալ կ'ընկերակցէր անոնց :

Երբ հասան օրիորդի դրան առջեւ , ինդրեց  
որ մտնեն սուրճ մը ընդունելու : Երկու պա-  
րոնները հազիւ թէ համաձայնութիւն յայտնած  
էին , ևս բացի պատուհանս : Զիս որ տեսաւ  
Պ. Գոռան ,

— Օրիորդ , ինդրեմ , դուք ալ եկէք ,  
ըստ , օրիորդը կը խնդրէ որ գաւաթ մը սուրճ  
խմենք :

— Շատ շնորհակալ եմ , ինձ համար ար-  
դէն ուշ է , ըսի , պատուհանը փակելով ինկայ  
բազմոցին վրայ և կուշտ մը լաց եղայ :

Յաջորդ իրիկունը պիտի ներկայացնէինք  
նենց եւ Հաւատարմութիւն :

Այդ գիշեր , Պ. Գոռան կանուխ եկաւ քու-  
լիսները . բայց ես չբացի գուռս , մինչեւ վարա-  
գոյրը բացուելու րոպէն : Յուսաշատած , գնաց  
Սիսակն ինդրելու ,

— Սիսակն , գնաց ըսէ՛ , անգամ մը թող  
լուէ զիս :

Վերջապէս , Սիսակին անսալով , բացի գու-  
լուս : Ներս մտան :

Գոռան կուլար , կը պաղատէր .

— Ներէ՛ , ներէ՛ , ներէ՛ :

— Չեմ հասկնար ձեզ , պարո՞ն . ի՞նչ նե-  
րեմ : Դուք ինձ բան մը չէք ըրեր :

— Օ՛ , գիտեմ . դուք ինձ ըսեր էիք այդ  
օրիորդը թես չառնել . իսկ ես առի :

— Դուք շատ սիսալեր էք , այդ խօսքը ձեզի  
համար չըսի . ես դեռ չեմ սիրած :

— Մի՛ ըսեր այդպէս , դուն զիս կը սի-  
րէիր , ես ալ քեզ կը սիրեմ :

— Գիտէ՞ք ի՞նչ , պարո՞ն , ցաւալի է որ  
տեղի եմ տուեր ձեզի կարծել թէ ես ձեզ կը  
սիրեմ : Ո՛չ , ես ձեզ յարգած եմ իբր ամենա-  
լաւ բարեկա՞ն , ուրիշ ոչինչ :

Ես դուքս ելայ սենեակէն :

Ինձ համար “պահս” էր այդ պարո՞նը : Տան-  
ջուեցայ երկու շաբաթ , ամէն գիշեր լաց ըւ-  
լալով : Յետոյ անցաւ :

Զիս ամուսնութեան ուզողներ պակաս չէին ,  
թէ՛ հարուստ և թէ՛ միջակ դասակարգէն : Բայց  
ոչ մէկը զիս կը հետաքրքրէր :

Յակոբ պէյ Պալեան կը ցանկար որ ես  
Ադամեանի հետ ամուսնանայի : Ադամեան կու-

դար պէյին ցանկութիւնը յայտնել ինձ : Ես  
լուռ էի , և չէի պատասխաներ , բայց որ մը  
ուզեց անպատճառ կարծիքս իմանալ :

— Աղամեան , գիտե՞ս ինչ , երկու լա-  
րախաղացներս չենք կրնար մէկ չուանի վրայ  
իսպալ :

Կը բարկանար , բայց քիչ մը յետոյ կը  
մոռնար ու կըսէր .

— Շէք պիտի երթանք , օրիորդ , շէք  
պիտի երթանք :

Կը շարունակուէր ամէն ներկայացման յի-  
սունական ոսկին : Ես այդ դրամը կուտայի մօրս :  
Աղամեան նոյն գիշերն իսկ կը հալեցնէր . առ-  
նելով հետը Օրթագիւղէն քանի մը ընկերներ ,  
կարձէր առաջին կարգի կառք ու կ'երթար  
իսկ շատ անգամ ժամացոյցը գրաւ դնելով առ-  
առն կը դառնար Օրթագիւղ :

Մենք ընդունուած էինք առաջին սալօննե-  
րուն մէջ : Առանց Աղամեանին և ինձ՝ երեկոյթ  
չէր ըլլար :

Գիշեր մը , նշան Օտեան էֆէնտիի տունը  
երեկոյթ կար : Գիւղին բոլոր մեծամեծները այն-  
տեղ էին : Յակոր պէյ ինձ առաջարկեց ամուս-  
նանալ Աղամեանի հետ :

— Ո՞վ գիտէ , թերեւս մէկ ուրիշին կինն  
ըլլաս և հայ բեմը զրկուի քենէ : Աղամեան

գեղեցիկ է , լաւ արթիստ է , և քեզ շատ կը սիրէ:  
— Պէ՛յ , ներեցէք որ ձեր խօսքը կը կտրեմ:  
Ան զիս չկրնար սիրել : Անոր սէրը հինցած է ,  
իսկ իմս շատ նոր : Հին կտորը նոր կարկտան  
չի բռներ :

Այդ միջոցին , երաժշտութիւնը քատրիլ կը  
ծանուցանէր : Ներողութիւն խնդրելով հեռացայ:  
Խոստացեր էի պարոնի մը՝ հետը պարել :

Աղամեան , Յակոր պէյի մօտէն գալով սրահ ,  
ընդհատեց պարը , և սկսաւ պղաւել .

— Օրիորդ , դուք զիս խէժէ գնդակ էք  
դարձուցեր , երբեմն օդը կը բարձրացնէք , եր-  
բեմն գետնին կը հաւասարցնէք : Այո՛ , պարոն-  
ներ , ես օրիորդ մը կը սիրեմ , թէև ան գեղե-  
ցիկ չէ , աչքին մէկը կոյր է , ոտքը կաղ , ինքը  
տգեղ և երեսը չեռու , բայց անոր սիրու ադ-  
նիւ է , ան զիս կը սիրէ , ես ալ ան կը պաշ-  
տեմ , և պիտի ամուսնանամ հետը :

Սրահին մէջ ծիծաղ յարուցին այս խօսքերը :

— Պարո՞ն Աղամեան , ըսի , ոչ ոք ձեզ  
կ'արգիլէ ամուսնանալ անոր հետ . միթէ դուք  
աղատ չէք :

Զեր յիշեր ո՛քան ժամանակ էր անցեր ,  
օր մը Օրթագիւղի երիտասարդութիւնը պիտի  
ներկայացնէր խաղ մը՝ յօգուտ աղքատներու :  
Խնդրեր էին Մաղաքեանէն որ ան ալ իր խմբով  
ներկայացնէ զաւեշտախաղ մը :

Սիրողներու փորձերը ձեզ ծանօթ են . ժամանակին չէին եկեր , և կը փորձէին ուշ :

Գացի թատրոն : Ենեակս դեռ չէի մտեր ,  
տեսայ որ սիրողները կը փորձեն : Հետաքըր-  
ուր կը գտնուէր սիկին Վալիտէեան :

Մեր օթեակին կը թըրնած էր երկայն հա-  
սակով ու թափանցիկ դէմքով համեստ երիտա-  
սարդ մը , որ սիկար կը ծխէր : Ուշադրութիւնս  
գրաւեց . նայեցայ պարզապէս : Մեր աչքերը  
երարու հանդիպեցան :

Պարոնին ձեռքէն սիկարը վար ինկաւ : Ես  
ետ քաշուեցայ : Տիկին Վալիտէեան ինձ դար-

մնաց : — Ի՞նչ ըրիր խեղճ տղուն որ ապշեցաւ

Քիչ յետոյ գացի սենեակս քաշուեցայ :

Մեր դաւեշտախաղի միջոցին , կը տեսնէի  
բեմէն նշյն երիտասարդը որ նստած էր ժողո-  
վրդի մէջ՝ մտածկոտ , տխուր :

Շաբաթ մը յետոյ , փորձի ժամանակ , ինձ  
նամակ մը բերին :

Ադամեան բարձրաձայն գերասաններուն  
ըստ .

— Օչօ՛ , մեր օրիորդը սկսեր է դրսէն նա-  
մակներ ստանալ :

Նամակը բացի , յանձնեցի Մնակեանին .

— Ես գաղտնիքներ չունիմ , ինդրեմ՝ կար-  
դացէք ամենուն առջեւ :

Մնակեան աթոռի մը վրայ ելլելով , սկսաւ  
բարձրաձայն կարգալ նամակը : Պարոն մը ,  
յայտնելով ինձ իր սէրը , կը խնդրէր խղճալ  
իրէն : Եթէ խղճայի , յառաջիկայ ներկայացման ,  
“Փարիզի աղքատներ”ուն մէջ , առաջին անգամ  
բեմ դուրս եկած ատենս , թաշկինակս ձեռքս  
պէտք էր ունենայի : Այն ատեն , պարոնը ձա-  
կատը պիտի սրբէր իր թաշկինակովը , և ես  
պիտի տեսնէի թէ , ո՛վ էր նամակին հեղինակը :  
Նամակը ստորագրութիւն չունէր :

Այս որ լսեցին գերասանները , ինդրեցին  
ինձմէ որ այդպէս վարուիմ :

Ներկայացման ժամանակ , երբ առաջին  
անգամ բեմ դուրս եկայ , ձեռքս բոնած էի  
մանշօն : Ադամեան , որ կը կատարէր եղբօրս  
գերը , ծաղիկ գնեց ինձ նուիրելու : Ձեռքս  
մանշօնէն դուրս քաշած միջոցիս , թաշկինակս  
վար ձգեցի : Եւ երբ գետնէն վեր առի , նայե-  
ցայ հասարակութեան : Ինձ չետ նայեցաւ  
Ադամեան , ինչպէս և Մնակեան որ բեմի վրայ  
էր այդ պահուն՝ Պլանտրօզի գերին մէջ . բայց  
ոչ ոք երեսը սրբեց :

Երկրորդ օրը , նամակ մը ևս բերին մեր  
տունը : Այդ անձանօթ պարոնը կը յայտնէր  
թէ չէր կարողացած երեսը սրբել , որովհետեւ

Արամեան և Մնակեան ալ ուշադրութիւն էին  
դարձուցած : Այս անգամ ևս նա իր ցաւերուն  
փրայ խօսելէ յետոյ, սասորէ դրած էր իր անուան  
սկզբնատառերը, Ա. Ա. Գ. :

Ներկայացման երեկոյին, հարցուցի թէ  
ի՞նչ է այդ պարոնի անուանը — իմացայ որ Ան-  
տոն Ս. Գարսա է : Այժմ գիտէի թէ ո՞վ է նա-  
մակ գրողը :

Ստացայ երրորդ նամակ մը, որուն մէջ կար  
սիրուն մատանի մը, մէջի կողմը գրուած . “Յիշէ՛  
զիս” : Այլ ևս չպատասխանել կարելի չէր :  
Տարի նամակը, նոյնպէս և մատանին, Պա-  
շաբեանին և ըստ .

— Ետ տուէք պարոնին թէ՛ նամակը և  
թէ՛ մատանին . գեռ կանուխ է ինձ համար  
պսակուելու մասին մտածել :

Մաղաքեան, յանձնելով մատանին, յայտ-  
ներ է որոշումն : Բայց պարոնը, Մաղաքեանի  
ներկայութեանը, մատանին նուիրեր է ծառային:  
Գերասանները արդէն Օրթագիւղի մէջ  
տարածայներ էին այս դէպէր : Պարոնին ընկեր-  
ութաղելով կ'ըսէին .

— Ան քեզ չետ չ'ամուսնանար : Դուն քա-  
նի երրորդ թեկնածուն ես :

Օր մը՝ ուղարկեր էր իր բարեկամներէն  
զինքը, և եթէ չէի ցանկար իրեն չետ ամուս-

նանալ, ուղղակի ըսեմ իրեն, որպէս զի ինքն  
ալ յոյսը կտրէ :

Մայրս ըսաւ, “Թողդ գայո : Իսկ ես ինդրեցի  
որ գայ փողոցի պատուհանին մօտ և գրսէն  
խօսի : Մեր պատուհաններուն բարձրութիւնը  
մարդու հասակ էր : Այդպէս ալ եղաւ : Եկաւ  
կէս-գիշերին պատուհանին առջև, բարեկց զիս  
և լուց :

Ես խզեցի լուռթիւնը :

— Պարո՞ն, գուք ուղեր էք ինձ չետ խօ-  
սիլ . ինդրեմ, ինչ որ ունիք ըսելու՝ շուտ ըսէք .  
կարող են տեսնել, և լաւ չըլլար :

— Ինչ որ ըսելու եմ՝ գիտես արդէն, ես  
առանց քեզ չեմ կարող ապրիլ :

— Մեր միութիւնը անկարելի է, քանի որ  
գուք պապական էք և ես լուսաւորչական : Դուք  
վնասուցէք պապական օրիորդներէն ընկեր մը  
ձեզ համար, ես կ'ամուսնանամ լուսաւորչական  
երիտասարդի մը չետ :

— Եթէ գուք հրէայ ըլլայիք, հաւատա-  
ցէք՝ այս վայրկեանիս կ'ընդունէի մովսիսական  
կրօնքը : Դուք ինձ ըսէք ձեր վերջին խօսքը :  
Եթէ ոչ ըլլայ ձեր ըսելիքը, այն ատեն գիտցէք  
որ իմ մաշուանս դատավճիռը կարդացած պիտի  
ըլլաք :

— Գիտէք որ ես մայր ունիմ, նոյնպէս  
Մաղաքեանը որ իմ հայրս է ու մենտորս .

ուստի պէտք է անոնց ալ խորհուրդ հարցնեմ:  
Վաղը՝ Մաղաքեանէն կ'իմանաք իմ վերջնական  
պատասխանս:

Երկրորդ օրը, Մաղաքեան գնաց կրկին  
յայտնել թէ օրիորդը կը մերժէ ամուսնանալ:  
Նպաստի ներկայացման ժամանակը հասեր  
էր: Առաջին նպաստը իմն էր: Զեմ յիշեր  
խաղը ի՞նչ էր: Օրթագիւղի փոքրիկ փայտաշէն  
թատրոնին մէջ՝ մէկ աթոռի փոխարէն երկուք  
էին դրած: Օթեակներու տոմսակներուն վրայ  
գին չէր նշանակած Մաղաքեան: Այդ իրիկունը,  
ստացայ շատերէն՝ պահարանի մէջ ներփակուած  
դրամատումեր, ամենաքիչը՝ հինգ ոսկինոց.  
յետոյ, Յակոբ պէյ Պալեանէն յիսուն ոսկի,  
տիկին Պալեանէն յիսուն ոսկի, Աբրահամ,  
փաշա Երամեանէն յիսուն ոսկի, Արմանովիչէն  
քսանուհինգ ոսկի. վերջապէս, զուտ հասոյթ՝  
երեք հարիւր յիսուն ոսկի ստացայ:

Յաջորդ շաբթու նպաստը Ագամեանին էր:  
Ան ալ ստացաւ նոյնքան:

Դ. Բաշինջաղեան, Ագամեանի մահուան  
տաճամեակի առթիւ գրելով, ըսեր էր թէ  
անիկա՝ առաջին անգամ ըլլալով ձեռքը ունե-  
ցաւ հարիւրնոց մը, դլուխը դրաւ սիլինտը ու  
շտապեց դէպ ի Կովկաս: Ո՛չ, պարոնը կը  
սիսալէր: Ագամեան դլուխը սիլինտը դրաւ ո՛չ  
պոլսեցւոց դրամերով ո՛չ կովկասեցւոց: Անիկա

որդին էր Հերոնիմոս աղային որ Պալսոյ մէջ  
բարեկեցիկ դասին կը վերաբերէր: Զեմ գիտեր  
ի՞նչ ցաւ է դարձեր մեր բոլորին՝ որ մէկ գրող  
կամ գերասան մեծ ցոյց տալու համար՝ կ'ու-  
զենք որ ան աղքատ, լքուած, փողոցները  
մնացած ըլլայ: Ըստ իս՝ Ագամեան անով էր  
մեծ, որ ունենալով բարեկեցիկ վիճակ, թողուց  
ու փարեցաւ վշուա ասպարէզին:

Ներկայացումները վերջացան: Այլ ևս չէի  
տեսներ Անտոն Գարան սրահին մէջ: Բայց  
պէտք կը զգայի զայն տեսնելու:

Ես տկարացայ, զիս վերջին ծայր թոյլ կը  
զգայի: Կուգար տոքթ. Ծիշմանեան (Ծերենց)  
և ուրիշ բժիշկներ, կը հարցնէին թէ ի՞նչ  
կը զգամ: Ես կը պատասխանէի թէ գլուխս կը  
ցաւի: Կը ստէի: Սիրտս էր որ կը մաշուէր,  
բայց չէի ուզեր խոստովանիլ:

Անակեան օր մը եկաւ ինձ մօտ ու խնդրեց.  
— Ըսէ՛ ինծի, սիրելի՛ աղջիկս, ի՞նչէն է  
որ կը մաշուիս: Կ'երդնում օր մէկուն չեմ ըսեր:  
Այն ատեն ըսի.

— Ամէն իրիկուն, մութ տեղը ման կուգայ  
Անտոն Գարան. կը լսեմ անոր ոտքի ձայնը,  
բայց հապատութիւնս չի ձգեր որ պատուհան  
ելլելով տեսնեմ զինքը: Իսկ ես պէտք կը զգամ  
զինքը տեսնելու:

— Լա՛ւ, եթէ կը սիրես, հապա ինչո՞ւ

շես ուզեր ամուսնանալ հետը : Ան պատրաստ է :  
Խեղձը մինչեւ առառու փողցները կը թափառի :  
— Ո՞չ, Մնա՛կ, կարծեմ թէ՝ աս ալ կ'անցնի :  
Ես կը վախնամ ամուսնութենէն : Ո՞վ գիտէ,  
կարելի է մեր բնութիւնները չյարմարին : Ես  
լսեր եմ որ անոր ընտանիքը չուզեր զիս : Ես  
ալ չեմ ցանկար անոնց որդւոյն հետ պսակուիլ :  
— Կ'ուզէին ներկայացնել "Հաւատք, Յոյս,  
Սէր", ըսաւ Մնակեան, բայց տեսնելով որ դուն  
տկար ես, յետաձգեցին : Ես կ'ըսեմ թէ  
կարող ես, այն պայմանով որ փորձերը քու  
տունդ կատարուին : Այդ իրիկունը, ան ան-  
ու կը հանգստանաս :  
— Ի՞նչպէս, Մնա՛կ, միթէ՞ ես կարող եմ  
ներկայացում տալ :  
— Կարող ես, կարող ես, ըսելով հեռացաւ:  
Փորձերն ըրինք մեր տունը : Ներկայացման  
իրիկունը, չեմ գիտեր ի՞նչպէս դացի թարոսն :  
Կիսով չափ լցուն էր : Առաջին արարուածէն՝  
արդէն ուժերս սպառուեցան : Ան նստած էր  
օթեակի մը մէջ՝ բարեկամի մը հետ : Երբ վա-  
րագոյրը իջեցուցին, Մնակեանին ըսի .  
— Ան, Մնա՛կ, կարողութիւն չունիմ ոտքի  
վրայ կանգնելու . Ի՞նչպէս պիտի տանիմ մինչեւ :  
— Ես քեզ կ'ազատեմ գերէդ, ըսաւ :

Ես ոչինչ հասկցայ : Այդ թատրոնին մէջ,  
լուսաւորութիւնը հասարակ լավտերներով էր :  
Քուլիսներէն կախուած էին քանի մը լամպար-  
ներ : Մնակեան կոնակով զարկաւ քուլիսին,  
լամպարներէն մէկ քանին վար ձգեց, փոքրիկ  
վերք մը ստացաւ գլխէն : Տախտակամածին վրայ  
լամպարին մէկը բռնկեցաւ : Մնակեան ուշա-  
թափ եղաւ, և ներկայացումը խափանուեցաւ :  
Ես, զարմացած ու դող ելած, տուն գացի :  
Զէի կարծեր թէ այդպիսի բան մը կարելի էր  
ընել :

Այդ տարօրինակ ներկայացումէն յետոյ,  
գերասանները ցրուեցան, ամէն ոք իր տեղը  
գնաց, "սէզօնը վերջացաւ :

Զ.

Շաբաթ մը յետոյ, նշանուած էի Անտոն  
Գարայի հետ :

Ան իր մօրաքրոջ որդւոյն քով առաջին  
գրագիր էր :

Օրթագիւղի մէջ՝ Գարաեան Սահակ աղա  
յարգուած մարդ էր : Շատ խիստ էր իր որդւոյնը  
հետ : Լսելով որ իր որդին թատրոնի մէջ  
խաղացող աղջկան հետ պիտի պսակուէր, սաս-  
տիկ բարկացեր էր :

— Ա՛լ տունս գործ չունիս , ըսեր էր . պաշ-  
տօնէդ ալ հրաժարուած ես . գնա՞ :  
— Ծա՛տ շնորհակալ եմ , կը պատասխանէ ,  
ու տունէն դուրս կ'ելլէ :  
Գալով ինձ մօտ կը պատմէ պատահածը .  
— Ազնիւ , ես պանդոկի մէջ սենեակ պիտի  
փարձեմ : Գուն ինձմէ երես մի՛ դարձըներ . ես  
գործ կը ճարեմ , քեզ ու մայրդ կը պահեմ  
ինչպէս որ պէտք է :  
— Գուն ալ հանգիստ եղիր , Անտոն . ես  
այնքան աղքատ չեմ . ունիմ հաղար ոսկի .  
Պանդոկի մէջ կ'ապրէր , բայց ամէն որ մեզ  
մօտ կը ճաշէր :

Մէկ կամ երկու ամիս էր որ նշանուած  
էինք , պարոն մը սկսուայրիս հաւաստեր էր թէ՝  
Կապահովցնեմ քեզ որ հարսնացուդ Հրաշեան է ,  
ջին տեղը պիտի բռնէ : Գնա՞ անգամ մը տես ,  
յետոյ ինչ կուգես ըսէ ,  
Երկրորդ օրը՝ նշանածիս հետ ծեր մարդ  
մը ներս մտաւ : Զգացի թէ անոր հայրն է :  
Զիս տեսաւ թէ չէ , համբուրեց .  
— Կեցցե՞ս , Անտոն ըսաւ , այսպիսի հարս-  
քիս մը նստելէ յետոյ , ինդրեց որ մեզ

Երկուքս մինակ թողուն : Ու Երբ մինակ մնացինք ,  
ըսաւ ինձ .  
— Ազնիւ , աղջիկս , այժմ խնդիրք մը  
ունիմ քեզի . տեսնենք պիտի յարգե՞ն :  
— Հայր , հրամայեցէք , վստահ եղէք որ  
ձեր հրամանը իբր պատգամ պիտի ընդունիմ :  
— Իմ խնդիրքս է որ ձեր պսակը կա-  
տարուի պապական եկեղեցւոյ մէջ : Աինս ու ես  
շատ կրօնամոլ ենք :

— Ոիրելի հայր , ներեցէք ինձ , քանի՞  
զաւակ ունիք :

— Տամնըզորս :

— Այժմ կարգը ձերն է հարցընելու թէ  
իմ մայրս քանի՞ զաւակ ունի : Մէկ հատ միայն :  
Ու ինքն ալ կրօնամոլ է որբան գուք : Ան ալ  
մնուցեր մեծցուցեր է զիս այն յօյսով որ պիտի  
պսակէ զիս այն եկեղեցւոյն մէջ ուր զիս մկրտեր  
է : Այժմ ըսէք , կարո՞ղ եմ թքնել այն կուրծ-  
քին վրայ որ ինծի կաթ է տուեր , թքնել այն  
մօր վրայ որուն միակ յայսն եմ ես : Հիմա որ  
ամէն բան իմացաք , ինդրեմ հրամայեցէք , ես  
պատրաստ եմ ընելու :

— Ո՛չ , ո՛չ , սիրելի՝ աղջիկս :

Կանչեց նշանածս .

— Անտոն , գուն պէտք է պսակուիս լու-  
սաւորչական եկեղեցւոյ մէջ , ես կուտամ իմ  
հայրական օրհնութիւնս :

Շատ յուղուեցայ, կարծեցի թէ չայրս  
վերակենդանացած էր:

Մինչև մեր հարսնիքը, ամէն օր կուգար:  
Շատ կը սիրէր զիս, ևս ալ զինքը շատ կը  
սիրէի: Ափառս որ շատ քիչ ժամանակ վայելեցի  
զինքը: Ամուսնութենէս տարի մը յետոյ, ար-  
դէն կորսնցուցած էի զինքն ալ:

1873 սեպտեմբեր 14ին, պսակուեցանք, և  
մեր մեղրալուսինը անցուցինք նիկոմիդիա, ուր  
ամուսինս պաշտօն էր ստանձներ: Երկաթուղւոյ  
կորա: Նիկոմիդիայի մէջ բացած էին գործարան:  
Պարոնի մը ընկերակցութեամբ՝ բերել տուաւ  
թրավերաներ ու տէրութեան յանձնեց: Բայց  
մենք գեռ չէինք գանձած դրամը, տէրութիւնը  
թէ ապրանքատիրոջ, փակուեցաւ գործարանը:  
Թիւնը:

Վեց ամիս հազիւ էր անցեր, մենք կոր-  
ունքինք թէ մեր սեփական դրամը և թէ  
գիւղ թաղը, 1876 թուականին:  
Եւ միջոցին, Պաղպական կազմեց խումբ  
մը՝ Սիմոնովիչ աջակցութեամբ, և սկսաւ տալ

շաբք մը ներկայացումներ Փերայի Ալքազար  
թատրոնին մէջ :

Դերասաններն էին Մաղաքեան, Ադամեան,  
Սիսակ, Թրեեանց, Տէօփուճեան և՝ կարծեց  
Մնակեան: Գերասանուհիներն էին Աստղիկ,  
Սիրանոյշ, տիկին Վալիսէեան:

Անակնկալ դիպուած մը հիմէն տապալեց  
այդ գործը: Սիմոնովիչ Օսմանեան Պանքայի  
գանձապահին էր: գեղծման ամբատանութեամբ  
բանտարկուեցաւ: Ներկայացումները դադրեցան:

Ամերիկեան՝ Պոլիս գալով փորձեց նոյն  
խմբով տալ ներկայացումներ Ալքազար թատ-  
րոնին մէջ: Բայց խեղճը չյաջողեցաւ: Եր լեզուն  
Պոլսեցւոց համար խորթ կը հնչէր: Եկաւ ինձ  
մօս՝ խնդրեց մասնակցիւ:

— Օգնեցէք ինձ, տիկին. ես գժրազդ մարդ  
եմ, որ եկայ և ձեզ ամուսնացած գտայ:

Խեղճը կը կարծէր թէ մերժմանս պատ-  
ճառը ամուսնութիւնս էր:

Շաբաթ մը յետոյ՝ գարձեալ գալով մեզ  
մօտ, զիս գտաւ շատ գէշ հիւանդ վիճակի մէջ:  
Այն ատեն ներողութիւն խնդրեց: Երեք ամիս  
անկողին մնացի՝ քիչ մը ցուրտ առած ըլլալուս  
հետեւանքով:

Ամերիկեան կարծեմ անմիջապէս գարձաւ  
Թիֆլիս:

Դերասանական խումբ չկար . կամ պէտք  
էր Վարդովեանի խմբին միանայինք և կամ  
պարապ նստէինք : Յաջորդ “սէզօն”ին համար՝  
Եղիազար Մելիքեան վարձեց ֆրանսական թատ-  
րոնը : Չուհաճեանի ղեկավարութեամբ պիտի  
ներկայացնէինք շաբթ մը օփերէթներ , Արիֆ,  
Քոսկ , Լեպիեպիմի Հօրհօր , ևն .

Շատ հնչուն և կլոր ձայն ունէի : Եկան  
ինձմէ ինդրել որ ընդունիմ առաջին երգչուհիի  
պաշտօնը : Առաջարկեցին 50 ոսկի ամսական .  
Փերա՝ առնուազն 5 ոսկիի բնակարան , դեսպակ  
որով պիտի կարողանայի ամէն օր երթալ փորձի  
Տհաճութեամբ ընդունեցայ պայմանը :  
Ստիպուած էի , քանի որ ոչ մէկ տեղ տուամ կը  
ներկայացնէին . Օրթագիւղի Հայոց թաղը բո-  
լորովին հրոց Ճարակ եղած էր :

Հաստատուեցանք Փերա : Խումբը բաղկա-  
ցած էր մօտ քառասուն հոգիէ :  
Թլքական Օփերայի երգիչ դերասաններն  
էին Գարեգին Ռշտունի , Անտոն Ռշտունի ,  
Նալեան , Սիսակ , Զափրաստ , Միշել Պէրպէր-  
եան , Խաչիկ Փափազեան (թենօր) . դերասա-  
նուհի-երգչուհի՝ ևս ինքս . մացեալները հոսկէ  
հոնիէ հաւաքուած մարդիկ էին :  
Չուհաճեանի արամագրութեան տակ կար  
օբքէսթր մը , կարծեմ 35 հոգիէ բաղկացած :

250 ոսկի ամսական կը ստանար միմիայն օր-  
քեսթրը : Ա՛լ խումբը չեմ գիտեր ի՞նչ կ'արժէր:  
Ընհաշիւ կը ծախսուէր : Ամէն իրիկուն թատ-  
րոնը լեցուն էր , բայց կարելի չէր այդ ծախսը  
ծածկել :

1878ի հոկտեմբեր 24ին , ունեցանք աղջիկ  
զաւակ մը : Գէորգ Այվազեան կնքահայր եղաւ:  
Անունը դրինք Պերճուհի :

Այդ օրէն ամիս մը յետոյ , արդէն թատ-  
րոնը փակուած էր :

ի.

Տեղափոխուեցանք Պոլիս :

Ֆասուլեաճեան ինձ մօտ գալով համոզեց  
ընկերակցութեամբ երթալ Ազրիանուպոլիս :

— Ամսական քառասուն զրուշով տուն մը  
կարող ես վարձել , ըսաւ , և քսան զրուշով  
լաւ ծառայ :

Այնքան աժան ցոյց տուաւ ամէն բան , որ  
եթէ մենք ծախսէինք երկու հարիւր զրուշ ,  
արդէն շատ ու շատ էր :

Ես ինդրեցի որ ինձ ամսական տայ և տուա-  
ջարկեցի՝ այդ Աւետեաց Երկրի համար՝ ուր  
պիտի ապրէինք մանանայով՝ 15 ոսկի : Ընդու-  
նեցաւ :

Աերջապէս, ձանապարհածախուը ինձմէ  
հայթայթելով դացինք ֆասուլեածեանի սիրելի  
քաղաքը: Այդտեղ, իմացայ թէ մեր ներկայա-  
ցումները պիտի ըլլային միայն թուլքերէն,  
որովհէտեւ Ազրիանուպուսոյ Հայերը թլքախօս  
են:

Խումբին մէջ կային գերասաններ՝ որ որ  
ֆասուլեածեան, Սիսակ, Հոլասեան, Գէորգ  
Պէրպէրեան, Ռուբէն Պիննէմէծեան, Թաշ-  
չեան, գերասանուչիք՝ Տիկ. ֆասուլեածեան,  
Ազնիւ Արապածեան, Տիներզատ Պէրպէրեան  
և Հրաչեայ:

Առաջին քայլէն՝ ատեցի թէ թլքախօս  
քաղաքը և թէ ֆասուլեածեանը, որ զիս չա-  
ռաջար խարեց: Քան զրուցի փոխարէն, փոքրիկ  
երկու հարիւր յիսուն զրուց:

Առաջին ներկայացումն էր “Քաթէրին Հո-  
կուարտ”: Բեմին անմիջապէս առջեւը նստած  
կը հարիւրապետ մը, հարբած, և շարունակ

— Ասլանը, աշըք (Ասիւծս, սէրս):  
Դերասանները կը խանգարէր իր անվերջ  
“ասլանը”ներով:

Ես անմիջապէս ինդրեցի ֆասուլեածեանէն  
թոյլ տալ ինձ որ երթամ Պոլիս: Բայց, ան

բացատրելով թէ ի՞նչ կը լլար խմբին վիճակը՝  
եթէ ես ձգէի երթայի, համոզեց զիս մնալու:  
Երկու ամիս յետոյ, ֆասուլեածեան սկսաւ-  
— Ժողովուրդը կը ցանկայ տեսնել Հերա-  
նոյշը:

Զէի գիտեր թէ այդ անունով գերասանուչի  
կայ, և թէ ֆասուլեածեան շատ մօտիկ է անորու-  
— ֆասուլեածեան, ըսի, քանի որ հոս  
դալերնէս յետոյ դու ինձ մերժեցիր ամսական  
տալ, և ստիպեալ ընկեր ենք, ես չեմ կարող  
ամսական տալ, այն ալ տասը ոսկի՝ ինչպէս  
կառաջարկես, օրիորդի մը որուն անունը առա-  
ջին անդամ կը լսեմ:

Ֆասուլեածեան բերել տուաւ Հերանոյշը:  
Ես հրաժարուեցայ խումբէն:  
Հերանոյշ եկաւ: Բայց դեռ բեմ չէր ելած:  
Եկաւ ֆասուլեածեան, ինդրեց, աղաչեց  
որ կրկին ընկերակցիմ:

— Անիկա Թուրքաց փիէսներուն մէջ պիտի  
կատարէ առաջին դերերը, իսկ եւրոպական գե-  
րերուն մէջ՝ դուն:

Ճիշտն ըսելով՝ ես ընդունեցայ, որովհետեւ  
կը ցանկայի տեսնել գեղարուեստի այդ քրմաւչին:  
Առաջին ներկայացումն էր Հէյ վահ, որուն  
մէջ կային երկու թուլք երիտասարդ կանաց  
գերեր:

Առաջին կնոջ դերը կը կատարէր Հերանոյշ,  
իսկ երկրորդը՝ ևս :  
Ելանք բեմ : Իմ երկրորդ դերս եղաւ  
առաջին :

Քէմալ պէյ զրած ունէր “Վաթան” (Հայ-  
րենիք) տիտղոսով խաղը : Արդէն երկու անգամ  
ներկայացուցած էինք “սէզօն”ին սկիզբը: Հասոյթ  
եղեր էր ամենաքիչը յիսուն սոկի : Գասուլեաճ-  
եան ծանոյց ինձ թէ այդ խաղին ներկայացումը  
ծախեր էր քսանուչինդ սոկիի , այն պայմանաւ  
որ անոր մէջի Զէքիէի դերը պիտի կատարէ  
Հերանոյշը :

— Շատ լաւ ես ըրեր , Գասուլեաճեան ,  
ըսի : Ես ալ քսանուչինդ սոկիի ծախեցի “Ան-  
ձէլօ Մալիկիէրի” խաղը , զոր այս “սէզօն”ին  
մէջ Թիզպէի դերը կատարեր է կինդ ու տուեր  
է հասոյթ երկու հարիւր զրուշ : Այս պայմա-  
րեմ:

— Ի՞նչպէս , դուն ի՞նչ երաւունքով երե-  
սյդ կը ծախես : Եւ վերջապէս չես դիտեր որ  
դերը իմ կնոջն դերն է :

— Ես ծախեր եմ այն իրաւունքով որով  
դուն և ծախեր : Գալով Թիզպէի դերն , հոգ  
չէ , ես չեմ կատարեր : Բայց դուն ալ պէտք է

ջնջես քսանուչինդ ոսկի ընկերութեան պարտ-  
քէն :

— Ո՛չ , ոչ կը ջնջեմ և ո՛չ ալ կը ծախեմ :  
— Քանի որ այդպէս է , Գասուլեաճեան ,  
ես ալ չեմ ծախեր “Վաթան”ի ներկայացումը :  
Կամ կը ստորագրես “Անձէլօ”ի պայմանը և կամ  
Հերանոյշը չի ներկայացներ Զէքիէի դերը :  
— Զիս կախեն ալ չեմ ստորագրեր . ինծի  
Գասուլեաճեան կըսեն :

Արդէն յայտարարութիւնները ցըռւած էր :  
Գացի անմիջապէս տպարան , հարիւր յիսուն  
հատ յայտարարութիւն տպել տուի՝ Զէքիէ-  
Հրաչեայ : Այդ կերպով հրապարակի վրայ կար  
երկու տեսակ յայտարարութիւն , մէկին մէջ  
Զէքիէի դերը կը կատարէր Հերանոյշը , իսկ  
միւսին մէջ՝ Հրաչեան :

Այդ օրը Գասուլեաճեան Հերանոյշի հետ  
երթալով թուրքերուն մօտ , պաշտպանութիւն  
խնդրեց . անոնք ալ խստացան : Այդ ներկայա-  
ցումները կը տրուէին թանգարանի սրահին մէջ:

Կերկայացման իրիկունը , թանգարանի պար-  
տէղին մէջ , ժողովուրդը երկու մասի բաժնուած  
էր : Հայ , հրէայ և եւրոպացի հասարակութիւնը  
իմ կողմն էր , իսկ Թուրքերը՝ Գասուլեաճեանի:

— Մենք Հրաչեայ չենք ուզեր : Ամրանակ  
կը քաշենք վրան , եթէ բեմ ելլէ : Մենք

Հերանոյշ կ'ուզենք, էֆէնտի՛մ, Հերանոյշ :  
Հայք և Եւրոպացիք կը պատասխանէին .

— Դուք Թուրքերդ փոքրամասնութիւն կը  
կազմէք : Կառավարութեան դուռը ծառայող մէկ  
քանի գրագիրներէ զատ ուրիշ Թուրքեր չկան  
թատրոն յաճախող : Ուրեմն թատրոնը պահպա-  
նողը մենք ենք, և մենք կը ցանկանք տեսնել  
Հրաչեան : Թող ֆասուլեաձեան ստորագրէ “Ան-  
ձէլօյի” պայմանը . մենք դուրս կ'ելլենք թատ-  
րոնէն և երբ Հրաչեան ներկայացնէ թիղպէ,  
այն ատեն կուգանք զայն տեսնելու :

Հաւաքուած բազմութիւնը կարող էր թան-  
գարանի սրահին կրկնապատիքը լեցնել :

Այդ միջոցին ես կը հագուէի իմ սենեակս,  
իսկ Հերանոյշ իր սենեակին մէջ :

Վարագոյիրին բացուելու ժամն անցեր էր  
արդէն : Ժողովուրդը կը սուլէր և փայտերով կը  
զարնէր տախտակամածին, բայց վարագոյրը չէր  
բացուեր : Ֆասուլեաձեան, երկու ձեռքով գլուխը  
բռնած, շուարած, չէր գիտեր ինչ ընկելիքը :

Մայրս ու ամուսինս ինձ կը թախտանձէին .  
— Ազնիւ, Թուրք են, կարող են ատրա-  
մօրդ, Խղճա՛ փոքրիկիդ :

— Մայրիկ, այն բոպէին որ ես տեսարան  
եկայ, ա՛լ ձեզի չեմ պատկանիր : Ի՞նչ որ պա-

տաշէլու է՝ թող պատահի : Կտ'մ պիտի ստորա-  
գրէ և կամ պիտի թէմ ելլեմ:

Այդ բոպէին իսկ, ժողովուրդը ներս խու-  
ժեց : Ամէնուն ձեռքը գաւազան կար : Գտան  
ֆասուլեաձեանը :

— Շուտ ստորագրէ՛, թէ ոչ հիմա քեզ  
կը սպաննենք, ըսելով՝ ստորագրել տուին պայ-  
մանը և յանձնեցին ինծի :

Բայց ես առի և պատուեցի պայմանագրու-  
թիւնը, ըսելով ֆասուլեաձեանին .

— Ասկէց ետքը՝ պէտք չկայ որ այս թատ-  
րոնին մէջ ես խաղամ . բաւական է որ ստորա-  
գրեցիր :

Դուրս ելայ թատրոնէն :  
Թատրոնին մէջ մնացին քանի մը Թուրքեր:  
Այժմ ի՞նչ ընէի որ կարողանայի Աղրիա-  
նուպղոսյ մէջ ունեցած պարտքս վճարելով վե-  
րագառնալ Պոլիս :

Երկրորդ օրն իսկ, հրէայ թատերասէրները  
եկան զիս գտան և ըսին .

— Տիկին, կ'ուզենք առաջարկութիւն մը  
ընել, բայց չենք համարձակիր : Խնդրենք, ըսեք,  
կարելի չէ որ դուք մեզ չետ ներկայացում մը  
տաք սպանեօլ լեզուով :

— Բայց ես չեմ գիտեր սպանեօլերէն :  
— Մենք կուտանք ձեզ փրանսերէն փիէսը,

"Փօլ Ճօն", դուք կը ծանօթանաք բովանդակութեանը: Մենք գերը կը կարդանք սպանեօլերէն, դուք կը գրէք հայերէն: Գերին գիմացը կը գրուին բառերուն հայերէն բացատրութիւնները: Առաջին ներկայացումը կ'ըլլայ ի նպաստմբը գպրոցին. դուք կը ստանաք յիսուն ոսկի: Երկրորդ անգամ նոյն փիէսը կը խաղանք ի նըպաստ ձեզ:

Ո՞ւ բարեկամներս, լսեցէք, դատեցէք, թէ  
ի՞նչպիսի միջոցներով մենք պահպաներ ենք մեր  
գոյութեւնը:

Ընդունեցայ պայմանը : Տասնևինգ օրէն  
արդէն պատրաստ էինք : Փորձերը յաջող էին :  
Ներկայացման իրիկունը, տեղերուն գինը  
կրկնապատիկ նշանակուած էր : Հրէաներէն  
աւելի հայ ու Եւրոպացիք կային : Գասուլեա-  
ծեան ևս այդ իրիկուն ներկայացում պէտք է  
տար, բայց ժողովուրդ չըլլալուն պատճառաւ  
փակեց թատրոնը :

Բեմ ելայ թէ չէ, ձեռքովս յենուեցայ  
աթոռին։ Ար վախնայի որ վար չիյնամ յուզ-  
մունքէս։ Սիրտս սաստիկ կը դարնէր, բայց  
երեսէս բան մո պուած

Հ Յ Ա Յ Ե Խ Ի Մ Պ Ա Ր :

Հ Յ Ե Ա Ն Ե Բ Բ Կ Բ Պ Ա Դ Ե Խ Ի Մ Թ Է :

— Ա ն ի կ ա ա ն ս պ ա տ ձ ա ռ ա ռ ա ջ ու ց գ ի տ է ր

ս պ ա ն ե օ լ ե ր է ն . յ ա յ տ ն ի է ա ր տ ա ս ա ն ու թ ե ն է ն :

Երկրորդ թէ երրորդ արարուածին , կար  
յանդիմանական կտոր մը աղջկանս ուզգուած .  
երբ արտասանեցի ոգեղորութեամբ սա խօսքերը .  
“Ոի փարտօ՞ն տեմանտա , փարտօ՞ն , իժա տէզ  
նաթուրատա , քէ տոմադիս էլ բալօ , տելա  
վին կան սա էթէոնա , ի քէ խառվաթէս քօնէլ  
լաքառա տէ դու մատրէ , ծափահարութեան  
վերջ չկար :

Կրկնեցինք նոյն խաղը ի նպաստ ինձի և  
Այդ գիշեր ստացայ վաթսուն ոսկի զռւտ հա-  
սոյթ :

Գասուլեածեանի խումբը գէշ վիճակի մէջ  
էր : Ալէն իրիկուն թատրոնը կը բանային ու  
կը գոցէին առանց ներկայացման՝ ժողովուրդ  
չը լարուն պատճառով :

Աերջապէս Ադրիանուպոլսոյ աղաներէն սէկ  
քանին եկան տունս , աղաչեցին որ նորէն միա-  
նամ Գրասուլեածեանի կմթին : Ես առաջարկեցի  
եոկու ոսկի ամսական :

— Տիկին, ըստին, ի՞նչ կ'ըսէք: Ազատականերուն կուտան այդ գումարը: Միթէ ձեզի կը վարի՞ այդպիսի պայման դնել:

— Պարոններ, դուք չեք ուզո՞ր զի՞ւ  
կընալ : Մենք որքան որ շահելու ըլլանք, ըն-  
կերութիւնը միշտ պարտական պիտի մնայ : Փա-  
սովեածեան հարիւրին 15 փիէսին համար կը

ստանայ, 17ը իրեն, 15 կողը, 15 “աքսե-  
սուառնի”, 10 ոսկի ալ Հերանցը պիտի ստա-  
նայ. իսկ ես ոչինչ կը ստանամ և դեռ պար-  
տական ալ կը մնամ ամսական 10 ոսկի: Այս,  
աւելի լաւ է երկու ոսկի ամսականով ծառայեմ  
իրեն մօտ, որպէս զի գէթ ամէն ամիս 10 ոսկի  
պարտական չմնամ: Այսպէս՝ չեմ ընդունիր  
ընկերութիւն, այլ երկու ոսկի ամսական և մէկ  
նպաստ:

Փասուեածեան շատ հակառակեցաւ. բայց  
մարդիկը պնդեցին.

— Ա՛լ ի՞նչ կ'ուզես, չենք հասկնար: Եր-  
կու ոսկի՝ Հրաչեայ, դեռ նա՞զ կ'ընես:  
Վերջապէս՝ կրկին միացանք:

Մէկ-երկու շաբաթէն իմ նպաստս էր:  
Պիտի ներկայացնէինք “Կենդ և հաւատարմու-  
թիւն” Տեղերու գները կրկնապատկուեր էին:  
Բազմութիւնը այնքան էր, որ վալի փաշային  
որդոցն համար հազիւ կարողացանք աթոռ մը  
ձարել: Այդ գիշեր ևս ստացայ 85 ոսկի:  
Փասուեածեան, տեսնելով բազմութիւնը,  
կատղեցաւ.

— Ահա՛ ձեզի երկու ոսկի ամսական. հիմա  
Դուք հաշուեցէք թէ ամսական ի՞նչ կը ստանայ:  
— Եղբայր, միթէ քեզմէ կառնէ այդ  
դրամը, պատասխանեցին. միթէ մեղաւո՞ր է

ժողովուրդը որ կը յարգէ իր դերասանուհին:  
Յաջորդ շաբթուն, ֆասուեածեանի նպաստն  
էր: Սրահը (օթեակներ չունեինք) կէսէն աւելի  
պարապ էր: Զիս վիրաւորեց՝ ըսելով.

— Ժողովուրդը կողոպտեցիր:  
Տեսայ որ անկարելի էր այդ պարոնի օճա-  
խին մէջ գործել. ուստի առի ընտանիքս 1878ի  
մարտ ամսուն և եկայ Պոլիս հաստատուել:  
Մայրս հիւանդ էր. քաղցկեղ ունէր. չորս  
ամիս յետոյ՝ վախճանեցաւ.

Ի.

1877-78ի ձմեռնային “սէզօն”ը սկսանք ըն-  
կերութեամբ, Օրթագիւղի թատրոնին մէջ, իմ  
առաջնորդութեամբս: Ընկերուներս էին Մանուկ  
Սիսակ, Անտոն Ռշտունի, Մատթէոսեան, Քի-  
թապէնեան, Միշէլ Թօսպաթեան, Պէրպէրեան,  
Ակվագեան, Ադամեան, Կիւրեղեան, Ակբժոր  
Շամտանձեան, Հերանոյշ, ևն.

Բարեսիրաց ընկերութիւնը առանց վարձքի  
մեծ տուն մը դրաւ մեր տրամադրութեան տակ,  
ուր կը բնակէինք ամբողջ խմբով:  
Ունէինք ներքին կանոնագրութիւն և պա-  
հանուակ, որու մէջ պահ կը դրուէր մեր  
շեստի մնատուկ, որու մէջ պահ կը դրուէր մեր  
շահին հարիւրին տասը:

Այնպիսի սիրով էինք կապուած, որ կարող եմ ըսել թէ ընտանիքի մը անդամները չեն կրնար ըլլալ այնքան սիրով: Եթէ մէկին կօշիկը մաշած էր, ունեցողը անոր փոխ կուտար:

Ըսի արդէն թէ Օրթագիւղը այրած էր: Հայեր քիչ էին մնացած հոն, և թատրոնին կէսն իսկ չէին կրնար լեցընել: Ծատ օրեր դեմքէն կ'առնէի տասը կամ քսան փարա, ու մէկ կողմէն փորձերը կ'ընէինք, միւս կողմէն դպրոցի պարտէզին մէջ կերակուր կը պատրաստէինք, միջնարարին, կը նստէինք կ'ուտէինք, “Պէ՛չ, պէ՛չ, տղաք ի՞նչ պատուական կերակուր է,” ըսելով:

Ադամեանի և իմ նպաստներուն, թէպէտ գիները կրկնապատկուած կ'ըլլային, թատրոնը լեցուն էր: Ադամեան ընկեր չէր: Ամէն մէկ երկոյթի համար իրեն կը վճարէինք հարիւր Մուշ: Այդ պատճառաւ անոր նպաստին հասցերը ընկերութեան կը վերաբերէր:

“Սէզօնը վերջացաւ: Պահեստի գումարը բաժնեցինք: Իւրաքանչիւր անդամի բաւական դրամ ինկաւ, որով կարողացան իրենց պէտքերը հոգալ: Սիրով զատուեցանք իրարմէ: Ամուսինս Աղբիանուպոլիս գնաց գործով, իսկ ես տան մը մէջ նստայ՝ փոքրիկ Պերճիկիս չետ:

1878 յունիսին, Ոիսակ եկաւ ինձ մօտ.

— Գուն այսպէս կը սիրես ընկերներդ: Մեր նիւթական դրութիւնը շատ գէշ է: Քեզ համար հաց ես ձարեր, իսկ ընկերներուդ մասին չես մտածեր:

— Ես ի՞նչ կարող եմ ընել, Ոիսակ, գործ կայ և չե՞մ գործեր:

— Ի՞նչպէս թէ չկայ, Ոուսներով լեցուն է Աղբիանուպոլիսը: Այնտեղ կարելի է մեծ գործ տեսնել:

— Տղա՞յ ես: Անոնցմէ ի՞նչ օգուտ: Միթէ մենք կարո՞ղ ենք ոուսերէն ներկայացում տալ:

— Գրէ՛ ամուսնոյդ, թող գտնէ այնպիսի մարդիկ որ կարողանան խումբը վարձելով տանիլ այնտեղ: Մէնք կը ներկայացնենք անպատճառ վոտվիլ մը թուլբերէն լեզուով, որպէս զի կավոտիլ մը թուլբերէն գնել: Իսկ մնացեալ բողանակ թատրոն անունը գնել: Բոլոր ընմասը կը բազկանայ շանսօնէմներէ: Բոլոր ընկերներս կը ինգրեն որ այս գործը գլուխ հանես:

Գրեցի ամուսնոյս: Կարապետ Ասատուրեան ընկերանալով կարապետ Բանդիկեանի հետ, եկաւ գողիս խումբը վարձելու: Ինձ չետ կային եկաւ գողիս խումբը վարձելու: Պահ հային Աստղիկ, Սիրանոյշ, Գոհարիկ Շիրինեան, Մանուկիկ, Ոիսակ, Հոլաս, Զափրաստ, ևն.

Գացինք և սկսանք փորձերը:

Ես զիս չեզոք կը պահէի : Հացի համար  
բեմ պիտի ելլէինք : Փառք չէի սպասեր :  
Իմ երգերէս մէկ քանին Աստղիկը առաւ,  
մէկ քանին՝ Սիրանոյշը : Ես ալ թուբերէն լեզ-  
ով “Քմէն դժոհ աղջիկը” պիտի երգէի :  
Առաջին իրիկաւնը ներկայացուցինք վոտվիլ  
մը մէկ արարուածով : Յետոյ բեմ ելաւ Աստ-  
ղիկը : Երգեց թէ չէ, ծափահարեցին և ծաղ-  
կեփունջ մը նետեցին կուրծքին նշան առնելով :  
Ծաղկեփունջը փայտի վրայ էր շինուած, ինդ-  
ձին կուրծքը ծակեցաւ, և լալով ներս եկաւ :  
Յետոյ ելաւ Սիրանոյշ : Ծափահարեցին և  
ծաղկեփունջ մը նետեցին ստամոքսին : Աս ալ  
վերջացաւ :

Կարգը իմա էր : Հազիւ բեմ ելած, ուշադ-  
րութիւնս այն կողմն էր ուրկէ կը նետէին ծաղ-  
կեփունջը :

Երգս վերջացուցի : Ծափահարեցին թէ չէ,  
ծաղկեփունջը եկաւ, բայց ես զգուշացայ, և  
ինկաւ գետին սուբովս զարկի, ու գնաց թաւա-  
լեցաւ ժողովրդին մէջ, ուր նստած կային տրա-  
կոններու վաշտէն զինուորականներ : Ասոնք  
բարկացան ու գանգատեցան .

— Աս ինչ է. հա գերասանուհին ոտքով  
ետ կը դարձնէ մեր նուիրած ծաղկեփունջը :  
Ոստիկանապետը, տեսարան գալով, թարգ-  
մանի միջոցաւ ըստւ .

— Տիկին, ինչո՞ւ կ'ուզէք զինուորական-  
ները վիրաւորել :

— Պարո՞ն, ներեցէք, մաքէս իսկ չեմ  
անցըներ այդպիտի բան մը : Մեզ մօտ՝ ծաղկե-  
փունջը կուտան իբր գոհունակութեան և յար-  
գակի նշան . իսկ ձեզ մօտ չեմ գիտեր ի՞նչպէս  
է : Ասոնց ձեռքը՝ ծաղկեփունջը նշան առնելու  
գործիք է : Տեսէք, մէկ օրիորդին կուրծքը  
դակեցին, միւսին ստամոքսը ցաւցուցին . ես  
զգուշացայ, և ոտքովս ետ դարձուցի :

— Իրաւունք ունիք, տիկին, անոնք պար-  
տաւոր էին աւելի քաղաքավար ըլլալ, ըսելով  
շեռացաւ :

Երկրորդ անգամ բեմ ելլելուս՝ ծաղկե-  
փունջը սուրի ծայրն անցընելով ամենայն քա-  
ղաքավարութեամբ նուիրեցին :

Զօրականները կը ցանկային մուտք ունենալ  
քուլիսները : Մենք արգիլած էինք : Վերջապէս  
ոստիկանապետէն խնդրեցինք, և ան ալ երկու  
պահապան զինուորներ կանգնեցնելով տեսարանի  
զրան մօտ, արգիլաց անոնց մուտքը :

Մէկ ամիս այս պաշտպանողական դիրքը  
բոնելէ յետոյ, այլ ևս հանգիստ էինք : Դուռը  
պահապանը չկար, բայց ոչ ոք ալ չէր համար-  
ձակեր ներս մտնել :

Ես ամէն գիշեր “Քմէն դժոհ աղջիկը”

Երգելով ձանձրացուցի ժողովուրդը : Այսպէս  
որ բեմ ելած ատենս զիս չէին ծափահարեր :  
Սիրանոյշ, Աստղիկ, Գոհարիկ ունեին յաջողու-  
թիւն : Ես անտարբեր էի, բեմ կ'ելլէի որպէս  
զի թիւը լրանար :

Օր մը ընկերներէս ոմանք դացին գանգա-  
տելու թէ՝

— Հրաշեայի անունը չկայ ժողովրդին մէջ:  
Ան ամիսը կը ստանայ յիսուն ոսկի, իսկ մենք՝  
այսքան :

Բանդիկեան Կարապետը՝  
— Երաւունք ունիք, ըսեր էր :  
Ես լսեցի, և անմիջապէս հրաժարականս  
տուի, ըսելով .

— Մինչեւ տամնը չինգ օր կուտամ պայմա-  
նաժամ: Գտեք իմ տեղս ուրիշ մը, որպէս զի  
ցին՝ երեք օր ինձ կուտաք օրբեսթրը, ես ալ  
փորձեր կ'ընեմ ու կ'երգեմ քանի մը նոր երգեր:

Ըստունուցաւ պայմանս: Խսկոյն ամուսինս  
ուղարկելով Պոլիս՝ բերել տուի լաւ շանսօնէթ-  
ներ: Ոտուսերէն թարգմանել տուի աքմէն դը-  
գոհ աղջիկը, նոյնպէս՝ Շուպէրթի Մնաս

երբ այդ երգերով բեմ ելայ, սաստիկ ծա-  
փահարուեցայ: Կարծէք ժողովուրդը ինձմէ բան

մը կը սպասէր և լուռ կենալուս համար նեղա-  
ցեր էր:

Կրկնելու հրաւէր, ծափահարութիւններ ու  
անվերջ ծաղկեփունջեր կը տեղային: Շըջուն  
գոհարավաճառներ կային թատրոնին մէջ.  
անոնցմէ գնեցին գեղեցիկ մանեակ մը փոքրիկ  
գոհարներով զարդարուած և աղամանդակուռ  
մատանի մը ու ինձ նուիրեցին: Աերջապէս՝  
ոգեւորութիւնը անչափ էր:

Բանդիկեանը եկաւ ինձմէ ներողութիւն  
խնդրելու:

— Ոչ, ես չեմ կենար այլ ես չեմ ալ  
ուզեր որ դուք իմ պատճառաւս վասուիք:  
Պարոն մը կ'ուզէ վարձել թատրոնը, տուէք  
անոր. մտադիր է բերել Վարդովեանի օփե-  
րեթի խումբը:

Այդպէս ալ եղաւ: Տալով թատրոնը անոնց,  
մենք դուրս ելանք մէջէն:

Օփերեթի ժամանակ, ժողովուրդը ազատ  
էր քուլիսներուն մէջ ման գալու: Դերասան-  
ները և ուհիք ծանօթութիւն հաստատեր էին  
զօրականներուն հետ, և շատ անգամ միասին  
կ'ընթրէին: Օփերեթի խմբին մէջ կային Պէնկ-  
լեան, Մնակեան, Թրեանց, Սանձաք, Պէր-  
պէրեան, ևն: Դերասաննուհիք էին գարագաշ  
պէրեան, քանի դուրիշներ:

Պոլիս գառնալով՝ հաստատուեցայ Փերա :  
1879ին, 2մշկեան գալով Պոլիս, պայմա-  
նաւորուեցաւ Աղամեանի, Աստղիկի և Սիրա-  
նոցի հետ և ուղեւորուեցան կովկաս :

1880ի փետրուարին աղջիկ մը ևս ունեցանք  
և կնքեցինք Արմենուհի, անուամբ, երկու շա-  
բաթ յետոյ՝ սաստիկ տկարացաւ երեխան : Անձ-  
որուն ծանօթացեր էի Փերայի, Հրդեհի տարին :  
Երբ մայրս զիս քիչ մը տկար տեսնէր, անմի-  
ջապէս անոր մօտ կը տանէր : Զկար գերասան  
մը կամ գերասանուհի մը որ անոր ինամբներէն  
զուրկ ըլլար: Շատ շատերու թէ գիտութեամբ  
և թէ դրամով օգնած է : Անոր մահուան դամ-  
բանականը Խղմիրեանը խօսեցաւ, ըսելով “Մար-  
դասէր Քրիստոսի մարդասէր զաւակը մեռաւ  
այսօր” : Մեծ բազմութեամբ աղքատներ շրջա-  
պատած էին անոր դագալը և կուլային :  
Կայսեր խորհրդատու բժիշկն էր. Իառուֆ  
փաշայի հետ պիտի երթար գաղղիական ջրերը:  
Այդ պատճառաւ յանձնեց ամուսնոյս ամսական  
երեսուն ոսկի հաշուով դրամ, բաժնելու համար  
իր աղքատներուն, որոնք արդէն կը ստանան  
եղեր ամէն ամիս հացի և տան վարձքի համար:  
Հարուստ չէր : Մեռած ժամանակը տեսնուեցաւ  
թէ դրամ չունէր. իր անձը ապահովագրած էր

որպէս զի իր զաւակներուն կարենայ փոքր գու  
մար մը ձգել :

Հայ մարդ էր և հայ բանաստեղծ .

« Մի՛ ասեր երեւ արտօվ յուսահաս՝  
Ի՞նչ կարէ անել մրակ մի անհաս .  
Լէզենի անեղ զինուոր կը կազմեն .  
Երբ մէն մի մեղու չի դիմէ ի վարդ ,  
Թողու հոգի այլու , փերակն այն ատեն  
Տես ի՞նչ կը կազմէ : Հա՛յ երիտասարդ ,  
Դու կարես լինել հայրենեացդ էմմին  
Մի վէմ հիմնական , մի նեցուկ ուժզին .  
Դու են հայրենեացդ միայն պէտն նոզա՝ .

Վերանց ասուուր որ փօթիկ անհար  
Մի հաւ ևս մրան , եւ առեւն նրակայ  
Պէտ չունին նեզի , հա՛յ երիտասարդ :

Այս՝ այսպէս կը խօսէր Փէշտիմալճեան ,  
և ինքն ալ ժրաջան մեղուներէն էր :

1880ի աշնան գ. Արգար Յովհաննիսեանը  
եկաւ Պոլիս : Գալով ինձ այցելութեան , ծանօ-  
թացանք միմեանց : Շատ լաւ տպաւորութիւն  
թագանք միմեանց : Շատ լաւ տպաւորութիւն  
թագանք միմեանց : Պայմանաւորուեցաւ Գարա-  
թողուց վրաս : Պայմանաւորուեցաւ Գարա-  
թողուց վրաս : Մնակեանի հետ ու հեռացաւ  
Պոլսէն :

1880-81ին Օրթագիւղ “սէզօն” մը ևս ան-  
ցուցինք ընկերաբար, նոյն սիրով և նյոն պայ-  
մաններով, դարձեալ իմ առաջնորդութեամբս :  
մաններով, դարձեալ իմ առաջնորդութեամբս :  
Պատիրերուն և գերասանուհիներն էին Թոս-  
տիրասաններն, պատեան , Սիսակ , Պէրպէրեան , Մատթէսսեան ,  
պատեան , Սիսակ , Պէրպէրեան , Մատթէսսեան ,

Ալիքսանեան, Բերկիւլեան, Տիկ. Հէքիմեան,  
Օր. Հէքիմեան, Պ. Հէքիմեան, Վիլթոր. Շամ-  
տանձեան, Աշարոն Ատրունի, և ուրիշներ:  
Առանց ո և է միջադէպի՝ սիրով վերջացու-  
ցինք այդ “սէզոնն” ալ:

Թ.

1881ին Պոլիս եկաւ իշխան Ամատունին:  
Եկաւ մեր տունը այցելութեան, և խնդրեց որ  
ներկայացում մը տամ:

— Բայց ես խումբ չունիմ այժմ, իշխան,  
ոչ ալ թատրոն:

— Ոչինչ, ափին, ես կը վարձեմ թատ-  
րոնը, կը փակենք դռները, դուք կը ներկայա-  
ցինք ինձ համար:

— Շատ կը սիամիք, իշխան. ես մասնա-  
ւորի դերասանուհի չեմ: Այլ խնդիր է երբ կը  
այտարարուի և բազմութիւն ըլլար. վերնա-  
տունը միայն կ'ըլլայ երկու կամ երեք հոգի.  
որ ներկայացնեմ:

— Հապա ի՞նչպէս կարող եմ գիտնալ ձեր  
ուժը: Ես ի՞նչպէս տանիմ ձեզ:

— Ես չեմ խնդրեր որ զիս տանիք: Տարեք  
Մարինուարդը:

— Տիկին, խնդրեմ, Ճիշտն ըսէք. ո՞րն է  
ձեր “ամիկլուան”. մինչև այսօր չկրցի Ճիշտ տե-  
ղեկութիւն ստանալ այդ մասին: Մէկը կ'ըսէ  
թէ դուք լաւ “սուպրէթ” էք, միւսը կ'ըսէ թէ  
դուք “Էնժէնիւ-տրամաթիք էք, մէկ ուրիշը թէ  
առաջին դերեր լաւ կը կատարէք: Այս հարցը  
ինձ համար հանելուկ մը գարձաւ:

— Իշխան, թոյլ տուէք ինձ լուծել այդ  
հանելուկը: “Ամիկլուա” չկայ, կարգեր կան,  
պէտք է այդ կարգերէն անցնիլ. ես այդ կեր-  
պով ալ անցայ այդ կարգերէն: Առաջ կատա-  
րեցի փոքրիկ աղջկան, հրեշտակի դեր, ևն  
յետոյ “սուպրէթ”, յետոյ “կրիպէթ”, “Էնժէ-  
յետոյ” էնժէնիւ-տրամաթիք. ամենէն վերջը  
նիւն, էնժէնիւ-տրամաթիք. ամենէն վերջը  
բացարձակ առաջին դեր: Կ'երեայ թէ այն  
մարդիկ, որոնց տեղեկութիւն էք հարցուցեր,  
մարդիկ, մէկը սուպրէթի, միւսը՝ էնժէ-  
յետէ տեսեր է զիս “սուպրէթի”, միւսը՝ էնժէ-  
յետէ կը զայն գերի մէջ: Մինչև  
նիւնի, ուրիշները՝ առաջին դերի մէջ: Այժմ, եթէ  
“Էնժէնիւ-տրամաթիք” անցեր եմ: Այժմ, եթէ  
կայ պակասութիւն, այդ պիտի ըլլայ առաջին  
դերի մէջ:

Իշխանը ինձ հետ համաձայն չէր, վերջա-  
պէս համոզեցի զայն քանի մը օրինակներով.

— Եթէ ես չեմ անցեր այդ դերերը գործ-  
նական գործոցի մէջ, ի՞նչպէս պիտի կարողանամ  
ներկայացնել “Գամէլիազարդ” տիկնոջն կամ

“Քաթէրին Հովուարտի նման խաղեր։ Գերասանուհի մը կ'երթայ ուրիշ քաղաք մը, իրը “տէպիւ” կ'ընտրէ այդ կարգի խաղ մը, որուն մէջ ամփոփուած են բոլոր դերերը, ատով կարելի է չափել դերասանուհին, Եթէ ան բոլոր կարգերէն չէ անցեր և լոկ տրամաթիք դերասանուհի է, առաջին արարուածէն պիտի սկսի լաւ, և դուք չպիտի ստանաք այն՝ ինչ որ պէտք էր ստանայիք։ Կան դերասանուհիներ, որոնց կարողութիւնը չի ներեր “սուպրէթէն կամ “կրիզէթէն անդին անցնիլ, և անոնք կը մնան միշտ այդ դերերուն մէջ։

Վերջապէս՝ առաջարկեց 300 ըուպլի ամսական։ Ես ուզեցի յիսուն փոլ իմիշրիալ, այն պայմանաւ որ Մարի-Նոււարդին չետ ևս պայմանաւուեի։ Իշխանը ինձ հաւտացուց թէ երեք հարիւր ըուպլին կ'ընէ 50 փոլ իմիշրիալ։ Ես գաղափար չունեի ըուպլի արժէքին վրայ, և խաբուեցայ։

— Եթէ այդպէս է, իշխան, գրեցէք պայմանագրի մէկ օրինակին մէջ 50 փոլ իմիշրիալ և միւսին մէջ՝ 300 ըուպլի։

Պայման էի դրեր որ երեք խաղ իմ իրաւունքս է իրը “տէպիւ” տալ։

Իշխանը մեկնեցաւ։ Ես ալ սկսայ պատրաստութիւն տեսնել։



Տիկին ՀՐԱՅԵԼՅ

(Բոյր Թերեկա, 1882, Կովկաս)

Այդ միջոցին, Աստղիկ Տիրեքլէր-Արասիի  
փայտաշէն թատրոնին մէջ պիտի ներկայացնէր  
թուլքերէն լեզուաւ “Քաթէրին Հովուարտ”:  
որուն մասին շատ էի լսեր՝ Կովկաս երթաւէն  
ի վեր:

Տեսայ առաջին արարուածը միայն, և երբ  
գացի մնաս բարով ըսելու, Աստղիկ ինձ ըսաւ.

— Ազնիւ, Կովկաս կ'երթաս, քեզ անկեղծ  
խորհուրդ մը տամ. չչամարձակուիս “Քաթէրին  
Հովուարտ”, խաղալ: Ես անով Աստղիկ եղայ:  
Գուն սարսափելի կը գլորուիս:

Այս խօսքերը շատ յանդուգն էին:

— Քանի որ այդպէս է, ես ալ կ'երթամ  
անով քու աստղդ խաւարեցնելու: Եթէ գուն  
խնդրէիր այդ խաղը չներկայացնել, առ ուրիշ  
բան էր:

Եւ հրաժեշտ տալով հեռացայ:

Երկրորդ օրն իսկ ճամբայ ելանք դէպ ի  
Կովկաս: Ինձ հետ էին Գալաքաշ քոյլեր,  
Մարի-Նուարդ, Մնակեան, Սանձաքճեան:  
Հասանք թիֆլիս թէ չէ, արդէն երեցաւ  
որ պէտք էր հոսանքի հակառակ մաքառիլ:  
Ժողովուրդը Աստղիկը կ'ուզէ տեսնել, իսկ  
“Կօմիտեանը գժգոհութեան պատճառով հեռա-  
ցուցեր է Աստղիկը և բերեր է Հրաչեան:

Խշանը կը ինդրէ.

— ԶՐՈՒԱՅ որ “Քաթերին Հովուարտ” տաք իբր “տէպիւ: Ժողովուրդը արդէն գրգռուածէ, բոլորովին կը լարուի ձեզ դէմ:

— Եշխան, ես պայման եմ կապեր ձեզ չետ, ինչ որ կը ցանկամ “այն կուտամ” իբր “տէպիւ: Ես ”Քաթերին Հովուարտ” պիտի տամ:

— Բայց, տիկին, մենք բերեր ենք ձեզ Թիֆլիս, ամսական պիտի վճարենք, չենք ցանկար որ դուք տապալուիք:

— Տուէք թուղթ մը, այս բոպէիս կը ստորագրեմ, թող մեր պայմանագրութիւնը չեղեալ համարուի. Բայց իբր “տէպիւ”, կը ներկայացնեմ “Քաթերին Հովուարտ” և այնպէս կը հեռանամ:

Եշխանը պայմանը ջնջելու հաւանութիւն չտուաւ, և նշանակեցին “Քաթերին Հովուարտ”:

Առաջին փորձին, իշխանը նստած կը սպասէ որ ես փորձեմ ինչպէս որ հարկ է, բայց ես կ'արտասանեմ շատ կամաց և կը փորձեմ հանգիստ,

Երկրորդ արարուածին, յանկարծ տեսեմ դադաղ մը բերին բեմին վրայ: Եշխանը կը ստիպէ զիս որ անպատճառ մտնեմ դադաղի մէջ և այնպէս փորձեմ: Ես մերժեցի:

— Բայց, տիկին, չէ կարելի այդպէս, պէտք է տեսնենք թէ ի՞նչպէս դուրս կուգաք դադաղէն կամ թէ ի՞նչպէս կ'արթննաք:

— Իսկ եթէ լաւ դուրս չգամ դադաղէն կամ լաւ չարթննամ, դուք ի՞նչ կարող էք ընել ինձ:

— Մենք ձեզ ցոյց կուտանք թէ ի՞նչպէս պիտի կատարէք:

— Եյն ատեն աւելորդ էր գալ Պոլիս: Այստեղ կան օրիորդներ. կարող էք զանոնք վարժեցնել և բեմ հանել այս դերերուն մէջ:

Երկրորդ օրը գերասանները լուր բերին թէ առաջին երեք կարգ աթօռները բռնած են այն անձինք որ օրոշած էին զիս սուլել:

Կարող էք երեւակայել իմ դրութիւնս: Ժողովուրդը զիս չի ճանչնար: Ծատ կարելի է ամենաառաջին գերասանութիւն եմ կամ թէ վերջինը, թող տեսնէ զիս մէկ մը, եթէ արժանի եմ ծափահարէ, իսկ եթէ արժանի եմ սուլուելու՝ թող սուլէ երկրորդ ներկայացման: Եթէ “Քաթերին Հովուարտ” տեղ ուրիշ իազ մը ըլլար և զիս համեմատէին եւրոպացի կամ ուսուցերասանութիւններու հետ՝ որոնց մասին գաղափար անգամ չունէի, այն ատեն կարելի է բոլորովին հեռանայի Թիֆլիսէն: Բայց զիս կը համեմատէին Ասողիկին հետ: 97ին եկեր էր Ասողիկ Թիֆլիս, և ժողովուրդի սիրելին էր դարձեր, ժողովուրդը չէր ուզեր որ անոր կադարձ, ժողովուրդը չէր ուզեր որ անոր կատարած զիրը ուրիշ մը կատարէ: Արդ, Պոլսոյ

Խոռմբին մէջ Աստղիկ կը կատարէր երկրորդ  
գերեր, իր ամենամեծ գերերն եղեր են "Փա-  
րիզու աղքատներ"ուն մէջ Ալիտայի գերը, և  
"Կողոպտուած փօստ"ի մէջ Ժաննայի գերը. իսկ  
"Քաթէրին Հովուարտի"ի մէջ՝ Քենետի գերը.  
Ըստ Կովկասեցւոց՝ Աստղիկ պէտք էր կատարէր  
Քաթէրինի գերը, իսկ ես՝ Քենետինը: Ես  
Պոլիս Ներկայացուցեր եմ այդ խաղը և կատա-  
րեր եմ Քաթէրինի գերը. Աստղիկ եթէ ուզեր  
իմ ըրածս կրկնել, ինչքան ալ նմանցներ. չէր  
կրնար յաջողիլ իմ ըմբունած կերպովս խաղալու:  
Այս մտածումն էր ինձ ուժ տուողը: Եթէ այս  
մարդիկը, կ'ըսէի ինքնիրենս, չպիտի կարողա-  
նան զանազանել մայրը մօրուէն, այն ատեն  
արդէն աւելորդ էր այստեղ ներկայացում տալ:

— Դուք պէտք է ներկայացումէն առաջ  
Խմբագրատունները երթաք, կ'ըսէին ինձ:

— Ես անաշառ քննադատութիւն կը ցան-  
կամ, "տէպիւ"էս առաջ ո՛չ մէկուն հետ չեմ  
ուզեր երթալ ծանօթանալ:

Հասաւ ներկայացման իրիկունը: Դերասա-  
նուհիները սենեակս գալով ձեռքերնին սրտիս  
վրայ կը դնէին.

— Զարմանալի՞ բան, կ'ըսէին, այս կիսը  
չի փախնար:

Ճիշտն ըսելով, այդ բոպէին ես Պարհա-

մարհէի հասարակութիւնը, ինքնիրենս կրկնելով.  
— Ի՞նչ գաղաններ են ասոնք, զիս սաստիկ  
կը յուզեն, չեն ձգեր որ հանգիստ գերիս վրայ  
մտածեմ:

Եթէ քիչ մը վախ զգայի, աչա այն ատեն  
դաստ կորսնցուցած էի. վայ անոր, որ, նոյն  
հոկ եթէ ունի հանձար իր մէջ, քաջութիւն  
չզգար կուռելու.

Բեմ ելայ թէ չէ՝ ծափահարեցին:  
Առաջին արարուածին վերջը՝ շատ փոքր  
ծափահարութիւն ստացայ:

Երկրորդ արարուածի գերեզմանի տեսարա-  
նին, գագաղէն իջնելով, մինակ, ծունը դրած,  
կ'ազօթէի, լսելով կթէլվուտի ձայնը որ զիս  
կը կանչէր. «Քաթէրին», ես ինքզինքս մոռցայ,  
և փոխանակ ըսելու՝ «Այսրեն եմ», ըսի՝ «Հս»  
եմ»: Երկրորդ անգամ կանչեց՝ «Քաթէրին».  
ա՛լ ետ չառի իմ "հոս" և կրկնեցի «Հոս եմ».

Յաջորդ օրուան թերթերէն մէկուն մէջ  
կար յօդուած մը այսպիսի բովանդակութեամբ.  
«Այժմ կը հասկնանք թէ պոլսեցին "հոս" բառը  
ստեղծեր է միմիպյն "Քաթէրին Հովուարտ"ի  
գերեզմանի տեսարանին համար: Այս գերեզ-  
մաննոցին մեռելային խորութեանը մէջ այնքան  
ազգու էր այդ "հոս"ը: »

Երկրորդ արարուածի վերջը՝ քիչ մը աւելի

Էր ծափահարութիւնը : Խոկ երբորդին , երբ  
գահը բարձրանալով լսեցի Էթէլվուտի ձայնը ,  
դարձուցի գլուխս՝ սարսափած՝ դէպ ի այն կողմը  
ուրկէ ձայնը եկեր էր , ստուգելու համար թէ  
չեմ երազեր , ուրուական չէ , աչա այն ատեն  
լսեցի որ առաջին կարգերուն մէջ կ'ըսէին .

— Մենք չենք կարող սուլել ասիկա , ետ  
առէք սուլիչները :

Այդ բոպէին՝ ծափահարութիւնը տեւեց  
առնուազն տասը վայրկեան , ժողովուրդը կը  
ցանկար որ ես գլուխ տայի : Բայց ես չէի  
կարող , դիմախաղը կը կորչէր : Խշանը դրսէն  
եկաւ քուլիս .

— Տիկի՞ն , կ'ըսէր , գլուխ տուէք , այդպէս  
չէ կարելի :

Տեսնելով որ ձար չկայ , թողնելով գերս՝  
դէպ ի քուլիսը պատասխանեցի .

— Պէտք է ժողովուրդը սովորի . այս միջո-  
ցին դերակատարը չի կրնար գլուխ տալ , և  
պէտք չէ զինքը խանգարել :

Գառնալով ժողովրդին՝ սառն գլուխ տուի :

Վարագոյրը փակուելէն յետոյ՝ չեմ գիտեր  
քանի անդամ զիս կանչեց ժողովուրդը :

Մեր բոլորիս սիրելի Սունդուկեանցը ներս  
գալով .

— Կեցցէք , ակկի՞ն , ըսաւ , մենք չենք  
կարծեր :

Խշան Ամատունիին նուիրեցին պսակ մը ,  
ան ալ բեմի վրայ գլուխս անցուց :

Ներկայացումէն յետոյ , ժողովուրդը Խըռ-  
նուած էր դրան առջև , և “կեցցէներով զիս  
ձանապարչ գրաւ դէպ ի տուն :

Երկրորդ ներկայացումը ըլլալու էր Մարի-  
նուարդին “տէպիւն” , “Ուր առանց համարման”՝  
Մէկ քանի հոգի յօսերնին զրեր էին այդ ներ-  
կայացման վրայ . կ'ուզէին նուարդով զիս տա-  
պալել : Բայց չյաղողեցան : Ժողովուրդ շատ  
քիչ կար :

Երրորդն էր “Մայրական Ուր” . այդ ներ-  
կայացման ստացայ թարգմանչի կողմէն ադա-  
մանդեայ ապարանջան :

Ափսոս որ այդ ժամանակուան թերթերէն  
ոչ մէկը պահած եմ :

Ապա ներկայացուցինք “Քոյր Թէրէզա” .  
Լրագիրները գովեստով խօսեցան իմ մասիս :  
Բայց այդ գովեստները ինձ համար կարե-  
ւորութիւն չունեին . “Հրաշալի կատարեց ,  
Հիացուց հանդիսականները” . ևն . ինձ համար  
կարեոր էր արհեստական քննադատութիւն :

“Քոյր Թէրէզայի առթիւ Արձագանիի մէջ  
գտայ յօդուած մը ուր կար քննադատութիւն :

Բայց քննադատը սխալ ճանապարհ էր ցոյց տուեր : Վեր ի վերոյ կը յիշեմ որ գրողը մէն մի տեսարանի համար գովեստներ ընելէ յետոյ՝ „Տիկնող խաղի ամէն մէկ պատկերը սալօններ կարող էր զարդարել ,“ ևն . կ'ըսէր՝ “Բայց չենք դիտեր թէ ինչո՞ւ տիկինը զոհեց քոյրը մօրը , մինչդեռ պէտք էր մայրը զոհուէր քրոջ” :

Յաջորդ օրը , Պ. քննադատը իր մէկ ընկերոջ հետ եկան ինձ մօտ : Քարեւեցին ինձ : Ես սկսայ ծիծաղիլ :

Պարոնը իր բարեկամին ըստ :

— Ես չըսի՞ թէ տիկինը կը ցանկայ որ ոչ մէկ րիծ ցոյց չտան իր խաղի վրայ , և շարունակ գովեն զինքը :

— Ո՛չ , պարո՞ն , պատասխանեցի , ներեցէք ինձ . ես կը սիրեմ քննադատութիւնը , բայց պէտք է լուրջ ըլլայ : Ես ութի՞ օր , ութը գիշեր խաղը ձեռքս աշխատեր , սիրսս մաշեցուցեր եմ թէ ո՞րը պէտք է զոհուի . ես դիտեմ թէ քոյրը պիտի զոհուի՝ ըստ հեղինակին : Աչա՛ խաղը : Հեղինակը դրեր է քոյր Ճուղէփիփայի բերանը սա խօսքերը .

— Բայց դուք միանձնուհեաց գայթակղութեան պատճառ կը դառնաք :

— Ես ոչ մէկուն բան մը չեմ ըստ , և անիկա բան մը չգիտեր ուսկից կ'եղրակացնէ

այդ խօսքերը : Եւ վերջապէս եթէ կար գժուար կէտ մը , որու վրայ շատ եմ աշխատեր , այդ այն կէտն էր որ քոյրի զգեստներուն մէջ պէտք էր մայրը պատկերացնել դէմքիս վրայ : Մայրը յուզմունքէն մահամերձ է . ատիկա խայտառակութիւն է քոյրին համար : Հապա ինչո՞ւ չի կրնար յաղթել մահուան : Բնական օրէնքին պէտք է գլուխ ծռենք : Երբ վախ կը զգանք , առանց ուզելու մեր գոյնը կը փոխուի :

— Ես չեմ լսեր քոյր Ճուղէփիփայի խօսքերը : Այդ միջոցին բարեկամիս մէկը զիս պիւֆէն հրաւիրեց գաւաթ մը քոնեաք խմելու . կ'երեայ թէ այդ պատճառաւ չեմ լսեր :

— Այս , գուք մէկ գաւաթ քոնեաքով կը փշէք մեր ութ օրուան աշխատանքին վրայ և կը փճացնէք զայն : Եթէ կ'ուղէք քննադատութիւն գրել , ուսումնասիրեցէք խաղը այնպէս ինչպէս ես կ'ուսումնասիրեմ : Գուք , առաջին քննադատներէն մէկը , այն ատեն գերասանի քննադատներէն մէկը , այն ատեն գերասանի նիկա : Երբէք կարելի չէ քննադատութիւն գրել այդպէս , “Հրաշալի կատարեց , կամ վատ կատարեց” : Ո՛չ , պէտք է արտըուած առ արտարեց : Ո՛չ , պէտք է արտըուած առ արտարեց : Հետեւիլ և ցոյց տալ գերերու բնաւորութիւնները : Այն ատեն գերասանն ալ կարող է

իմանալ որ դուք գիտակցութեամբ կը գրէք ձեր  
քննադատութիւնը :

— Բայց , տիկին , այն ատեն գոնէ երկու  
օր պէտք է քննադատութիւն մը գրելու համար:

Այն օրէն յետոյ այդ պարոնը ոչ մէկ  
քննադատութիւն գրեց , զգալով օր ծանր է  
քննադատի պաշտօնը և պէտք է աշխատի երկու  
օր : Երանի՝ յանձն առնէր այդ աշխատութիւնը:  
Կարող էր օգտակար ըլլալ գերասաններուս :

Քիչ յետոյ , իշխան Ամատունիին և իմ  
յարաբերութիւններս աւրուեցան : Իշխանը զիս  
չէր ծանչցած : Խնդիրը մինչև այն աստիճան  
հասաւ օր ժողովուրդը միջամտեց : Պ. Ա. Հրամ  
Մութափեանց , ազնիւ երիտասարդը , որ արդէն  
քոմիթէին անդամներէն էր , իշխանին պաշտօնն  
ստանձնեց բեմի վրայ :

Յետոյ գերասանները գրեցին թուղթ մը  
իշխանին . “Մենք ձեզ հետ պայման կնքեր ենք .  
Եթէ դուք չըլլաք , բոլորս ալ կը գագրինք  
գործելէն” :

Իշխանը կրկին եկաւ տեսարան : Բայց իմ  
իշխանս Պ. Մութափեանն էր . անկից կը ստա-  
կըսէի :

Ճ.

Պիտի ներկայացնէինք “Խելքից պատու-  
հաս” , որու մէջ պիտի կատարէի օրիորդի մը  
գերը , զոր նախընթաց տարիները կատարեր էր  
Սիրանոյշ : Այդ խաղը մեծ պատրաստութեամբ  
են հաներ բեմ՝ չեմ գիտեր քանի անգամ  
փորձելով : Այժմ այդ գերը ես պիտի կատա-  
րէի՝ միայն երկու փորձով : Բայց այդ օրերը  
Արմենունի ազգիկո շատ տկար էր , և բժիշկ-  
ները յոյս չեն տար : Զաւկիս քովը նստած ,  
կուլայի :

Յանկարծ տեսայ որ տասը բոպէ ուշացեր  
եմ փորձին : Խսկոյն կառք նստայ և հասայ  
թատրոն , աչքերս ուռած և կարմրած :

Քառորդ ժամ մը հազիւ ուշացեր էի , բայց  
արդէն առաջին արարուածը փորձեր և երկրորդն  
էին սկսեր :

Խնդրեցի գագրեցնել փորձը և նորէն սկսիլ:  
Պ. Զմշկեան , որուն դեռ ծանօթ չէի ,  
հրամայեց օր շարունակեն փորձը : Այն ատեն  
յայտարարեցի թէ՝

— Ես չեմ ներկայացներ եթէ նորէն չփոր-  
ձէք : Ուշացեր եմ քառորդ մը . հինգ ոռպէն

իմ իրաւունքս է, տասը քոպէի համար ալ կարող էք տուգանք նշանակել :

Վերջապէս եկան քոմիթէի անդամներէն մէկ քանի պարոններ և սկսանք փորձել առաջին արարուածէն :

Կերկայացման իրիկունը, իշխանը պատրաստեր էր ապարանջան մը տիկին Զմէկեանի համար :

Երկրորդ թէ երրորդ արարուածը վերջանալուն, ժողովուրդը սաստիկ կը ծափահարէր և կը պոռար՝ “Հրաչեա՛յ”:

Զիս կանչեց Սարդարեանը (բեմայարդար) : Գացի բեմ, տեսայ Պ. և տիկին Զմէկեանը որ ձեռք ձեռքի բոնած կը սպասեն որ ես գամ, ձեռքէս բոնեն և իմ անուամբս ստանան ապահանը :

Այդ որ տեսայ, ետ դարձայ, սենեակիս նիդը դրի և նստայ : Ժողովուրդը շարունակ կը ծափահարէր, “Հրաչեա՛յ” պոռալով : Բայց անոնք չէին համարձակէր վարագոյրը բանալ, ծափահար որ զիս կը կանչէր ժողովուրդը . Եթէ ես ստանային ապարանջանը :

Վերջապէս, կէս ժամ այդ դրութեան մէջ կենալով, չկարողացան բեմէն ստանալ ապա-

րանջանը և զայն ստացան իրենց զարդասենեակին մէջ :

Զմէկեան, բարկացած կը պոռար .

— Այս, խեղճ ժողովուրդ, երեք հարիւր-ներ տուէք, ի տես հրաւիրեցէք, պատուեցէք, և անոնք ձեզ անպատուեն :

— Պ. Զմէկեան, մի մոռնաք որ ազգասի-րաբար խաբուած ենք : Յիսուն փոլ իմիկը թալի տեղ կը ստանանք 300 րուպլի :

Նպաստիս նախընթաց օրը, յօդուած մը լոյս տեսաւ “Զմէկեան” ստորագրութեամբ, չեմ յիշեր Արձագանի թէ Մեղուի մէջ . “Քանդե-ցէք, քանդեցէք ձեր տուները, պարոն թա-տերասէրներ . կը լսենք որ Հրաչեայի նպաստի համար զրամ կը ժողվեն : Քանդուեցէք, լե-ցուցէք անոնց գրպանը, որպէս զի վաղը երթա-լով Պոլիս՝ իրենց հոսոս եղբայրներուն մօտ ծաղրեն ձեզ և ծիծաղեն ձեր վրայ” :

Բայց այդ յօդուածը՝ փոխանակ ինձ վե-սելու՝ կարծէք գրգուեց ժողովուրդը :

Ես կ'ուզեմ որքան կարելի է քիչ խօսիմ այդ մասին : Թատրոնէն մինչեւ մեր տան առաջ (Ալտատսկի պաղար) յաղթական կամարներով (Ալտատսկի պաղար) յաղթական կամարներով կ'էին : Թատրոնի օթեակները դափ-ղարդարեր էին : Թատրոնի օթեակները դափ-ղարդարեր էին : Մեծ ըն-նեայ պատկներու մէջ առնուած էին : Մեծ ըն-դունելութիւն, շատ ընծաներ :

Ամենաթանկագին նուէլներէս մէկն էր գա-  
մառ-քաթիպայի հատորը , բէալական ուսում-  
նարանի աշակերտներէն տրուած , ձոխ թաւշեայ  
կազմով . կազմի վրայ կար ծիծեռնակ մը ոսկիէ,  
բերանը բոնած ունէր նամակ մը , որուն վրայ  
դրուած էր . “Մեր սիրելի տաղանդաւոր դերա-  
սանուհւոյն՝ քոյրիկ Հրաչեային” : Մէջը կար  
յիսունէ աւելի ուսանողներու ստորագրութիւն :  
Նոյնպէս ստացայ ոռու լեզուաւ ոտանաւոր  
մը , նէվաքի ստորագրութեամբ :

Ստացայ պսակ մը որու մէջտեղէն կախուած  
էր ոտանաւոր մը .

« Այսօր ամենօն միացան  
Վառուած սիրովն բանեարիդ ,  
Գոչենի ձայնենի միաբերան՝  
Կեցցե՛ս դու , զա՞րդ բատերիդ .  
Այսօր ամէն մի ուսանող  
Առաքելով ենզ « կեցցէ » ,  
Եր յարգանաց փոխարէն  
Այս պրաակը նրւիրէ :  
Դէ՞ն , լնդունիր դու մեզնից .  
Թէւ նեզ է մեր լնծան ,  
Բայց բդիսած նա մեր սրտից ,  
Եւ յարգանաց է նրանի :  
Տիկիսու կլասիկական գիտեալիոնի հայ ուսանողներից ,  
1882 , 28 Յունվարի ”

Ներկայացումէն յետոյ , զարդարեր էին  
բազկաթոռ մը դափնեայ տերեւներով , և բե-

րելով բեմի մուտքին առջել , կ'ուզէին զիս հոն  
նստեցնել :

Ես լսելով այդ պատրաստուած բազկաթոռի  
մասին , չեռացայ հակառակ կողմէն : Այնտեղէն  
ալ՝ ժողովուրդը , զիս բարձրացնելով , նստեցուց  
շքեղ բաց կառքի մը մէջ :

Վերջապէս՝ արք և կանայք , ծերք և ման-  
կունք զիս հասցուցին տունս պէնկալեան կրակ-  
ներով և “կեցցէ” ներով :

Բարձրացայ պատշգամը : Ժողովուրդը չէր  
ուզեր ցրուիլ : Յայտնեցի չնորհակալութիւնս և  
ինդրեցի որ իրենց մէջէն կազմեն պատգամաւո-  
րութիւն , ես ալ զանոնք մէկ մէկ բաժակ թէ-  
յով հիւրասիրելով յայտնեմ զգացումներս :

Այն գիշերը՝ յօդնած՝ մէկ կերպ անցուցի :  
Զեմ գիտեր որբան ժամանակ էր անցեր ,  
երբ որ մը եկան ինձ ըսելու յառաջիկայ ներ-  
կայացման մասին որ Վարդանանց տօնի առթիւ-  
տեղի պիտի ունենար :

— Քեզ պիտի սուլեն , և արդէն կողովնե-  
րով կաղամբ , ևն են պատրաստած՝ թատրոնին  
մէջ ծաղկեփունջի տեղ նետելու համար :

Ես զարմացայ թէ ինչո՞ւ զիս այդքան բար-  
ձրացուցին և ինչո՞ւ այժմ կ'ուզեն գետին  
զարնել :

Ամուսինս կը խնդրէր որ դառնանք Պոլիս և  
չմասնակցիմ այդ ներկայացման :

— Այդ անկարելի է, Անտոն, անոնք զիս  
կայարանին մէջն ալ կարող են խայտառակել:  
Թիւ և ժամանակէն առաջ թատրոն էին գացեր:  
Ես քիչ մը ուշացայ, և երբ ներս մտայ դոնէն,  
պատահեցայ նրբանցքին մէջ ուսանող Պ. Մու-  
թափեանին: Յաւ յայտնեցի թէ մինչև այդ օրը  
ուսանողութիւնը չէ պատուեր զիս պատգամա-  
լորութեամբ մը, որպէս զի կարողանայի շնոր-  
հակալութիւնս յայտնել.

— Ի՞նչպէս, տիկին, մենք լսեր ենք որ  
դուք մեզ դէմ դժգոհ ըլլալով, ըսեր էք.  
“Թքեր եմ ուսանողութեան վրայ”:

— Եւ դուք չէք կրցեր հասկնալ որ ատիկա  
թշնամութեամբ սարքուած զրպարտութիւն է:  
Ատոնք դերասանական էնթրիկներ են:

Այդ օրը պիտի արտասանէի Գամառ-Քա-  
մէջ պատրաստուեր էին տեսնելու թէ ուսանո-  
ղութիւնը ի՞նչպէս զիս պիտի ողջունէր կա-  
զմամբներով:

2եմ գիտեր ե՞նչ հրաշք էր, բեմ ելած

ատենս՝ այդ կաղամբները ծաղկի և ուսանողաց  
գլխարկներու փոխուեցան :

Աերջապէս, ինն ամսուան “սէզօնը աւար-  
տեցինք և դարձանք Պոլիս:

Բայց իմ առողջութիւնս լաւ չէր: Արդէն  
կոկորդէս արիւն էր հոսեր անգամ մը:

Փէշտիմաճեան արգիլեց ինձ բեմ ելլել:  
Զըկուեցայ բեմէն, բեմն ալ ինձմէ զըբ-

կուեցաւ:

Ո՞վ էր մեղաւորը: Հայ հասարակութիւնը:  
Եթէ ան ժամանակին զիս ուղարկած ըլլար ար-  
տասահման՝ գէթ վեց ամսուան համար, ես  
շատ շուտ ձեռք պիտի բերէի այն ինչ որ տասը  
տարուան ուժ սպառելով ինքնօգնութեամբ եմ  
ձեռք բերեր:

Այս, մեր ձեռքէն չեն բռներ, ուզեր են  
որ ազգասիրաբար քիչ ոռձիկ ընդունինք, բայց  
ազգասիրաբար չեն նայած մեր զգեստներուն  
վրայ, պահնջած են որ մեր զգեստները ըլլան  
մետաքսէ, որպէս զի անոնց Խշրոոցը մինչև  
հասարակութեան ականջը համնի:

### ԺԱ:

1883 յունուար 30ին ունեցանք մանչ զաւակ-  
մը. Շուշեցի Սահակ Աբրեսեան եղաւ կնքա-  
հայր, և անոնը դրինք Հայի:

Այդ թուականէն քանի մը ամիս յետոյ դէպք մը պատահեցաւ : Թէկ այդ դէպքը բեմի հետ կապ չունի , բայց կեանքիս այն յիշատակներէն է որ խորապէս տպաւորուած են սրտիս մէջ :

Գիշեր մը , ամուսինս ու ես բերայէն զամփիա կ'երթայինք՝ Մաղաքեանին տեսութեան: Բերայի մէջ կան կարմիր լապտերներով զարդարուած տուներ . . . Պալլբ-Փազար փողոցէն ատեննիս , տեսայ որ կարմիր լապտերաւոր տան մը առջև կանգնած էր սիրուն հայմարդ մը , երկար հասակով , սպիտակ կարճ շալվար հագած , երկար կարմիր գոտին մէջքը պլլած : Գէսին վրայ “չալմա” ունէր փաթթած , ոտքերը՝ սպիտակ կարճ գուլպաներ որ կարմիր կապերով բռնուած էին : Հագած էր նոր մուշակ , իսկ ձեռքը բռնած ունէր դաշոյն մը : Ոտքերով կը զարնէր այդ դրան , ու կը հայհոյէր . . . Բացէք , կը պոռար , թէ չէ կը կոտրեմ Ան իմ ձեռքէս չ'աղատիր :

Ամուսինս բաժնուելով անմիջապէս անոր մօտը գացի և ձեռքը բռնելով . . .

— Եղբայր , ըսի , օգնէ՛ ինծի , մինակ եմ , ինձ եղբայր և ընկերացիր :

— Ի՞նչպէս , քոյրիկ , դուն լոյն կընես

ինձ հետ խօսելու : Աչքիս վրայ , ես քեզ կը հասցնեմ տեղդ :

Շարունակելով մեր խօսակցութիւնը , ձամբայ ընկանք : Ամուսինս ալ մեր ետեւէն կուգար :

— Քոյրիկ , քանի Պոլիս եմ եկեր , ոչ մէկ հայ կին լոյնք չէ ըրեր հետո ընտանեբար խօսելու , ոչ մէկը ինձի “եղբայր” չէ ըսեր :

— Անունդ ի՞նչ է :

— Պետրոս ծառադ :

— Քաւ լիցի : Ո՞րտեղացի ես :

— Աշեցի :

— Ո՞րտեղ կը ծառայես :

— Մաքսատան մշակներէն եմ , և տասնապետ :

— Ամուսնացած ես :

— Քոյրիկ , ես քո հոգուն մատաղ , այո՛ : Ես երեսուն տարեկան եմ , տասնհինգ տարիէ ի վեր ամուսնացած : Տասնըորս տարի է Պոլիս կը գտնուիմ :

— Պետրոս , եղբայրս , թոյլ տուր ինձ քեզ յանդիմանել , Մուշ գտնուող քրոջս փոխարէն : Ի՞նչ գործ ունէիր այդ դրան առջև դաշոյնը ձեռքդ : Ամօթ չէ՞ քեզի : Ափսոս չէ՞ քրոջս : Ես մինակ չեմ , աչա ամուսինս , ծանօթացի՛ր : Ես մօտեցայ , որպէս զի թէ՛ խայտառակութենէ և թէ՛ վտանգէ քեզ ազատեմ :

Պետրոս ծանօթացաւ ամուսնոյս . յետոյ ,  
սկսաւ հեծկլտալով լալ .

— Ներէ՛ , քոյրիկ , ներէ՛ , եղբայր . եթէ  
ես ունենայի առաջուց այսպիսի քոյրիկ , չէի  
փանար : Կը խոստանամ վաղը գրել , բերել  
տալ կինս , վարձել փոքրիկ սենեակ մը և ապրիլ  
անոր հետ :

— Կեցցե՛ս , Պետրո՛ս , կեցցե՛ս , եղբայրս .  
իմ տունս Հայոց եկեղեցոյ փողոցը , թիւ 13 .  
Երբ բանի մը պէտք ունենաս , եկուր գտիր զիս :

Հասանք Մաղաքեանի դրան առջև : Պետրոս  
քանի մը անգամ ձեռքը կուրծքին զարնելով  
շնորհակալութիւն յայտնեց և հեռացաւ :

Քիչ ժամանակ յետոյ , Հայերս պիտի ընտ-  
րէինք Ամենայն Հայոց Կաթողիկոս : Այդ ընտ-  
րութիւնը 1884ին էր : Լսեցինք թէ դրամով  
քուէ կ'առնէին ու կը ծախէին :

Մեր ազգը սահմանադրութիւն ունէր , բայց  
դեռ ժողովուրդը պատրաստուած չէր իբր սահ-  
մանադրական ապրելու : Այնպէս որ անիկա  
կրկին կը կառավարուէր ամիրայական ձեռվ : Կը  
բերէին թուղթ մը , “ստորագրէ” այստեղ կ'ըսէին .  
կը ստորագրէին քուէթուղթը : Գիտակցութիւն  
ունեցողներն ալ կը ծախէին իրենց քուէն :  
Այն , սահմանադրութիւնը մեր ժողովրդի

ձեռքը այն էր ինչ որ է սուրը հինգ տարեկան  
երախայի ձեռքը :

Պէտք էր պատրաստել ժողովուրդը :  
Գացի մաքսատուն , գտայ Պետրոսը , հրա-  
փրեցի մեր տունը . եկաւ :

— Պետրոս , ըսի , գուք միշտ կը կրկնէք  
թէ “Մենք Լուսաւորչայ ոչխարներն ենք” , այն-  
պէս չէ . լաւ , գիտէք ի՞նչ ըսել է այդ խոսքը .  
այսինքն Լուսաւորչայ զուրպաններն ենք , անոր  
զօրքին մեռնիմ . թող ան մեզ զուրպան ընէ :  
Այդ Լուսաւորչայ ամոռը եջմիածին է : Այժմ  
նստողը Լուսաւորչայ փոխանորդն է : Այժմ  
թափուր է այն գահիը : Երեսփոխանք պիտի  
ընտրեն այդ գահին արժանաւոր փոխանորդ :  
Փոխանորդողը կը կոչենք կաթողիկոս :

Յետոյ հասկցուցի իրեն թէ ինչ է սահմա-  
նադրութիւնը և թէ ի՞նչ վասաներ կը հասցնէ  
մեզի մեր ժողովրդին տղիտութիւնը և անտար-  
բերութիւնը դէպ ի քուէտուփիը :

— Պետրոս , ըսի ի վերջոյ , ինծի մի՛ հար-  
ցըներ թէ ո՞վ կ'ուզեմ կաթողիկոս տեսնել :  
Այժմ գնա՛ , ինչպէս որ ես քեզ հասկցուցի ,  
գուն ալ պատրաստէ՛ ընկերներդ : Քեզ տեսնեմ ,  
Պետրոս , գործդ պիտի ձգես , թէ՛ մաքսատան  
Պետրոս , գործդ պիտի ձգես , թէ՛ մաքսատան  
մէջ և թէ՛ պանդոկները՝ պիտի հասկնես բո-  
լոր ծանօթներուդ , և պիտի պատրաստես զա-

Նոնք : Քուէարկութեան միջոցին , մեծ բազմութեամբ պիտի գտնուիք եկեղեցին , պիտի հսկեք քուէտուփին որպէս զի զեղծում չգործուի :

Հասաւ համագումարի օրը :

Պետրոս եկաւ ինձ ըսելու թէ իրենց փափածն էր Ներսէս Վարժապետեան : Իմ ընտրելիս ալ Վարժապետեանն էր :

Գացինք Գում-Քափուի Սայր-Եկեղեցին ուր ըլլալու էր քուէարկութիւնը :

Ժողովրդին ընտրեալ դասակարգը հրաւիրած էր դասը : Երեսփոխանք և եպիսկոպոսունք Եկեղեցւոյ մէջտեղը նստած էին , և մեծ շրջանակով մը փակել տուած էին ատեանը :

Եկեղեցւոյ բակը և մուտքին առջև հազարոր ժողովուրդ կար : Գուռը չէին բանար :

— Ի՞նչպէս ընենք , կը հարցնէին :

— Կոտրեցէք դռները , մեր եկեղեցին ժողովական է : Անոնք իրաւունք չունին ձեր դէմ դռները փակելու :

Ըսի այս խօսքերը և բարձրացայ գրասեղանի մը վրայ :

Ժողովուրդը սոսկալի կերպով ոգեսորուեցաւ և սկսաւ խմբուիլ վանդակափեղկ զրան առջև : Ժողովուրդը իր մէջէն պատգամաւորութիւն ընտրեց , մտաւ շրջանակին մէջ , և հսկեց քուէ-

Պետրոս տարաւ յաղթանակը :

Վարժապետեան ընտրուեցաւ :

Այդ առթիւ թղթակցութիւն մը կար Սեւու Հայոսութեանքի մէջ , ուր ըսուած էր թէ “Կառապաններու սիրուհի կին մը կ'առաջնորդէր ժողովրդին” :

Այդ “Կառապաններու սիրուհին” , ես էի :

## ԺԲ.

Ամուսինս օսմաննեան ծխախոտի բէժին մոտածառայութեան , և տեղափոխուեցանք Գավալա :

Ժողափը կար պանդոկ մը , որու անունն էր Պէլվիւ : Այդ պանդոկը դատարկել տալով հաստատուեցանք այնտեղ :

Երջանիկ էի : Շատ կը սիրէի ամուսինս , ու կը սիրուէի անկից : Զաւակներս առողջ էին : Իմ առողջութիւնս ալ հետզհետէ կը լաւանար : Գիշեր մը , ամուսինս և ես նստած էինք պատշգամը :

Երկինքը պայծառ էր , և լուսնի տասնեւ հինգը : Սպիտակ ծովի սպիտակ ջուրը կարծէք միակտուր գոհարի էր փոխուեր : Հիացած կը նայէինք հեռուն , շատ հեռուն : Հիացած կը նայէինք հեռուն , շատ հեռուն : Յանկարծ դարձայ ամուսնոյս շնորհակալութիւն յայտնեցի :

— Այդ ինչու համար , Ազնիւ :

— Ասոր համար որ ես երջանիկ եմ : Կ'ըսեն  
թէ երջանիկ մարդոց շապիկը գեղ է դժբաղդ-  
ներուն , բայց թէ երջանիկ մարդ գտնել կա-  
րելի չէ : Ես երջանիկ եմ : Ուրեմն ձարուած է  
գեղը :

— Դուն քեզ աչք կուտաս : Այնքան կ'ըսես  
որ վերջապէս դժբաղդութիւն մը կը պատահի :  
Ուրախ տրամադրութեամբ քաշուեցանք մեր  
սենեակը :

Կէս գիշերէն յետոյ , երազիս մէջ տեսայ  
սիրելի մայլս :

— Ազնիւ , ըսաւ , ինչու ես քնացեր .  
Հայկ թիֆօէ բռնուած է :

Յանկարծ արթնցայ :

— Անտոն , ելիր , մայրիկս երազիս մէջ ինձ  
ըսաւ թէ Հայկը թիֆօէ բռնուած է . Ճրագը  
վառէ . երթամ զաւակս տեսնեմ :

— Քնացի՞ր . ի սէր Աստուծոյ , ինչե՞ր կը  
հնարես :

Գացի քովի սենեակը : Վարձկան կինը կը  
խոկար , իսկ որդիս՝ սաստիկ տաքութեան մէջ՝  
կը զառանցէր :

Անտանելի տանջանքներ կրելով մէկ ամիսն  
անցուցինք :

Բժիշկն ըսաւ .

— Այժմ երախսան աղատած է , բայց գեռ  
թոյլ է : Այստեղ օդը չ'օգներ , և անիկա կրնայ  
նորէն տկարանալ ուրիշ հիւանդութեամբ մը :

Ալ մնալ անկարելի էր : Յաջորդ առաւօտն  
իսկ ձամբայ ելանք :

Պոլիս հասայ թէ չէ ես ալ տկարացայ :  
Փէշտիմալճեան եկաւ և յայտնեց ինձ թէ  
ջերմ ունիմ , այն ալ գէշ տեսակէն :

Այդ օրը , ամուսինս , տիսուր տրամադրու-  
թեամբ երթալով րէժի , մոռցեր է թանկագին  
իրերը հետը տանիլ դրամարկղի մէջ պահելու :  
Պիտի ձաշէր ուրիշի մօտ : Մեր տան ծառայող-  
ները ինձ հետ Պոլիս էին դարձած : Նոյն օրն  
իսկ , Գավալայի մեր տունը գողեր մտնելով  
տարեր են ամէն բան , թանկագին ապարան-  
ջաններ , օդեր , գոհարեղէններ , արծաթեղէն-  
ներ , ինչպէս և ինձ նուէր տրուած Գամառ-  
քաթիպան : Հետո ունէի ժամացոյց մը շղթայով  
և ապարանջան մը : Ուրիշ ոչ մէկ յիշատակ չէր  
մնացեր ժողովրդէն . բոլորը կողոպտեր էին :

Քանի մը ամսէն ամուսինս ալ տեղափո-  
խուեցաւ Պոլիս , և Հաստատուեցանք Բերա :

Սառա-Պէրնար 1890ին պիտի գար Պոլիս և  
պիտի տար շարք մը ներակայացումներ : Այդ  
լուրը լսելով , ես զիս գէշ զգացի : Կը կարծէի  
թէ ինչպէս քրիստոս տաճարը մտնելով դուրս

Էր ըրեր Փարիսեցիները , նոյնը պիտի պատահէր ինծի , ես ինքնինքս դուրս պիտի վանէի թատրոնէն : Ծատ էի լսեր Սառայի մասին : Ծատ անգամ պատմեր էին թէ անիկա Մարկրիթ Կօթիէի դերին մէջ , առաջին արարուածին բեմ կ'երևայ՝ գէր երիտասարդ կին , և հետզհետէ նիշարնալով՝ վերջին արարուածին կը դառնայ կմախք մը :

Ես կը զարմանայի որ եթէ ան գէր է , ի՞նչպէս կարող է մարմինը նիշարացնել : Ինչ որ կ'ըսէին՝ չէի հասկնար : Ծատ կ'ուզէի տեսնել : Եւ հիմա որ առիթը պիտի ներկայանար , կը վախնայի , զիս գէշ կը զգայի :

Ազդարարութիւնները փակցուցած էին պատերուն վրայ : Ազդարարութեանց վրայ գծուած էր անձոռնի դլուխ մը , կրնամ ըսել՝ ձիւաղի դէմք մը , տակն ալ գրեր էին Սառա-Պէրնար :

Առաջին ներկայացումն էր “Գամէլիազարդ տիկին” :

Չէի հաւատար աչքերուս : Այս այն կի՞նն էր որու մասին այնքան լսեր եմ : Ի՞նչպէս պիտի ներկայացնէր այս կինը , որ իր ձիւաղային դէմքով կարենար հմայել հասարակութիւնը , պատկերացնելով Մարկրիթը :

Աերջապէս հասաւ այդ ցանկալի օրը :

Հինգ ոսկի էր մէկ օթեակի գինը : Ես շատ նեղ գրութեան մէջ էի :

Ամուսինս ինձ կ'ըսէր .

— Ազնիւ , քսան ոսկի ալ ըլլայ , տոմսակ ա՛ռ : Ի՞նչ ընենք , տե՛ս անգամ մը : Դուն մի՛ մտածեր թէ մեր կարողութենէն բարձր է ատիկա : Ամէն օր չէ :

Բայց ես գիտէի որ իրաւունք չունիմ ծախսել այդ հինգ ոսկին :

Չէի կարող երթալ “Փարթեր” , քանի որ չէի գիտեր թէ ինծի ի՞նչ կը պատահի : Կ'ուզէի որ ոչ զիս տեսնէ , և ես ալ ոչ մէկը տեսնեմ

Ամուսինս գնաց գործին , ես ալ հագուելով ելայ փողոց՝ առանց գիտնալու թէ ուր կ'երթամ :

Քայլերս ուղղուեր էին գէպի թատրոնի կողմը :

Յանկարծ աչքիս հանդիպեցաւ պատին փակցուած ազդարարութեան վրայի ուրուականը :

Եկայ թատրոնին առջեւ անցուդարձ ընել : Թատրոնի կապալառու Յոյնը , որուն շատ տարիներէ ի վեր ծանօթ էի , ձեռքէս բռնեց .

— Տեկին Հրաշեայ , ի՞նչ ունիք :

— Պարոն Եանքօ , պարապ օթեակ կայ :

— Ինչո՞ւ քիչ մը առաջ չըսիք : Ոչ մէկ

Հատ մնացած է : Եթէ կ'ուղեք , ձեզ տամ երկու  
“Փօթէօյլ”:

Այդ միջոցին , եկաւ պարոն մը գանգատե-  
լու թէ իր օթեակը փոխեր են և ուրիշ մը ու-  
ղարկեր են :

Կապալառուն , առնելով անոր ձեռքէն չու-  
ղած օթեակին տոմսակը , ինձ տուաւ .

— Առէք , տիկին , ըսաւ , թող ան նորէն  
սպասէ իր ուղած օթեակին :

Ուզեցի վճարել : Բայց մերժեց .

— Ի՞նչ , ձենէ՞ ալ դրամ ստանանք :

Ըսորհակալութիւն յայտնելով հեռացայ :  
Ներկայացումը պիտի սկսէր ժամը 8ին : Բայց  
ժամը 6ին արդէն օթեակիս խորը նստած էի :  
Հասաւ վարագոյրը բարձրանալու ըոպէն :

Սառան տեսարան եկաւ :

Աստուած իմ , ի՞նչ կը սպասէի , ի՞նչ տես-  
նեմ : Ճիւաղ չէ : Ընդհակառակն շատ համակրելի  
է և կանոնաւոր դիմագծեր ունի : Բայց իմ  
գիտցած Մարկրիթս չէ : Հմայիչ ձայնով կը  
խօսի : Հրաշալի էնժէնիւ տրամաթիք մըն է :  
Հատ լաւ ներկայացուց : Բայց ես մնացի մութը  
և չկարողացայ լուսաւորուիլ :

Տուն հասանք թէ չէ , առի խաղը , և  
սկսայ կարդալ : Ահա այն տաեն լուսարանուե-  
ցաւ հարցը : Տեսայ որ Սառա-Պէրնար , ջնջելով

գերէն երկու նկարագիրը , պահած էր մէկը ,  
այն է արամաթիքը : Ըստ հեղինակին , մենք  
պիտի տեսնէինք առաջին արարուածին մէջ կեղ-  
տու կինը . եւ այն ատեն պիտի կարողանայինք  
նկատել տարբերութիւնը երրորդ արարուածի  
Մարկրիթէն : Կաթիլ մը սէր զտեց , մաքրեց  
Մարկրիթը : Այնպէս որ ա՛լ ոչ մենք կը  
այդ կեղտու կինը , այնպէս որ ա՛լ ոչ մենք կը  
տեսնենք , ո՛չ ինքը կը ճանչնայ առաջուան  
Մարկրիթը : Հեղինակը կ'ըսէ՝ “Ակրէ զանիկա ,  
և ան պիտի մաքրուի ինչպէս բիւրեղ” :

Սառա առաջին արարուածէն էր սկսած  
երրորդի Մարկրիթը : Այն ատեն եկայ այն  
եղրորդի Մարկրիթեան թէ տիկին Սառան կ'երեայ  
եղրակացութեան թէ տիկին Սառան կ'երեայ  
թէ չուգելով իր անձը յոդնեցնել , այդպէս էր  
ըրած , կամ ըսած էր թէ զոլսեցիք ոչինչ կը  
հասկնան , անոնց համար աս աւ շատ է :

Բնական է , այս և այն կողմէ հարցումներ  
կ'ըսէին թէ ի՞նչ է իմ կարծիքս : Բարեկամնե-  
րէս մէկ երկուքին ըսի կարծիքս .

— Սառա չներկայացուց ամբողջ խաղը :

— Ի՞նչ կ'ըսէք , տիկին , այդ արդէն չա-

փաղանց է :

Բայց իմ կարծիքս ոչ ոք կարող էր փոխել :  
Սառան տեսած օրէս՝ վագրիկ անկիւն մըն  
պիտի տուի Հայոց թատրոնին մէջ : Գիտէի  
այժմ որ փարիսեցի չեմ :

“Գամելիազարդ տիկին” էն յետոյ . Սառա  
ներկայացուց “Ատրիէն Աթբուվրէօր” . ի՞նչ ըսել  
այդ աննըման Ատրիէնի համար . առաջին արար-  
ուածէն մինչև վերջինը հրաշալի էր . իմ կար-  
ծիքովս , քանի Սառա-Պէրնարը կ'ապրի ու կը  
ներկայացնէ , այդ իր ստեղծագործած Ատրիէնը  
ուրիշ ոչ պէտք է համարձակի ներկայացնել .  
իսկ գալով “Թօսպանին , երեք արարուած սքան-  
չելի էր , ”Ատրիէնի հաւասար . բայց չորրորդ  
որովհետեւ առաջին երեք արարուածները բնա-  
հինգերորդը՝ “Եֆէքտաներու դպրոցին :

## ՃԳ.

Պ. Պետրոսեան , Պ. Տօնապետեանի հետ ,  
Պոլիս եկաւ : Այդ ժամանակ ես կը բնակէի  
Եօղուրտճի-Զէշմէսի ամարանոցը : Ինձ մօտ գա-  
լով՝ առաջարկեց երթալ Թիֆլիս : Բայց ես  
մերժեցի , պատճառ բռնելով տկարութիւնս :  
Առաջարկեցի տանիլ տիկին Սիրանոյշը :

Ան ինձ պատասխանեց :

— Ի՞նչ կ'ըսէք , տիկին , ես չեմ կարող  
տիկին Սիրանոյշը տանիլ առաջին դերերու հա-

մար . Թիֆլիսեցին վարժ չէ գանիկա առաջին  
դերերու մէջ տեսնելու :

Համոզեցի զինքը թէ անկից լաւը կարելի  
չէ գտնել Պոլսոյ մէջ :

Աերջապէս , Պ. Պետրոսեան հաւանեցաւ  
տանիլ տիկին Սիրանոյշը : Բայց Սիրանոյշ չէր  
ուզեր երթալ : Զգերը սաստիկ գրգռուած էին :  
Տկար էր : Համոզեցի Սիրանոյշը Ընդունիլ պայ-  
մանը :

— Քայլքայուած զիղերդ պիտի վերակեն-  
դանանան , եթէ դուն կրկին մտնես սապարէզ :

Տիկին Սիրանոյշ և Պ. Պետրոսեան գացին  
Թիֆլիս :

Թէև ես քաշուած էի բեմէն , բայց միշտ  
կը հետեւէի Անթուանի “Ազատ թատրոն”ին վե-  
րաբերեալ քննադատութիւններուն : Կը կար-  
դայի , կը պատկերացնէի մտքիս առջև մեր  
բեմը , և կ'ըսէի .

— Ժամանակ է “Էֆէքտ” ներու դպրոցը  
կործանելու :

Գիշեր ցորեկ կը մտածէի այդ մասին , փոր-  
ձեր ալ կ'ընէի :

1893ին , Պ. Արքահամեան Թիֆլիսի քոյի-  
թէի կողմէն գալով Պոլսու , ինձ մօտ եկաւ , և  
ինգրեց անպատճառ իմ մասնակցութիւնս :  
Ես նախ ըսի թէ ինձ համար անկարելի է :

Խնդրեց ինձ յայտնել թէ ո՞քանով կարող  
էի երթալ : Պատասխանեցի՝ “Առնուազն 600  
ըուպլի ամսական” :

Ան ինձ ոչինչ ըսելով՝ հեռագրեր է թիֆ-  
լիս : Երբ ստացեր է հեռագրի պատասխանը  
թէ՝ “Համաձայն ենք”, եկաւ անմիջապէս զիս  
գտաւ .

— Կ'ընդունին ձեր պայմանը, ըստ, ուրիշ  
առարկութիւն ունիք :

Ես շատ գէշ զգացի զիս : Տասներկու տարի  
յետոյ, կրկին պիտի կնքէի պայմանագրութիւնն  
Կոկորդի տկարութենէս կը վախնայի : Կոկորդս  
այդ միջոցին իրաւ է թէ չէր ցաւեր, բայց  
ձայնս կարուած էր :

“Դարրնոցապես”ի Քլարան սկսայ ուսում-  
նակիրել Պոլսէն :

Հազիւ անցեր էր երկու օր, արդէն կո-  
կորդս սկսաւ ցաւիլ :

Ճար չկար, պէտք էր ճամբայ ելլել :

Պ. Աբրահամեանց Պ. Ալիքսանեանի հետ  
ալ բանակցութեան էր մտած :

Պ. Ալիքսանեան եկաւ ինձ մօտ .

— Տիկին, ըստ, դուք միշտ եղած էք  
անկեղծ . կը խնդրեմ, նորէն եղէք, և սա հար-  
ցումիս ալ պատասխանեցէք անկեղծութեամբ :

Արդեօք ես ընդունելութիւն կը գտնեմ Կով-  
կասի մէջ :

— Դուք շատ զարմանալի հարցում մը  
կ'ուղղէք : Ես ի՞նչպէս կարող եմ գիտնալ :

— Ո՛չ, դուք գիտէք իմ կարողութիւնս,  
ուստի ըսէք :

— Աչաւասիկ ըսեմ: Եթէ դուք պիտի ներ-  
կայացնէք այնպէս ինչպէս այսաեղ, վստահ եղիք  
որ ընդունելութիւն չէք գտներ, բայց դուք  
դեղերասան էք, լուրջ կ'ուսումնասիրէք ձեր դե-  
րերը ինչպէս որ պէտք է, ես վստահ եմ որ  
այն ատեն ընդունելութիւն կը գտնէք : Պ.  
Մնակեանն ալ այսաեղ՝ քանի մը գաւաթ կոն-  
ժելով բեմ կ'ելլէ ու կը պոռայ կը կանչէ .  
Ժուղը հասարակութիւնը գոհ կը մնայ անկից  
թուղք հասարակութիւնը գոհ կը մնայ անկից  
ալ, ձենէ ալ . բայց հօն նոյն բանը չէ . Պ.  
Մնակեան հօն շատ լաւ կ'ուսումնասիրէ իր  
գերերը, անիկա հօն լաւ գերասան է :

Այս խօսքիս վրայ, Պ. Ալիքսանեան, վեր  
կենալով տեղէն .

— Ո՛չ, տիկին, ըստ, չեմ գալ :

Շատ ստիպեցի որ գայ . բայց մերժեց :  
Պ. և տիկին Պիննէմէճեան, Աբրահամեան  
և ես՝ երեք պաւակներով՝ մտանք շոգենաւ :  
Խնդրեցի Պ. Պիննէմէճեանէն որ Արմանի գերը

բերէ ինձ մօտ , որքան որ կարելի է շոգենաւի  
մէջ՝ օգնեմ իրեն պատրաստելու :  
Տիկին Պիննէմէճեան ըստ .

— Ո՞չ , պէտք չկայ , Որուբէ՞ն . ինծի ըսեր  
են թէ ինչպէս որ գիտէք , այնպէս ալ կը ներ-  
կայացնէք : Ուրիշի խորհուրդ մտիկ մի՛ ըներ :  
Ստիպուեցայ ըսել որ իրաւունք ունին , սիսա-  
լեր եմ :

Հասանք Թիֆլիս : Պ. Սարդարեան առաջին  
անգամ եկաւ զիս տեսնելու : Անոր առաջին  
խօսքերը եղան .

— Ինչո՞ւ եկաք : Ինչ անուն որ ունէիք  
տասերկու տարի առաջ , այժմ պիտի կորսնցը-  
նէք : Լրագիրները արդէն ձեր դէմ են գրած  
թէ՝ “Մեղ հարկաւոր էր Մնակեան և Ալիք-  
սանեան , մեղ հարկաւոր էր գերացոյց և ոչ  
Հրաշեայ : Տաներկու տարի տունը մնալով ար-  
դեօք յառաջդիմե՞ց տիկինը որ 300ի տեղ 600  
պիտի ստանայ :”

Կարծեմ այդ յօդուածը տպուած էր Ար-  
ձագանի մէջ : Սաստիկ բարկացայ Սարդար-  
եանին դէմ :

— Եթէ այդպէս է , զիս ինչո՞ւ կը կանչեն :  
Այո՛ , ինչ անուն որ ունէր թողած նախկին  
Հրաշեան , այժմու Հրաշեան պէտք է կործանէ  
զայն : Ի՞նչ էր առաջուան Հրաշեան . ի՞նչ էինք



Տիկին ՀՐԱԶԵՅՅ  
Գամելիազարդ տիկին , 1882. (Կովկաս)

բոլորս : Մենք գիտէինք որ վարագոյրը փակուե-  
լու պահուն եթէ գեղեցիկ պատկեր մը ցոյց  
տանք՝ արդէն պիտի ստանանք ծափահարութիւն։  
“Էֆէքտ”ներու գերակատարներ էինք : Երբեմն  
կը շինէինք ոսկի օղակներ , բայց իրարու կցե-  
լով շղթայ շինել չէինք կարող : Այո՛ , անկցի՛  
“Էֆէքտ”ներու հին դպրոցը : Ես պիտի ներկա-  
յացնեմ այժմ նոր դպրոցով :

— Բայց քեզ չեն հասկնար , թոյլ կ'ըլլաս ,  
“Էֆէքտ”ներու քովը կը կորչիս :

— Ի՞նչպէս թէ չեն հասկնար , ժողովուրդը  
չէ կարող գիտնալ թէ ի՞նչպէս պիտի ներկայա-  
ցընենք որ լաւ ըլլայ . բայց երբ կը տեսնէ  
լաւը , անմիջապէս կը զանազանէ գէշէն : Աչա՛ ,  
մէկն ալ դուն ես որ գաղափար չունիս իմ լսած  
դպրոցիս վրայ : Ա՛ռ սա գերը , և յուշէ՛ ինծի :

Սկսայ փորձել մէկ երկու կտոր՝ բնական  
դպրոցով : Սարդարեան եկաւ ձեռքերս համբու-  
րելու

— Ներեցէ՛ք , տիկի՞ն :

— Բայց այժմ գնա՛ , որովհետեւ սաստիկ  
յուզեցիր զիս : Ի՞նչ քաղաք է աս , որ երբ գամ ,  
անպատճառ պէտք է կոուելով բեմ ելլեմ :

Քօմիթէն ինձ առաջարկեց երկու թէ երեք  
օրէն բեմ ելլել : Ես չընդունեցայ :  
Պիսնէմէժեաններուն առաջարկեց : Անոնք

Ընդունեցան “Երկու Որբեր”ու մէջ երեալ :  
Ես նորէն դիմեցի տիկին Պիննէմէճեանին .  
— Գէշ կ'ընէք , ըսի . կը ներկայացնէք “Եր-  
կու Որբերը , այնպէս ինչպէս Պոլիս : Ատիկա  
լաւ չ'ըլլար ձեզ համար : Աւելի լաւ է չըն-  
դունիք և պատրաստուիք լաւ խաղի մը մէջ և  
յետոյ բեմ ելլէք :

— Իթէ այժմ բեմ չ'ըլլենք , ամսական ալ  
չպիտի ստանանք :

— Բայց , տիկին , այս միջոցիս՝ գէթ ինձ  
համար՝ զրամի հարց չկայ , այլ պատռոյ :

Ինչ որ է , ներկայացուցին :

Յաջորդ օրը՝ “Դարբնոցապետոի փորձն էր  
նշանակուած : Գացի թատրոն : Լսեր էի թէ  
դերասաններն ալ հակառակ են իմ 600 բուպի  
ամսական ստանալու և պիտի նային ինձ խորժ  
աչքով :

Զիղերս սաստիկ գրգուուած էին երբ գացի  
փորձի : Առաջին արարուածի վերջը , դերա-  
սանները սկսան ձեռքս համբուրել : Ես սաստիկ  
կուլայի :

— Տիկին , կ'ըսէին , բայց դուք ինչո՞ւ  
այսքան տարի տունը նստեր էք : Գացէք Մոս-  
կուա , Փեթերպուրկ :

Տասներկու տարի յետոյ երբ առաջին ան-  
գամ բեմ ելայ , սաստիկ ծափահարեցին , բայց

աչքերս միմնցան : Կրթընեցայ դրան , և առանց  
ծափահարութիւններուն ուշ դնելու՝ ինքնիրենս  
ըսի .

— Ինչո՞ւ կը վախնամն Միթէ այս այն տեղը  
չէ ուր ես ինքզինքս միշտ աւելի ազատ եմ  
զգացեր քան կեանքի մէջ :

Տրորեցի աչքերս , հաւաքեցի ուժերս և  
ուղղակի նայեցայ ժողովրդին : Յետոյ ընդունե-  
ցայ ինձ մատուցուած ծաղիկներով լեցուն  
զամբիւղը :

Այլ ևս գերիս մէջն էի :

Առաջին արարուածէն յետոյ , Պ. Սարդար-  
եանը եկաւ մօտս .

— Շուտ , տիկին , ըսաւ , ժողովուրդը ձեզ  
բեմ կը կանչէ :

Ելայ բեմ :

Տեսայ որ ընկերներս էին որ բեմի վրայ  
կը ծափահարէին զիս՝ մատուցանելով դափնեայ  
պսակ :

Ընորհակալութեամբ ընդունեցայ :

ԺԴ.

Նկարիչն իր մահութեան կամ ասպարէզէ  
քաշուելէն յետոյ , կը թողու ընդ միշտ իր  
նկարը հասարակութեան առջև , հեղինակն իր  
գրքերը , բանաստեղծն իր բանաստեղծութիւն-  
ները . իսկ գերասանը ոչինչ կը թողու , բաց ի  
քանի մը քննադատական յօդուածներէ որոնցմէ  
միայն ապագան պիտի կարողանայ գաղափար  
կաղմել գերասանին վրայ :

Թող ներուի ինձ ուրեմն 1893ի շրջանին  
Մրագիներու հրատարակած յօդուածներէն մէկ  
քանին այստեղ յիշատակել :

Արձագանք , թիւ 112 , 26 Սեպտ . 1893

“Ամսոյս 24ին , տիկին Հրաչեայ ներկայացրեց  
արքունական թատրոնում ժորժ Օնէի “Գարբնո-  
ցապեալը” դրաման :

“... Գալով գերակատարներին , մենք կը  
սկսինք տիկին Հրաչեայից : Բնութիւնը միան-  
հուն ամէն բան , գեղարուեստի քրմու-  
շնորհ (grâce) , մի փոքրիկ բաց միայն թողնե-  
րաւական աղդու և գրաւիչ է երբ տիկինը կա-

մացուկ , վաղաքշանօք կամ թէ շշուկով է  
խօսում : Իսկ երբ ըստ պահանջման դերին ,  
հարկ է համարում բարձրացնել ձայնը ու և է  
ոգեսրութիւն կամ զայլոյթ արտայայտելու հա-  
մար , այն ժամանակ ցաւելով պէտք է ասել որ  
ցանկալի տպաւորութիւնը չէ գործում . . . Բայց  
թողնենք ձայնը , ո՞վ է մտածում դրա մասին  
երբ նայում ես նրա դիմախաղին (Փէտա) և շար-  
ժուածքին : Մարդ իրօք յափշտակւում է այդ  
դուածքին : Հազիւ պատահել է մեզ տիեզե-  
րիմախաղով : Հազիւ պատահել է մեզ աստիճանի  
բահուչակ գերասանների մէջ այդ աստիճանի  
գգայուն և հոգեբանօրէն խորին կերպով արտա-  
դայուած դիմախաղ : Յօնքերի , աչքերի , շըր-  
յայտուած դիմախաղ : Յօնքերի , աչքերի , շըր-  
յայտուած դիմախաղ : Կիրիւր տեսակ փոփոխութիւլը , բո-  
թունքների հարիւր տեսակ փոփոխութիւլը ,  
պէտքար մի գգացումից դէպ ի միւսն անցնելը ,  
մարդկային հոգոյ զօրել յատկութեանց՝ խոր  
մարդկային հոգոյ զօրել յատկութեանց՝ խոր  
վշտի , բուռն ուրախութեան , վրդովման , զզման ,  
զշտի , բուռն ուրախութեան , վրդովման , զզման ,  
զայլոյթի՝ այդքան կենդանի և սիրուն կերպով  
արտայայտելու եղանակի ընդունակութիւնը . . .  
Բայց այդ դէմք չէ , այլ անեզր աշխարհ է ,  
անհուն ծով է , ուր մարդկային կրքերը ալիք-  
անհուն ծով է : Բայց ես շատ թոյլ ուր-  
Ահա տիկին Հրաչեայ : Բայց ես շատ թոյլ ուր-  
Ահա տիկին Հրաչեայ : Բայց ես շատ թոյլ ուր-  
Ահա տիկին Հրաչեայ : Բայց ես շատ թոյլ ուր-  
Ահա տիկին Հրաչեայ : Բայց ես շատ թոյլ ուր-  
Ահա տիկին Հրաչեայ :

“Այդ բոլորի վրայ աւելացնելու է և այն ,

որ տիկինը ոչ միայն կատարելապէս հասկացել ,  
մանրագննին ուսումնասիրել էր իւր դերը , այլ  
նա միանգամայն տիրապետում էր այդ դերին :  
Այսո՛ , դա ճիշտ կարած առ բոլիսն է , դլիքց  
մինչև ոտքի ծայրը արիստոկրատ , դքսուհի ,  
հպարտ , ինքնահաւան , բայց և վեհանձն ,  
սիրող , ատող , զղացող , զգայուն :”

ՅԻՒԽԻՆ

**Կալկազ լրագիր (թարգմանութիւն)**

“Սեպտեմբերի 24ին տեղի ունեցաւ հայ-  
կական խմբի երկրորդ ներկայացումը , ֆօրժ  
Օնէի “Դարբնոցապետ” թատերախաղը , որուն  
մէջ առաջին անգամ դուրս եկաւ տիկին Հրաչ-  
եայ կատարելապէս յաղթական և յաջող : Տա-  
ղանդաւոր և փորձառու գերասանուհին Քլարայի  
դերին մէջ իր մտածուած արտիստիկական խա-  
ղով , հարուստ և արտայայտիչ միմիքով , գրաւեց  
բոլոր հանդիսականներուն ուշադրութիւնը և  
ամենագեղեցիկ տպաւորութիւն գործեց : Ափսոս  
միայն որ տիկնոջ ձայնը նկատելի կերպով ետ  
կը մնայ՝ իր բոլոր արուեստագիտական ուշա-  
գրաւ յատկութիւններէն : Բոլոր ժամանակ  
ժողովուրդը բուռն և աղմկալից ծափերով ի տես  
կը կանչէր զինքը : Տիկին Հրաչեայ հասարակու-  
թենէն ստացաւ գեղեցիկ կողով մը՝ գեղեցիկ

ծաղիկներով լեցուն և երկգոյն ժապաւեններով  
զարդարուած , և գերասանական խմբէն՝ պը-  
սակ մը :”

Թիգլիսի Լիսրով (թարգմանութիւն) .

“Հինգշաբթի , սեպտեմբեր 24ին , Ալբու-  
նական թատրոնին մէջ տեղի ունեցաւ տիկին  
Հրաչեայի բեկին : Այս առաջին անգամը չէ որ  
յարգելի տիկինը բեմ կ'ելլէ թիֆլիս , այլ այդ  
եղաւ 1881 ներտ 3ին՝ “Քաթէրին Հովուարտ”ի  
դերին մէջ : Եւ գեռ այն ժամանակ թիֆլիսի  
ամբողջ հայ մամուլը գտաւ իր մէջ անզուգա-  
կան ընդունակութիւններու տէր արուեստագի-  
տուհի մը և միաբերան վկայեց իր արտաքին  
ինչպէս ներքին բարձր ձիւքերը և հարուստ  
դիմախաղը : Այս անգամ ալ Քլարայի գերը  
տիկին Հրաչեան կատարեց գեղեցիկ կերպով :  
Հայ հասարակութիւնը շատանց է որ չէ տեսեր  
բեմի վրայ այսպիսի խելացի արթիստ , որու  
համար ալ տիկինը վարձատրուեցաւ աղմկալից  
ծափահարութիւններով և միւնոյն ժամանակ  
հասարակութենէն ստացաւ ծաղիկներով լի կո-  
ղով և պսակ :”

**Տարազ .**

Տիկին Հրաչեայի խաղը Ալբարայի դերում

9

բաւական չէ որ վայելչագեղ էր, շնորհալի, նուրբ, նաև վերին աստիճանի բնական և մը-տածուած էր: Ո՞րչափ զգացմունք, ո՞րչափ ձիշտ ըմբոնողութիւն կարայի հոգեկան դրութեան: Մենք տեսնում էինք մի հպարտ գոռող էակ, գոռող այնքան որբան կարող է լինել մի կին, մենք տեսնում էինք այդ վիրաւորուած գոռո-գութեան հետեւանքը — ամսւսնութիւնը չսիրած մարդու հետ իր վրէժ սիրած մարդուն ատե-լութեան դէմ, և ահա մի շարք տանջանքները:

“Ի՞նչպիսի սարսուռ անցաւ Կլարա-Հրաչեայի մարմնով, երբ նա առաջին անգամ մնաց միայ-նակ ամսւանցն հետ: Ո՞րչափ զգուանք կար այդ սարսուռի մէջ: բայց և ո՞րչափ անձնուիրութիւն կար այն “երջանիկ եմ”ի մէջ որ Կլարան արձա-կում է երբ դրամայի վերջում ձեռք է բերում իւր հաշտութիւնը Ծափահարութիւնների վեր-ը չկար: Տիկնոջը նուիրուեց մի շքեղ զամբիւղ մասնախմբի կողմից, իսկ առաջին արարուածից յետոյ՝ գեղեցիկ պսակ՝ գերասանական խմբից, որը բեմի վրայ կանգնած՝ ծափահարում էր տիկնոջ (ժապաւէնի վրայ սակեայ տառերով փայլում էր հետեւալ բառերը՝ “Ողջամբ դա-լուստ Տկն. Հրաչեայ 1893 Սեպտեմբեր 24 — ընկերներից”):

Տարագ.

“Հինգշաբթի, Սեպտեմբերի 30ին (1893) Արքունական թատրոնում Հայոց մշտական խում-բը ներկայացրեց Քոյր Թերեկա, Կոմմալետափի դրաման... “Քոյր Թերեկայ, ի գերը ինչպէս և “Գամելիազարդ տիկնոջ”, գերը Տկն. Հրաչեայի գլխաւոր գերն է: Գրա մէջ նա այնքան ծա-փահարութիւններ էր վաստակում սրանից տասը տարի առաջ, ամբողջ թատրոնը մինչեւ ինքնա-մուացութիւն ոգեսորում էր: Այդ երեկոյ էլ տիկնոջ խաղը նոյն յաջողութիւնն ունեցաւ: Հասարակութիւնը որ արդէն սկսել է այցելել ներկայացումների, անդադար գուրա էր կանչում տիկնոջ, և այդ ի գուր չէր: Մենք տեսել ենք տիկնոջ այդ գերում առաջ և չիմա: Տասը տարի բեմ չըգուրս գալն ոչ թէ վիսսել է շնորհալի գերասանուհուն, այլ կարծես մի յար-մար առիթ է տուել տւելի խորասուցելու կա-տարած գերերի հօգու մէջ: Կը խաղը մինչեւ վերջին մանրամասնութիւնը մտածուած է, բէա-լական է, գրաւիչ է և գեղեցիկ: Նա կարողա-ցաւ ցոյց տալ ճնշուած մայրապետի ամբողջ էութեան բոլորը վանական կրթութեան խստու-թիւնների դէմ, զգուանքը դէպ ի գաստիարա-կութեան պատժական սիստէմը: Հասարակու-թեան մէջ այդ տեղն արթնացրեց մարդկային

արժանիքի զգացմունք : Տանջանքների մի ամբողջ ալեկոծուած ովկիանոս է ներկայացնում տիկին Հրաչեան այն ըստէից , երբ իմանում է որ Գուլիէլմինան իր աղջիկն է , այդ գժբաղդ սանուհին որին հայրը զօռով ուզում է կոյս ձեռնադրել : Մենք հետեւում էինք , իր զաւակը դատած մօր կամ աւելի լաւ ասած՝ մայրական զգացմունքով առաջին անգամ բորբոքուած կնոջ ջանքերը յաղթել զգացմունքին , կատարել տուած աղնիւ խօսքը — ձեռնադրել աղջկան , տեսանք և պարտութիւնը կուտի մէջ , երբ մայրապետը վճռում է հակառակ վանական կանոնների հագնեւել իրը մարդիկուհի և ներկայանալ իւր նախկին սիրեկանին , աղջկայ հօրը , անցեալ երջանիկ վայրկեանների յիշատակով առնել նրանից համարձակութիւն — աղջկան վանքից հանելու և սիրած մարդի հետ պսակելու համար : Հասարակութիւնը մինչեւ անգամ այն տեղերում որտեղ քօղն է ծածկում մայրապետի դէմքը , հինգերորդ արարուածում , Գուտստավի հետ խօսակցութեան մէջ , տեմնում է դերասանուհու կազմուածքի ամեն մի շարժումից թէ որչափ եռ է գալիս այդ մօր սիրաը , որը կարող էր լինել բաղդաւոր իր երջանկացած զաւկի հետ , եթէ միայն կարելի լինէր դուրս գալ մենաստանի պատերից : Տիկին Հրաչեայ

բոլորովին զմայլեցրեց հասարակութեանը , ծափաչարութիւնները վերջ չունէին : „

Արձագանք . թիւ 418 , 1893 , Հոկտ . 10 :

“Հինգչարթի հոկտ . 7ին , հայ գերասանական խումբը ներկայացրեց Արքունական թատրոնում Տիւմա որդու յայտնի Գամեղիազարդ Տիկին գրաման , մասնակցութեամբ տիկին Հրաչեայի , որ կատարում էր Մարգարիտի գերը : Այդ օրը , հանդիսականների թիւը անհամեմատ աւելի էր քան նախընթաց ներկայացումներին , երեւ այն պատճառու որ տիկին Հրաչեան արդէն հոչակուած էր այդ գերում տակաւին տասներկու տարի առաջ :

Արդարե , տիկին Հրաչեան այդ օրը այնքան մտածած , ուսումնասիրած և խնամքով պատրաստած էր իւր գերը , որ իւրաքանչիւր քայլափոխին հիացումն , սարսուռ և լոց էր պատճառուում հանդիսականներին : Երրորդ արարուածում հրաշալի էր և սիրտ կեղեքող այն տեսարանը , երբ Մարգրիտը իւր բուռն զգացմունքով լի սէրը թափելով Արմանի վրայ բաժանուեց նրանից : Այստեղ ծափաչարութիւնը հասաւ իւր կագաթնակէտին : Հինգերորդ արարուածում Արմանի հետ հանդիպումը ցնցումն պատճառեց ամբողջ հասարակութեան : Իսկ ինչ վերաբերում

է նրա մաշուան տեսարանին, այդ ամեն նկարագրութիւնից բարձր է : „

Թատրոնակը

Մշակ, Հոկտեմբեր 1893 :

“Մենք մտադիր չենք մանրամասն հաշիւտալ ընթերցողներին այն ներկայացումների մասին որոնք արուել են այն ժամանակ երբ Մշակ չեր հրատարակում: Մենք կուզէինք միայն մի քանի ընդհանուր նկատողութիւններ առնել այն ներկայացումների առիթով: Շատերը ի նկատի առնելով այն հանգամանքը որ հասարակութիւնը շատ սառն վերաբերուեց մինչև այժմ տրուած ներկայացումներին, տրամադիր են կարծելու որ այս տարի էլ Հայոց թատրոնն աննախանձելի վիճակ է ունենալու: Գործը այդքան յուսահատական չէ թուում մեզ: Ունենալով խմբի մէջ Տիկին Հրաչեայի նման առաջնակարգ տաղանդ, որի խաղը տեսնել բաղդ կը համարէ իւր համար թիֆլիսի հասարակութիւնից շատ աւելի խստապահանջ հասարակութիւն, ունենալով Տէր Դաւթեանի պէս աչքի ընկնող կօմիկ և այնպիսի օգտակար ոյժեր ինչպէս ՊՊ. Արէլեան, Պետրոսեան և Օր. Ախաշեան, հայ թատրոնի զեկավարները կարող էին գործը այնպէս տանիլ որ թատրոնը միշտ լի լինէր:

“... Ով որ համեմատել է մեր և ոռւսաց

թատրոնը, անշուշտ նկատած կը լինի որ նրանց մէջ կայ մի հիմնական տարբերութիւն, որ կապ չունի գերասանների ընդունակութիւնների հետ: Այդ տարբերութիւնն է որ ոռւսաց գերասանները, շատ քիչ բացառութեամբ, բոլորն էլ անցած են լինում մի որոշ շկոլա: Իսկ հայ գերասանների մեծամասնութեանը բեմական կը թութիւն, ինչպէս ժողովուրդն ասում է, “Աստուած է տուել”, մի կողմ թողնելով Տէն: Հրաչեային, որի բնածին տաղանդը բացառիկ դրութեան մէջ է:”

Տարագ, Հոկտեմբեր 1893 .

“Հինգշաբթի, Արքունական թատրոնում խաղացուեց “Կամելիազարդ տիկին”: Մարգարիտի գերը կատարում էր տիկին Հրաչեան: Անման գերը կատարում էր տիկին Հրաչեան: Էտէ մէջ: է տաղանդաւոր գերասանուհին այդ գերի մէջ: Մենք բոլորովին չափազանցած չենք լինիր եթէ պնդենք թէ թիֆլիսն այդպիսի գոթիէ չէ տեսել: Ո՞ր մէկ տեղն ասենք: Ամեն տեղ, ամեն տեսարանում, տիկինը հրաշալի էր: Իսկ վերջին գործողութեան մէջ, մաշուան տեսարանում, նա գործողութեան մէջ, մաշուան տեսարանում, նա գերազանցեց ինքն իրան: Քանի՛ քանի՛ անգամ նկատեցինք արտասուբներ հանդիսականների աչքաւեցինք արտասուբներ հանդիսականների աչքերում: Ոգեսորութիւնն ընդհանուր էր, ծագերում: Ոգեսորութիւնն ընդհանուր էր, յափշտակութիւնը փափարութիւններն անվերջ, յափշտակութիւնը

Եիակատար : Երբ վարագոյրն իջնում էր , մի ըսպէ մեռելային լոռութիւն էր տիրում հիաց-  
մունքից , և ապա դահլիճն սկսում էր դզրդալ :  
Եւ ո՞վ չի զարմանալ , թէ տաղանդի ի՞նչ ոյժ  
պիտի ունենայ , որ տասը տարի բեմ դուրս  
չգալով , յանկարծ հանդէս գայ աւելի շնորհ-  
քով և աւելի մշակուած :

Նոր-Դար ( “Բէաթրիս ” խաղի ներկայաց-  
ման առթիւ) թիւ 191 . 30 Հոկտ. 1893 :

“Երժէր Բէաթրիսի գերում տեսնել Տիկին  
Հրաչեայի ընտիր խաղը : Այդ գերը տիկնոջ  
րեպերտուարի մէջ անշուշտ առաջնակարգ գե-  
րերից մէկը կարող է կազմել : Գժուար է  
մատնանիշ անել թէ որ արարուածի և որ տե-  
սարանի մէջ տիկինն աւելի աչքի էր ընկնում :  
Սկզբից մինչեւ վերջը Տ. Հրաչեան Բէաթրիսի  
գերը կատարեց առանց նկատելի անհարթու-  
թիւնների : Կրա ձայնը նոյն երեկոյ փոքր ի՞նչ  
քնքշացել էլ էր : Կարեւոր ենք համարում յօրի-  
նակ այլոց մատնանիշ անել Տ. Հրաչեայի մի  
առաւելութեան վրայ , այդ այն է որ տիկինը  
գիտէ ոչ թէ միայն խօսիլ , այլ և լսել : Խսկա-  
պէս ուշադրութեամբ լսել խօսակցին , դա քիչ  
նշանակութիւն չունի : Գրեթէ նրանից է կախ-  
ւած միայն խօսակցի ասածների համեմատ՝

Հարկաւոր արտայայտութիւններ տալ դէմքին ,  
Հարկաւոր շարժումներն անել , և վերջը պա-  
տասխանը Հարկաւոր տոնով տալ : Գրանով էլ  
տեսնում ես որ գերասանն ինքը մտածում է և  
գիտէ ի՞նչ է ասում , և ոչ թէ աւգոմատի պէս  
գերը անգիր կրկնում : Գերասանը լուռ ժամա-  
նակ էլ պիտի խաղայ , և Տ. Հրաչեան լուռ  
ժամանակ էլ խաղում է : Այդ խաղը տեսնում  
ես նրա գէմքին , շարժումների մէջ և հասկա-  
նում ես թէ այդ ժամանակ նա ի՞նչ է զգում :

Աւելի չձանձրացնելու համար ձեզ , այս-  
քանը բաւական կը համարիմ :

## ԺԵ.

Այս միջոցին , կոկորդի տկարութիւնս շու-  
տափոյթ կը յառաջանար : Ամեն ներկայացման ,  
երլորդ արարուածի կեսին , կ'ուռէր կոկորդս և  
սաստիկ կը նեղէր զիս : Շարունակ կը յուզէին  
զիս : Այդ յուզմունքները մղում կուտային տկա-  
րութեանս յառաջանալուն :

Երեակայեցէք՝ քոմիթէի անդամ է եղեր  
այն մարդը որ “Բազագիսանայ”ին մէջ կտոր չա-  
փած տաեն՝ կը ջանայ երկու մատ պակաս չափել :  
Ի՞նչ հասկացողութիւն պիտի ունենայ պարոնը  
նոր գպրոցի կամ հինի մասին :

Բերեր են “Մեղեա” խաղը .

— Տիկին, սորվեցէք այս դերը, որ ներկայացնէք :

— Աչ, պարոններ, կ'ըսեմ, ես “Մեղեա” չեմ ներկայացներ : “Դարբնոցապետ” էն յետոյ՝ “Մեղեա”, այդ ի՞նչ փոտած փիէս է . “Արևելեան թատրոնի բեմին թուարէն է : Ես չեմ կարող ներկայացնել :

— Ի՞նչ կ'ըսէք, տիկին, ռուսաց բեմին վրայ այսինչը կը ներկայացնէ այդ խաղը :

— Ան կարող է ներկայացնել . ես չեմ կարող : Աերջապէս, պարոններ, ձեզ գաղափար տալու համար պէտք է օրինակ մը առաջ բերեմ : Ան որ կ'երգէ եւրոպական երգեր, պէտք չէ երգէ “պայտաթիներ . ձայնը կը փճանայ : Երկու տէրանց կարելի չէ ծառայել :

Այդ միջոցին քոմիթէի անդամներէն մին տեղէն բարձրանալով ըստւ .

— Տիկին, դրամիթիդ կը ստանաք, ինչ որ ձեզի կուտան՝ ըրէք, գուք ինչո՞ւ կը խառնուիք :

Չեմ գիտեր թէ ինչպէս ես ինձ թոյլ տուի յանկարծ երեք անգամ խփել պարոնի խոշոր փորին, այնպէս որ խեղձը երեք քայլ ետ գնաց :

— Այսպիսի մէկ քանի փոր բաւական չէ Հրաչեան վարձելու : Ոչ . իմ արուեստս դրամով չեմ ծախեր :



ՏԻԿԻՆ ՀՐԱՅԵԱՅՑ

(Խովես, 1883)

Բայց արդէն ուժերս սպառած էին : Զիս  
տուն տարին : Տղու պէս կուլայի :  
— Ան , այդ մարդիկը ամենաին հասկացո-  
ղութիւն չունին բեմի մասին : Արագրութիւնն  
ալ չի բողքեր , չըսեր թէ այդ տեսակ խաղե-  
րու ժամանակն անցած է : Ուրիշ ազգեր տուաջ  
կ'երթան , բայց մենք միշտ ետ ու ետ :  
Եկան քոմիթէի անդամները ներողութիւն  
ևնդրեցին , ըսելով .

— Տիկին , գուք ջղոտ էք շատ : Կ'երեւայ  
թէ այդ ջիղերը պէտք էր որ գուք այդքան  
տաղանդաւոր արթիսթ ըլլայիք : Կ'երողութիւն  
կը խնդրենք :

Այս , անոնք կրկին զիս չէին հասկնար , և  
“Մեղեաներ չներկայացնելուս պատճառը ջղե-  
րուս կը վերադրեն :

Աչա այսպիսի քոմիթէի չետ կը գործէի :  
Պայման էի դրեր որ՝ ինքնուրոյն խաղեր  
ներկայացնելու ատեննիս՝ չեղինակը ներկայ չը  
դժնուի փորձերուն , իսկ եթէ ներկայ ըլլայ  
ինձ դերացուցութիւն չընէ : Արագրութիւն կայ:  
Ինքը կը ցանկայ որ ես գեղին ներկեմ դերը ,  
և ես ներկայացուցի կապօյտ . Արագրութեան  
միջոցով կարող է բողքել թէ գյնը այդ չէր ,  
և կը վերջանայ :  
Ընդունած էին այս պայմանն :

Ինքնուրոյն խաղ մը պիտի ներկայացնէինք ,  
որուն հեղինակը բոլորիս սիրելի անձնաւորու-  
թիւն մըն էր . քոմիթէն չէր յարգեր իմ պայ-  
մանս . հեղինակը ինձ երեք անդամ կրկնել  
տուաւ դերը :

Յարգելով պարոնը , ոչինչ ըսի , բայց իմ  
դէմքիս մկանունքները , շրթունքներս սկսան պար  
գալ՝ ջղերու գրգոռումէս :

Այդ միջոցին եկաւ հաստափոր պարոնը ինձ  
ձեռք տալ՝ բարեկու համար : Խփեցի ձեռքին :  
Պարոնը շուարած ետ ետ գնաց մինչև քովիս-  
ները :

Երկու ժամ՝ յետոյ , մօտեցաւ ինձ քոմիթէի  
մէկ ուրիշ անդամը .

— Տիկի՞ն , դուք խփելով մեր ընկերոջ՝  
խփած էք նաև մեզ : Զէ՞ որ ան մեր ընկերն է :

— Ծատ ուրախ եմ , պարոն . չէի կարծեր  
թէ մէկ ապտակով պիտի կարողանամ երեքիդ  
խփել : Ուստի ստացէք ձեր բաժինը : Պայմանը  
ստորագրած ատենս՝ առաջին հարցումն եղած է  
թէ՝ “ըեժիսօր” ունիք : Պ. Աբրահամեանց պա-  
տասխաներ է՝ “Այս” : Եկեր եմ Թիֆլիս , և  
տեսեր եմ Պ. Թարխանեանը . այդ պաշտօնին  
մէջ : Պարոնը կարող է շատ լաւ մարդ ըլլալ ,  
բայց “ըեժիսօր” ո՛չ : Ես չեմ կարող դերէս  
դուրս գալով դերացութիւն ընել : Եւ

դերջապէս դերացուցութեան պաշտօնը առաջին  
դերակատարներու պաշտօնէն շատ ծանր է :

Չէի կարող երկու բեռ ուսերուս վրայ տա-  
նիլ : Բայց կ'ընէի երբեմ՝ ամբողջութիւնը պահ-  
պանելու համար : Ծատ անկանոն էին փորձերը :  
Ամէն մէկ դերասան պէտք էր կանչել ու յիշե-  
ցնել թէ Կարգը ձերն է , եկէք փորձեցէք :

Վերջապէս , բեժիսօրի ինդրոյն պատճա-  
ռաւ՝ հրաժարական տուի : Քոմիթէին պարտա-  
կան էի երեք հարիւր ըուպլի : Բայց խիզՃա  
հանդիսաւ էր , քանի որ անոնցմէ խաբուած  
եկած էի Թիֆլիս , կարծելով թէ կազմակերպ-  
ւած խումբ կար :

Ես կազմակերպուած չեմ համարիր այն  
խումբերը որ չունին իրենց մէջ զլիսաւոր պա-  
տասխանատու անձը — դերացոյցը : Ամէն դի-  
մացդ ելլողը բեժիսօր չէ :

Այդ միջոցին եկաւ Պ. Ստեփան Թօռման-  
եանց ու ինդրեց աղջկանս ձեռքը : Աշանուեցան :

Ընտանիքս թողուցի Թիֆլիս : Անոնց ապ-  
րուստին համար դրամ ձգելէս յետոյ՝ հազիւ  
ձամբու ծախքի դրամ ունէի : Աբրահամեանց  
ու ես գացինք Պաթում : Մեր ետևէն պիտի  
դային Պիննէմէձեան ամուսինները , որոնց ձա-

Նեպարհածախսն ալ պիտի հայթայթէինք ներկայացմանց հասոյթէն։ Ծատ ոնցաջող ժամանակ էր։ Այդ ամսուան մէջ բարեգործական նպատակով 2-3 ներկայացում տրուեր էր։ Պ. Խարազեան կը պնդէր որ չտամ ներկայացում, քանի որ ոչ ոք պիտի գար։

— Բայց, զ. Խալազեան, ես դրամի պէտք  
ունիմ:

— Ի՞նչքան որ շարկաւոր է՝ առելք, ես  
պատրաստ եմ:

Ընորհյակալութիւն յայտնելով՝ մերժեցի,  
որովհետև յոյս չունէի ուրիշ տեղէ ստանալով  
պարտքս վճարելու :

"Գամելիազարդ տիկիններ աղքարարութիւն-ներն արդէն ցըսուեցինք :

Պարոն մը, որ կը բնակէր մեր իջևանած  
հիւրանոցը, խնդրեց տոմսակներու տետրակը,  
համոզելով զիս թէ արդէն բոլորը ծախուած  
կարելի է համարել:

Գիշերները՝ քնացած ատենս՝ սովորութիւն  
ունէի այդպիսի տեղեր ձրագը վառ պահելու։  
Չեմ գիտեր ինչպէս է եղեր՝ վառ մոմը իյնա-  
լով՝ վարագոյրը բռնկեր է։ Ազքս բացի, տեսայ  
որ վարագոյրը կ'այրի։ Քաշեցի, կիսով մաղե-  
րուս վլայ ինկաւ։ Մաղերս բռնկեցան, վերմա-  
կով մարեցի, սկսայ զանգաշարել։ Զանգը չէր

բաներ : Աէս գիշերն անցեր էր չորս ժամ :  
Ուսւերէն չէի գիտեր : Ակսայ հայերէն “Հրդե՛՛  
կայ , հրդե՛՛ կայ , կանչել : Ոչ ոք հասաւ : Խսկ  
հրդե՛՛ը կը շարունակէր մեծնալ : Աբրահամեանց  
կը բնակէր այդտեղ , բայց չգիտէի որ սենեակը:  
Ակսայ գոչել՝ “Աբրահամեա՞նց” . լսեց ձայնս ,  
եկաւ . “Պաժար կասպատա՞ ” սկսաւ կանչել :  
Ամէն կողմէ հաւաքուեցան սենեակս , հրդե՛՛ը  
մարեցին , բայց իմ ձեռքս սոսկալի կերպով  
այլած էր և անմիջապէս ուռած : Մէկ ձեռքս  
փաթթած՝ երկրորդ գիշերը պիտի կատարէի  
Մարկրիթի դերը : Տօմսակ չկար թատրոնը ,  
քանի որ պարոնը բոլորը տուեր և ինձ ապահո-  
վեր էր թէ ամէնը ծախուած է , ժողովուրդը  
կուգար և ետ կը գտանքար՝ կարծելով թէ տոմ-  
սակ չկայ : Հասաւ վարագոյրին բարձրանալու  
ժամը : Ժողովուրդ չկար թատրոնը , ինձ ըսին .  
Այստեղ ուշ կուգան : Վերջապէս , վարագոյրը  
բարձրացնելու ժամը տասը լոսկէ անցեր էր , և  
դեռ ոչ ոք կը տեսնուէր թատրոնին մէջ : Խընդ-  
դեռ որ գտնեն այդ պարոնը : Իր սենեակին  
րեցի որ գտնեն այդ պարոնը : Խսկ աւելի  
մէջ քնացած գտան , քանի մը գաւաթ աւելի  
կոնծելով քունը տարեր էր : Խսկ տոմսակներէն  
ոչ մէկ հատ չէր ծախսեր : Այդ լոսկէն յետոյ  
մէկ հատ չէր ծախսուեցաւ երեք հարիւր ըուպ-  
լիի տոմսակ :

Խաղը լաւ անցաւ: Ժողովուրդը գոչ մնաց:  
Երկրորդ ներկայացման՝ պիտի տայինք  
"Դարբնոցապետը": Այդ գիշերն ունեցանք մօտ  
1500 բուզի մուտք: Ժողովուրդը խառն էր,  
հայ, եւրոպացի, թուրք: Կրկին ժողովուրդը  
գոչ մնաց: Թուրքերը առաջարկեցին ինձ ուրիշ  
գիշեր մը թուրք լեզուով տալ վօտվիլ մը, որուն  
փոխարէն կը խոստանային տալ ինձ 60 ոսկի:  
Մերժեցի:

Այդ գիշեր, Պաթումի երիտասարդու-  
թիւնը ընթրիք էր սարքեր, մասնաւորապէս ինձ  
համար, հիւրանոցին մէջ: Հարցուցի թէ՝

— Իուր տիկիններ չունիք, կամ քոյրեր:  
— Մենք այստեղ առանց ընտանիքի կ'ապ-  
րինք, պատասխանեցին:

— Ցաւելով պիտի մերժեմ ձեր առաջար-  
կութիւնը: Պարոններ, գերասանուհին կ'ըն-  
դունի այդ առաջարկութիւնը, բայց մայրը և  
ամուսինը կը բողոքէ: Դժուարութիւնը այդտեղ  
է: Պէտք է այդ երեքը հաշտ ապրին իրարու  
հետ: Եթէ ձեր քոյրերէն կամ մայրերէն մաս-  
նակցող ըլլար այդ սեղանին, ուրախութեամբ  
կ'ընդունէի: Այն ատեն ոչ մայրը ոչ ալ կինը  
դանդատելու իրաւունք կ'ունենար:

Պարոնները գանգատեր էին ինձ գէմ: Բայց  
Պ. և տիկին խարազեանը եղան այնքան բարի

որ երկրորդ գիշերը ամբողջ այդ երիտասար-  
դութիւնը հրաւիրելով իրենց տունը՝ ընթրիք  
տուին և հաշտեցուցին մեզ իրարու հետ:

Նոյնպէս շնորհակալութեան արժանի են  
սիրողները որոնք թէ՛ մասնակցեցան իմ ներկա-  
յացումներուս և թէ՛ նուիրեցին ինձ դարնեայ  
պսակ: Ժողովրէն ալ ստացայ զամբիւղ մը լի  
դաշտային գեղեցիկ ծաղիկներով:

Պ. Խարազեանի տունէն կառք նստելով  
գացինք կայարան, ուր յայտնելով բոլորին  
շնորհակալութիւնս, ձամբայ ելայ գէպ ի թիֆ-  
լիս:

Կը պատրաստուէի իբր հրաժեշտի ներկա-  
յացում տալ "Ատրիէն Լըքովրէօր": Այդ մի-  
ջոցին, Պ. Ստեփան Թումանեանց՝ գալով Բա-  
ջոցին, ինդրեց որ հարսնիքի պատրաստութիւն  
գուէն, ինդրեց որ հարսնիքի պատրաստութիւն  
տեսնեմ: Փետրուար 9ին ընտանեօք ձամբայ  
տեղանք գէպ ի Բագու, և փետրուար 14ին կա-  
տարեցինք պատրաստութեան հանդէսը:

Ժողովրդի ընտրեալ դասակարգէն պատգա-  
մաւորութիւն մը, զոր կը կազմէին տիկին Լիզա  
Կրասինիկեան, տիկին Սոֆի Աղամեան, տիկին  
Աննա Լալայեան, Պ. Պալիբրով, Պ. Մութաֆեան  
և այլք, եկան ինձ մօտ ինդրելու որ անպատճառ  
և ներկայացում մը տամ Բագու:

— Բայց ես չունիմ ոչ մէկ պատրաստութիւն։ Զգեստներս ալ թիֆլիս են, դերակատարներն ալ կը պահպին։ Զեմ կառու։

Մասնաւորապէս կը ցանկային “Գամելիա-  
դարդ տիկին” : Բայց Արմանի դեր կատարող ալ  
կը պահպէք : Այն ատեն առաջարկեցին Արրա-  
համեանցը Արմանի դերին համար : Այդ անկա-  
րելի էր : Բնութիւնը զրկած էր խեղճ Արրա-  
համեանցը Արման ըլլալու բարեբաղդութենէն:  
Յօնքերու հաստութիւնը, ևն. արգելք էր :

— Մեղ Արման Հարկաւոր չէ : Որպէս զի դուք կարողանաք ներկայացնել, մենք կը խընդ-րենք պարօնէն որ յանձն առնէ կատարել Ար-մանի գերբ :

Այդ միջոցին Տ. Գիւտ ևս խոստացաւ ան-  
միջապէս երթալ Թիվլիս և Հարկ եղած զգեստ-  
ները ուղարկել : Պ. Վահրամ Մութափեան  
այնքան բարի եղաւ որ գտնելով սիրողներ ,  
աջակցելով ամէն կերպ , յաջողցուց ներկայա-  
ցումքր :

Եյս առթիւ Պաֆինսի վետօնութիւ մէջ  
հրատարակուած յօդուածի մը թարգմանու-  
թիւնը կը յիշատակեմ՝ գաղափար տալու հա-  
մար այդ ներկայացման մասին :

Այս թերթի 1894 փետրուար 26ի թիվն

մէջ կար խմբագրական տեսութիւն մը Բագուի  
թատրոններու վերաբերմամբ . ի միջի այլոց ,  
խմբագրութիւնը խօսելով իմ վրաս , ըսած էր  
չետեւեալը .

“Փետրուար 21ին, Թաղիկվի թատրոնին  
մէջ արուեցաւ հայերէն լեզով “Մարկրիթ կո-  
թիէ”, այն հրաշալի գործը զոր ստեղծեր է  
Տիւմա որդի կարող գրիչը: Տիկին Հրաչեայ  
կը խաղար Մարկրիթի գերը, թատրոնը կատա-  
րելապէս լի էր տեղ չկար, չնայելով արտա-  
կարգ կերպով աւելցուած աթոռներուն... Տիկին  
Հրաչեայ այն աստիճան հանձարարուեստ կեր-  
պով տարաւ իր գերը, այնպիսի բարձր գե-  
ղարուեստական ընդունակութեամբ, որ հանդի-  
սականք բոլորովին մոռցած էին թէ արդեօք  
թատրոնի մէջ են թէ իրապէս Մարկրիթ կո-  
թիէի սալոնը: Այդպիսի խաղացուածք գեռ  
մենք երբէք չենք տեսել ուսւական բեմի վրայ:  
Ահա ինչու չէ կարելի չցաւիլ որ տիկին Հրաչ-  
եան ընդ միշտ կը թողու բեմը՝ կոկորդի տկա-  
րութեան պատճառով:

“Մեր ներկայ թիւին մէջ ըրատարակելով  
մեր քննադատին տիկին Հրաչեայի ներկայացման  
նուիրած նկարագրութիւնը, մենք կ'աւելցնենք  
միմիայն որ այն շքեղ ադամանդեայ ապարան-  
ջանը, այն ոսկելի քնարը, այն ծաղկեայ կողովը,

և այն կրինապատկուած գներով տեղերը, և այն  
“օվասիոն” ներով տուն ճանապարհելլ—դեռ շատ  
քիչ են փոխարինելու այն էսթեթիքական գո-  
հունակութիւնը զոր պատճառեց մեղ տիկնոջ  
խաղացուածքը:

Ահա՝ քննադատին յօդուածը.

**Տիկին Հրաչեայի ներկայացումը**  
(Մարտին Կոնքի)

“Մենք կը գտնուինք այն զմայլելի ազդե-  
ցութեան և այն բարձր գեղարուեստական զգաց-  
մանց տակ, զոր կրեցինք այն իրիկունը՝ այժմ  
Բագու Հիւրասիրուած Թիֆլիսի հայկական խմբի  
արթիսթ տիկին Հրաչեայի ներկայացումէն ։  
Ճանչցած ըլլալով տիկինը իր մատաղ տարիքին  
մէջ, այսինքն տասներկու տարի առաջ, երբ  
Թիֆլիսի հայկական խմբին մէջ բռնելով առաջին  
տեղը՝ կը խաղար լուրջ տրամաթիքական դերեր,  
և համեմատելով զինքը՝ Երմոլովայի, Ֆէդոսո-  
վայի և Սալլինայի հետ, շատ կէտերու մէջ  
մենք կը կարծէինք և կը սպասէինք որ այժմ ալ  
կարողանայ հասնիլ անոնց բարձրութեանը։ Բայց  
մեր կարծիքները յօդս ցնդեցան՝ բառիս բռն  
նշանակութեամբը, տեսնելով այնպիսի զօրեղա-  
գոյն և ուժեղ տաղանդ մը, որ կը գտնուի  
տիկին Հրաչեայի մէջ։ Այսպիսի Մարկրիթ կո-

թիէ մը ինչպէս տիկին Հրաչեան ներկայացուց  
փետրուար 21ին Թաղիէվի թատրոնին մէջ,  
մենք երբէք չեինք տեսած և հազիւ այսուհետեւ  
ալ կարենանք տեսնել։ “Իլլիւզիոնը մինչև այն  
աստիճան լիակատար էր, կեանքը այնքան կեն-  
դանի կերպով կը ներկայացուէր բեմի վրայ, որ  
հասարակութիւնը, ինքինքը կորսնցնելով, բո-  
պէներով մեռելային լուսութիւն կը պահէր։ 2նա-  
յելով մէկ քանի հարիւր մարդոց ներկայու-  
թեանը, շնչառութեան ձայն անդամչէր լսուեր,  
և այսպիսի յաղթական լուսութեան կը հետեւին  
այնպիսի բուռն ու ոգեսորուած “պուավօներ”,  
որոնց նմանին մինչև ցարդ չէր արժանացած ոչ  
մէկ արթիսթ մեր բեմին վրայ։ Արթիսթի ամէն  
մէկ քայլը, ամէն մէկ շարժումը, կը շնչէր  
կեանք ձշմարիտ և իրական բնականութիւն,  
և կարտայայտէր գեղարուեստական ոչ plus  
ultraն։ Առաջին տեսարանէն իսկ, մեր առջեւը  
կանգնած էր կիսաշխարհի այդ առիւծը, գեղե-  
ցիկ և շնորհալի Մարկրիթը, փայլուն և չքնաղ՝  
որպէս թիթեռնիկ, բայց ակնյայտնի նշաններով  
իր սարդի ընդունակութեան, որ իր սստայնը  
կը ձգէ մեծ արիստոկրատներուն վրայ՝ ինչպէս  
ձանձերու։ Անիկա անոնց մէ ոչ մէկը կը սիրէ,  
և մինչև իսկ կատէ զանոնք։ Միւնցն ատեն,  
և մինչև իսկ կատէ զանոնք։ Միւնցն ատեն,

նին մէջ՝ ինչպէս աղամանդը ցեխին մէջ : Այո՛,  
այս մենք տեսանք, տեսանք մեր սեպհական  
աչքերով թաղիեփի թատրոնին մէջ փետրուար  
21ին : Մեզի կը թուի որ մենք կեսանք տեսանք,  
ոչ թէ ներկայացում : Յանկարծ այս արբշիո  
բեմը, հակաբարյական շրջապատը, կրծքաբա-  
ցութեան հանդիսարան՝ սիրակեղծութեան այս  
վայրը կը լուսափայլի սրբազն բառով՝ “Աէր” .  
Մարկրիթ կը ժպտի այս խօսքի վրայ, և ի՞նչ-  
պիսի ջախջախիչ, թերահաւատ ու դառն ժպիտ.  
բայց իրեն կը հաւատացնեն, կը հաւաստեն թէ  
Ճմարիտ է ատիկա, թէ Արման Տիւվալը կը  
սիրէ զինքը, թէ ան կը հետաքրքրուէր իրմով՝  
երբ գեռ հիւանդ էր . Մարկրիթ շփոթած է,  
ան ինքինքը հիմա կ'երեակայէ ինչպէս սիրելի  
ու հրաշալի երախայ մը, որուն կը խօսին գեղե-  
ցիկ խաղալիքի մը մասին զոր վաղուց փշրեր ու  
կոխոտեր է . Նախ չի հաւատար, յետոյ կը հա-  
ւատայ, դարձեալ կը կասկածի, նորէն կը հա-  
ւատայ : Չարչարանք, տանջանք, արտասուախառն  
ծիծաղ, և այս բոլորը տիկին Հրաշեայի դէմքին  
վրայ : Մեր գրիչը կը յոգնի այս բոլորը գրելով  
և մենք կը զարմանանք թէ ի՞նչպէս այդ հզօր  
տաղանդը չի յոգնիր մի առ մի արտայայտել  
այդ բոլորը, — ո՞չ, քիչ է ըսել “մի առ մի  
արտայայտել”, այլ զգալ, թափանցել հոգւով

ու գլխով : Բայց աչա ընկճուեցու առիւծը .  
բոլոր զգացմանց ամենէն ուժեղը յաղթեց իրեն,  
և ան անմիջապէս անձնատուր եղաւ այդ սիրոյն,  
գիշատիչ առիւծը փոխարկուեցաւ մաքուր աղաւ-  
նոցի աղաւնիի մը . և կը շոյէ կը փաղաքչէ իր  
իր սէրը : Մի՛ դպչեք անոր սիրոյն, մի՛ խէք  
անկէ այդ սէրը . ատով դուք անոր կեանքը  
կ'առնէք : Այսպէս կը խօսէր տիկին Հրաշեայի  
խաղացուածքը՝ այն յաղթական բոպէներուն մէջ  
երբ ան կը հաւատար այդ սիրոյն՝ ինչպէս իր  
անձին :

“Բայց աչա անսպասելի հիւր մը, իր սիրելի  
Արմանին հայրը : Ո՞չ, ի՞նչ ուրախ է անոր գա-  
լուն, ատ կը նշանակէ որ ան ալ ուրախ է իր  
որդոյն երջանկութեամբը, և կը մտածէ կապել  
ապագան իր երկու զաւակներուն, իրա՞ւ, ի՞նչ  
փառաւոր գործ : Ո՞չ, ո՞քան դուք բարի էք” :  
Բայց ան կը խօսի իր աղջկան վրայ, Արմանի  
քրոջը : Մարկրիթ իր սէրը պէտք է զոհէ Ար-  
մանի անմեղ քրոջը երջանկութեանը համար :  
Աչա՛ Սկիւլան, աչա՛ Քարիբդան, ուր ալե-  
կոծուած Մարկրիթը աչքերը տրորելով կ'արտա-  
սանէ՝ “Համաձայն եմ” : Այո՛, գրել և նկարա-  
գրել Հրաշեան, այդ տեսարանին մէջ՝ անկարող  
ենք : Թուել մի առ մի այն բոլորը ինչ որ կը  
ստեղծագործէր այդ տաղանդը, մեր գրիչը

անկարող է : Մենք այդ բոպէին տեսանք արցունքներ, այս, տաք և սրտառուչ արցունքներ : Մենք տեսանք թէ առաջին կարգերուն՝ ի նշպէս կը հեկեկար մանկամարդ օրիորդը և ի՞նչքան անզօր էին շրջապատողներուն հանդարտեցուցիչ ջանքերը : Բեմէն նկատեց ատիկա տիկին Հրաշեան, և իր արցունքներն ալ սկսան յորդիլ : Բայց ի՞նչ գրեմ, քանի որ ինքը բնութիւնը կը խօսի, քննադատի գրիչն աւելորդ է :

## ՃԶ.

Այդ ներկայացման հետեւալ օրն իսկ պիտի մեկնէնք թիֆլիս : Սիրելի Պերճիկէս բաժնուելու ցաւը հաւասար էր Մարկրիթի ցաւին : Ծոգեկառքը ձամբայ ելաւ թէ չէ, ես ընկայ երեսի վրայ, բարձրաձայն հեկեկալով .

— Ո՛չ, ասիկա իմ ուժերէս վեր է, չեմ կարող, Անտոն, առանց զայն տեսնելու ապրիլ : Են իմ ընկերս էր : Ես էի անոր լաւագոյն բարեկամը :

Սիրտս, մի՛րտս կը ցաւէր : Այնքան այդ ցաւը զիս ընկճած էր, որ չկարողացայ ո՛չ Պութափեանին ո՛չ ալ սիրողներուն յայտնել իմ շնորհակալութիւնս : Անքաղավար կերպով հեռացայ Բագուէն :

Թիֆլիս հասանք : Ամէն ինչ պատրաստ էր ։ Մէկ քանի օրէն պիտի կարողանայինք ներկայացնել “Ատրիէն Լըքուվրէօր” : Ես ընկճուած էի : Այդ բաժանումը զիս հիւանդացուցեր էր :

— Անտօն, երթանք Պոլիս, ըստ ամուսնոյս :

չեմ կարող ներկայացնել “Ատրիէն Լըքուվրէօր” :

— Քանի որ այդպէս կուգես, երթանք, ըստ, և սկսաւ մեր իրեղէնները հաւաքել :

Այդ միջոցին եկաւ Տ. Գիւտ ք. Աղանեանը, իմ սիրելի հոգիւս :

— Ո՛չ, ըստ, չեմ թողներ : Ի՞նչ կ'ընէք, տիկին . ոչ մէկ տոմսակ չէ մնացած գրեթէ, և գեռ ազդարարութիւն չէ եղած : Մեծ բազմութիւն պիտի ըլլայ և նուերներ պիտի ստանաք :

— Ո՛չ, տէ՛ր հայր, տկա՛ր եմ, չեմ կարող այս գիշեր իսկ ձամբայ պիտի ելլեմ :

Գացինք Պոլիս : Զկար այլ ևս տան մէջ Պերճիկը : Գիշերներն անքուն մինչեւ առտու կը լուսցնէի : Զիս կը միտթարէր Մկրեան տէր հայրը :

— Հայր իմ, մի՛ ըսէք, ես միտքս չէի գրեր որ ան օտար ապրանք է, և չեմ ալ կարող հաշտուիլ այդ գաղափարին հետ : Կարելի է այդ բանը գիւրին է անոնց համար որ արդէն այդ մաքով նախապատրաստուած կը մեծցնեն իրենց աղջիկը :

Հետիւն ամառը՝ Քիսլավօսսք երթալով,  
գրկեցի համբուրեցի Պերճիկս և հանգստացայ :  
Բայց կրկին բաժնուելու ժամը մօտեցեր էր :  
Նոյն տանջանքներով բաժնուեցայ : Այդ անտա-  
նելի զրութիւնս տեսեց մինչև այն օրը ուր մեր  
կամքէն անկախ պատճառներով գաղթեցինք  
Պոլսէն՝ ինչպէս շատերը կը գաղթէին այդ մի-  
ջոցին : 1896ի կոտորածն էր աերի ունեցես :

Մեր ընտանիքին դրեթէ մէկ անդամը կը կազմէր երիտասարդ մը զոր փոքր հասակէն սիրած էինք այլ ու կին։ Ան կույար ըսելով։

— Հապա զիս ո՞ւր կը թողուք : Զիս որդի  
կը կոչէիք, և երբ գաղթելու ժամանակը հա-  
սաւ, դուք միայն ձեր զաւկըներուն մտածելով՝  
զիս կը թողուք :

Յարմարցուցինք մէկ կերպ, և չետերնիս  
առնելով ուղարկեցինք բագու՝ սիրելի որդեսցյա  
Ա. Թումանեանցի մօտ, գրասենեակը ծառայելու:  
Այդ երիտասարդի անոնց եւ ու

Այսպիսի գրութեան հասայ որ ա՛լ չէի կարող  
անկողնէս վար իջնել : Ի՞նչքան շնորհակալու-  
թեան պարտք ունիմ յարգելի բժ . Աղամալեա-  
նին , որ եօթն ամիս ամէն օր անձնուիրաբար  
ինայեց զիս : Հապա տիկին Մելիքեանին և որ-  
ինայեց զիս : Յարութիւնեանին ո՛լքան շնորհակալ եմ  
որ առառու իրիկուն մօտս էին , շատ իրիկուն  
կ'եթային իրենց գերերը ներկայացնել և յետոյ  
գալով մօտս մինչև լոյս կը մնային և անձնուի-  
րաբար զիս կը խնամէին : Եղաւ օր մը ուր  
նիւթական վիճակս ալ գէցցաւ : Ամուսինս Պոլ-  
սէն դրամ ուղարկեր էր , բայց ես դեռ չէի  
ստացեր : Պարսնի մը , որ նախկին քոմիթէի  
անդամներէն էր , խնդրեցի մեր տունը գալ :  
Տալով իրեն Քագու ստացած ապարանջանս ,  
որուն արժէքը 600 ըուպիէն աւելի էր , իսընդ-  
լեցի փոխ տալ ինձ 100 ըուպի մինչև 15 օր ,  
և եթէ ինքը չունի՝ տոկոսով աւնէ տեղէ մը :  
Ես տոկոսը ուրախութեամբ կը վճարէի : Պարսնը  
իր առւնէն նամակ մը զբկեց ինձ , ըսելով որ  
եթէ փեսաս երաշխաւոր ցոյց տայի 100 ըուպիի  
համար՝ ուրախութեամբ կուտար զրամը : Այդ  
համակը զիս սաստիկ վշտացուց : Ես վարժ չէի  
ո՛չ անհատի ո՛չ ալ ժողովրդին զիմել նեղու-  
թեան ըոսպէներուս : Գիտմամը էի հաստատուած  
թիֆլիս , որպէս զի եթէ նեղութեամբ ապրիմ

Թումանեանները զիս չտեսնեն : Զէի ցանկար որ  
ո և է մէկը ինձ օգնէր :

Սաստիկ կուլայի , անկողնոյս մէջ նստած :  
Այդ բոպէին եկաւ Պ. Սարդարեան :

— Վայ , տիկի՞ն . ինչո՞ւ կուլաք :

Տուի նամակը . կարդաց , հասկցաւ ամէն ինչ :

— Այսօր արդէն ժամանակն անցած է .  
վաղն ալ կիրակի է . տեսնենք տեղէ մը կրնա՞մ  
Ճարել , ըսելով առաւ ապարանջանն ու գնաց :

Անմիջապէս յետոյ՝ եկաւ իմ սիրելի Արշակ  
Յարութիւննեանցը : Ան ալ զարմացաւ՝ զիս յուղ-  
ած տեսնելով : Անոր ալ բացատրեցի կրած  
վիրաւորանքս :

— Ինձ չվստահացան 100 մանէթ :

Յարութիւննեանց , հանելով գրպանէն հինգ  
րուպլի .

— Տիկի՞ն ջան , ըսաւ , հոգուդ մեռնիմ,  
մենք հիմա ասով կ'առնենք ամենահարկաւոր  
եղածները , ես վաղը դրամ կը ճարեմ:

Յաջորդ օրը Սարդարեան բերաւ 100 բուպ-  
լին . ես ալ չորս օր յետոյ Պոլսէն զրկուած  
դրամն ստանալով վճարեցինք և ետ ստացանք  
ապարանջանը : Բայց ես այդ տիսուր տրամադ-  
րութեան տակ Գրիգոր Մուրբլին նամակ մը  
գրեր էի , որուն մէջ կար շատ թախիծ : Կեանքը  
կը քննադատէի : Կ'ըսէի թէ չ'արժեր իբր ան-

պէտք արարած մը ապրիլ անկողնի մէջ , այսպիսի  
պայմաններով : Եթէ երկու փոքրիկներս ըլլա-  
յին , արդէն վերջ տուած կ'ըլլայի կեանքիս :

Աիրելի Սաեփանը՝ անհանգիստ ըլլալով իմ  
մասիս՝ ուզեր էր կարդալ նամակը : Տեղեկանա-  
լով վիճակիս , անմիջապէս Գրիգորն ուզարկեր  
էր Թիֆլիս , հետը տալով նամակ մը Պերճիկէն .  
“Ճուտ պիտի գաս այստեղ , եթէ մեզ ալ կ'ըն-  
դունիս իբր զաւակ : Հայրիկին ալ գրեցի , ան  
ալ հրաժարական տալով գործէն՝ պիտի գայ հոս  
հաստատուելու :”

Մարտ ամսուն՝ ճամբայ ելլելով Թիֆլիսէն ,  
եկանք հաստատուեցանք Բագու :

Երկու ամիս յետոյ՝ գացինք Մաշտաղա՝  
ամարանց : Այդտեղ էր որ եկաւ տիկին Եղե-  
սաբէթ Սարգսեան ինձ խորհուրդներ հարցնելու-  
Բագուայ յառաջիկայ թատրոնական “սէզօն”ի և  
անոր յաջողութեան մասին : Ես տկար էի : Գէթ  
այդ միջոցին չէի կարծեր թէ կարող եմ անմի-  
ջական օգնութիւն մը հասցնել այդ ներկայա-  
ցումներուն :

— Եթէ արժէք մը կարող են ունենալ իմ  
խորհուրդներս , պատրաստ եմ : Պէտք է անմի-  
ջապէս բէփերթուար կազմէք , յետոյ հրաւիրէք  
մէկ լաւ դերացոյց , թող ըլլայ ոռւս , իտալացի  
կամ գաղղիացի , միենայնն է , արուեստը լեզու

չունի : Ինքնուրոյն խաղերու համար բեժիսօր հարկաւոր չէ , իսկ եւրոպական , ոռուսական խաղերը անոնց ծանօթ են : Մենք չունինք ուսումնարաններ գերասաններու համար : Մեր ուսումնարանը , գործնական դպրոցը՝ պիտի ըլլայ թատրոնը : Եթէ դուք պիտի տաք ներկայացումներ այնպէս ինչպէս կուտան գերասանները այս կամ այն կողմ , չ'արժեր ատոր համար հովանաւորութիւն , չ'արժեր դրամ ծախսել : Երբ բէփերթուարը պատրաստ կ'ըլլայ , նոյնպէս և բեժիսօրը , այն ատեն է որ ըստ բէփերթուարի կը կազմուի խումբը : Բէփերթուարէն պիտի հասկնանք թէ ո՞վ պէտք է հրաւիրենք : Ամէն պարագայի մէջ , տիկին , այս տարի կը ներկայացնէք ամիսը 4 կամ 5 անգամ . իսկ գալ տարի կ'ունենաք կանոնաւոր բէփերթուար : Այն ատեն կարելի է ութն անգամ ներկայացնել , 4 խաղ՝ նոր , մացեալը՝ բէփերթուարէն : Եթէ կարողանաք այս ամառ երկու ամսուան համար վճարելով գերասաններուն կէս կէս ամսական , փորձեր ընել տալ , այն ատեն կարելի է մինչև վեց անգամ ներկայացնել : Շնորհակալութիւն յայտնելով չեւացաւ տիկին Սարգսեան : Հետզիետէ եկան Մաշտաղա և ինձ հետ այն նպատակաւ տեսակցեցան Պ. 8.

Յովհաննիսեան և ուրիշներ : Անոնց ալ կրկնեցի նոյն խօսքերը :

Ամառը վերջացաւ , եկանք բագու : Դերասաններն ամբողջապէս հաւաքեր էին բագու , բայց ո՛չ բէփերթուար կար և ո՛չ ալ գերացոյց : Փորձեր չէին եղեր , պիտի սկսէին ներկայացումները կարծեմ հոկտ . 15ին : Որդիս՝ թումանեանց Ստեփանն ալ հովանաւորող անդամներէն էր : Իրմէ ինդրեր էին , ան ալ եկաւ ինձմէ ինդրելու .

— Մայրիկ , կը ինդրեմ , ստանձնէ՝ գերացուցութեան պաշտօնը , մինչև որ գայ գերացոյցը . մէկ քանի ներկայացումէ յետոյ՝ պյտեղ կ'ըլլայ :

Ընդունեցի որգւոյս առաջարկութիւնը :

Հովանաւորող անդամներէն ոմանք հրաւիրեցին մեզ գրադարանի դահլիճը : Ուզեցի գերասաններուն ցուցակը տեմնել Տեսայ որ բոլորն ալ հերոս են՝ քիչ բացառութեամբ : Հարցուցի վերահսկող պարոնին թէ արդեօք ներկայացուելիք ինալերուն անձնաւորութիւններն ալ ամբողջապէս հերոսներէ՝ բաղկացած են :

Հետեւեալ օրը պիտի սկսէինք փորձել “Հոգւով աղքատներ” : Ինձ ծանօթ չէր խաղը , իրնդրեցի անդամներէն որ այդ իրիկունը ինձ յանձնեն զայն՝ որպէս զի ուսումնասիրեմ : Ինձ առարկեցին

թէ այդ իրիկունը պէտք ունէին փիեսին՝ դերեր  
օրինակելու համար:

— Ստեփան, որդեա՛կ, կարելի չէ այդպէս,  
ես ինքս չեմ գիտեր ի՞նչ է խաղը, ի՞նչպէս  
կարողանամ երթալ և դեր ցոյց տալ:

— Մայրի՛կ, կերպ մը գտիր, խնդրեմ,  
գնա՛ վաղը անպատճառ:

Գացի թատրոն ։ չբարձրացայ բեմին վրայ ։  
սրահին մէջ, առաջին կարգի աթոռի մը վրայ  
նստայ Գերասաններէն շատերը հետո կը զուրա-  
ճանային.

— Այստեղը ի՞նչպէս պէտք է ըսել, տիկի՞ն:

— Պարոններ, ես ծանօթ չեմ փիեսին.  
ի՞նչպէս որ ներկայացուցեր էք, այնպէս ալ  
ըրէք :

Բայց սաստիկ կը նեղուէի, և շատ գէշ  
դրութեան մէջ կը զգայի զիս:

Յանկարծ, գերասան Արաքսեանը,

— Ներեցէ՛ք, տիկին, ըսելով, ծաղրական  
եղանակաւ ցոյց տուաւ Պ. Աւետեանը որ կը  
կատարէր Աւատուշի դերը, և ըսաւ անոր. —  
“Դուք այս միջոցին սաստիկ հարբած էք”:

Այդ գիշեր յայտարարեցի ՊՊ. անդամնե-  
րուն, որ եմէ իսկոյն ինձ շտան փիեսը, ինչ որ  
ալ ըլլայ՝ ա՛ւ ներկայ չպիտի գտնուիմ փորձե-  
րուն։ Ստացայ խաղը և լաւ մը ուսումնասիրեցի:

Հետեւալ օրը գացի փորձին : Այլ ևս բեմի  
վրայ էի, յուշարարին քովը : Առաջ սկսայ  
փոքրերուն դիտողութիւն ընել . հետզհետէ  
կարգը հասաւ մեծերուն. Աւատուշն եկաւ բեմ,  
հարբած դրութեան մէջ :

— Ո՛չ, Պ. Աւետեան, դուք հարբած չէք :

— Ի՞նչպէս, տիկի՞ն, ըսաւ Պ. Արաքսեանը,  
քիչ առաջ ես ըսի բեմի վրայ թէ ան սենեակը  
նստած կը հարսի :

— Քիչ յետոյ ինքն ալ պիտի ըսէ՝ “Երկու  
երեք շիշ շամբանեա խմեցի հարբելու համար,  
բայց կարծես քարի վրայ եմ լեցուցեր, ոչ մէկ  
ազդեցութիւն չըրաւ”:

Առաջնակարգները նախ դժգոհութիւն ցոյց  
տուին . բայց յետոյ սիրեցին զիս . ես ալ կը  
սիրէի զանոնք :

Օր մը դերի մը համար խօսք կ'ըլլար թէ  
“Այս իմ՝ “ամիկուաս” չէ”:

— Պարոններէ՛ք, հաւատացէ՛ք, ես երբէք  
յանձնառու չեմ ըլլար որ ամենափոքրիկ դերա-  
սանն իսկ խայտառակուի : Ես պիտի աշխատիմ  
որ ամենքդ ալ ստանաք պսակներ : Ես ձեր  
պսակներէն թափած ծաղիկները հաւաքելով  
պիտի կազմեմ պսակ, ան ալ բեմին ետեւը :

“Հոգւով աղքատներ, ուն ներկայացումը լաւ  
անցաւ : Երկրորդ ներկայացումն էր “Տօն Կրիկօ-

բիօ”, Պ. Թըրեանցի ուշուն: Երրորդը պիտի  
Ըլլար “Գամելիազարդ տիկին”, Պ. Աբէլեան չէր  
ուզեր կատարել Արմանի դերը: Տիկին Սարգս-  
եան, Ներկայացնելով Պ. Օհանեանը, ինձ ըստւ.  
— Աչաւասիկ ձեզ Արման մը:  
— Պարոնը արդէն կատարած է այդ դերը:  
— Ո՛չ, տիկին:  
— Հապա ի՞նչպէս պիտի կարողանայ Յ-Կ  
փորձով կատարել այդպիսի պատասխանատու  
դեր:  
— Եթէ կուզէք, կը պատասխանէ Պ.  
Օհանեան, այս գիշեր տուէք ինձ դերը, վաղն  
առտու արդէն պատրաստ է:  
— Տիկին Սարգսեան, այդ պարոնը դերա-  
սան չէ:  
— Ի՞նչ կ'ըսէք, տիկին, ինչո՞ւ կը վիրա-  
ւորէք պարոնը. ան մեր բեմին զարդն է:  
— Կարող է սալօններու զարդ Ըլլալ, բայց  
ո՛չ բեմի. տիկին, անկարելին խոստացողէն ոչինչ  
կարելի է սպասել:  
— Տուէք այս գիշեր դերը, և կը տեսնէք:  
— Ո՛չ, տիկին, պէտք է այժմ տամ իրեն  
“Տօն Կրիկօրիօ” մէջ երկրորդական սիրահարի  
դերը, եթէ յաջող կատարէ, այն ատեն կա-  
րելի է նաև մեծ դերերու մէջ փորձել պարոնը:  
“Տօն Կրիկօրիօ” ի Ներկայացումը յաջող

անցաւ, բայց ևս գոհ չմնացի Պ. Օհանեանէն:

Աւթը գիշեր մեր տունը կը կատարէինք  
փորձեր տիկին Սիրանոյշի հետ՝ Մարկրիթի դե-  
րին համար. Աբէլեանի ձայնը մարած էր, ինք  
ալ տկար. այդ պատճառով էր որ չէր ուզեր  
խաղալ: Շատ խնդրեցի. ընդունեցաւ Արմանի  
դերը և յաջողութեամբ Ներկայացուց :

Ներկայացման իրիկունը, ժողովուրդը շատ  
գոհ էր ամբողջութենէն: Խաղին վերջը, սկսան  
ծափահարել և “Հրաչեայ” աղաղակել: Ես չէի  
ուզեր երեալ: Գերասաններէն և գերասանու-  
հիններէն եղան ըսողներ. “Ի՞նչ պէտք կայ հիմա”,  
Բայց բարի Աբէլեանը վարագոյրը բարձրացնե-  
լու նշանը տուաւ և գրեթէ զիս գրկելով բեմ  
հանեց՝ ժողովրդեան առջև ձեռքերս համբու-  
րելով:

Այդ “սէգօն”ի նոր դերասանն էր Պ. Ալի-  
խանեան: Այդ Յ-Կ Ներկայացմանց ընթացքին,  
Պ. Ալիխանեան վազելով կը յառաջանար: Խընդ-  
րեցի անդամներէն աւելցնել անոր ամսականը:  
Չեմ յիշեր՝ 10 կամ 15 րուպի աւելցուցին:  
Հասան Գէլէկեան քոյրերը: Ներկայացուցինք  
“Զըքանչ” խաղը: Վրկին հասարակութիւնը գոհ  
մնաց, նոյնպէս և լրագրութիւնը: Չեմ գիտեր  
քանի՛ Ներկայացում էինք տուեր, յանկարծ

Հարց բարձրացուցին թէ երկու օրուան մէջ  
պիտի ներկայացնէին „Պատիւլ“:

— Ի՞նչ կըսէք, տիկի՞ն Սարգսեան, առ  
անկարելի է:

— Բայց, տիկի՞ն, դերասանները պատրաստ  
են, անոնք կըսեն՝ „Մենք կարող ենք“, իսկ դուք  
կը հակառակիք:

— Ես անձնուիրաբար կը կատարեմ դերա-  
ցոյցի պաշտօնը, և մինչև անգամ գրավոնէս կը  
ծախսեմ: Բայց եթէ դուք նոյն իսկ խոշոր ամ-  
սական մը վճարէք, ես դարձեալ այսպիսի պայ-  
մաններու մէջ կը հրաժարէի դերացուցութենէ:  
Անոնք անպատուելով՝ „Պատիւլ“, պիտի ան-  
պատուեն և զիս: Ես կ'արգիեմ դնել ազդա-  
րարութեան վրայ՝ „Եեկավարութեամբ տիկին  
Հրաշեայի“:

— Թող տպուի այդպէս, ձեզ ի՞նչ վնաս.  
Եթէ կուզէք, ներկայ մի՛ գտնուիք փորձերուն:

— Ո՛չ, ես կը բոլողեմ: Ես երբէք չեմ տար  
պ. Օչանեանին բոպերթի դերը:

Վերջապէս ներկայացուցին „Պատիւլ“: Այդ  
երիկուն բազմութիւն քիչ կար: Ես նստած էի  
օթեակս և կը կարմրէի տեսնելով բեմին վրայ  
կատարուող խայտառակութիւնը: Միջնարարին՝  
դացի տիկին Սարգսեանի օթեակը:

— Բայց ի՞նչպէս գիտցաք որ պիտի չյա-  
ջողին:

— Աս իմ արուեստս է, տիկին. Եթէ  
վաճառականութիւն ըլլար, ոչինչ կարող էի  
հասկնալ:

Այն գիշերէն ի վեր ուր ես ծափահարուե-  
ցայ, ոմանց հաճելի չէր եղած ատիկա, և աշ-  
խատեցան զիս հեռացնել թատրոնէն:

Ժամանակ մը յետոյ՝ եկան ինձմէ ինդրել  
որ ընդունիմ րեժիսորութեան պաշտօնը, բայց  
ամսականով: Պայման դրի չորս կամ առ առա-  
ւելն հինգ խաղ ներկայացնել այդ տարի, 500  
ըուպի ամսական և մէկ նպաստ: Այդ գումարը  
սարսափելի երեցաւ իրենց, թէեւ այդ „սէզօն“ին  
իրենց ըրած ծախքերուն գումարովը հմուտ ձեռք  
մը խումբ մը ևս կարող էր պահել կանոնաւոր  
կերպով: Վճարեցին 150 ըուպի, և բերելով  
երկրորդ բեմայարդար մը, նստեցուցին րեժի-  
սորի տեղը: Արդէն պետք չէին զգար հիմնաւոր  
գործ մը բռնելու: Արտաքինը զարդարուն էր.  
այդ բաւական էր իրենց համար: Գերասաննե-  
րէն մէկ քանին նոյն իսկ ինդրած էին անդամ-  
ներէն որ հարիւրին հինգ զեղջեն իրենց ոռջի-  
կէն, բայց տան իրենց ուսուցիչ մը:

Այդ միջոցին, կարծեմ „Նոր-Դար“ի մէջ,  
քննադատական յօդուած մը երեցաւ “Քոյր

զիս պատուեր էին երկրորդ կարգի օթեակ մը  
գնելով տրամադրութեանս տակ : Իսկ երրորդ  
սուզօն „ին՝ թատրոն երթալու համար պէտք էր  
վճարէի : Դատեցէք, ինդրեմ :

Անգամ մը գերասանուշիներ եկեր էին  
մօտս . որքան որ կրցեր եմ՝ աշխատեր եմ այդ  
իրիկուան գերը ցոյց տալ իրենց : Խնդրեր են  
որ այդ իրիկունը թատրոնը գտնուիմ, որպէս զի  
կարողանամ քննադատել :

Իրիկուան, գացի թատրոն, վճարեցի տոմ-  
սակի գինը, և նստած էի օթեակիս մէջ . յան-  
կարծ եկաւ օթեակիներու ծառան :

— Տիկին, այս տոմսակը “ապօնման”ի տոմ-  
սակ է :

— Այդ իմ գործս չէ, թող վաճառողը  
չտար :

Գնաց ծառան, տեսնուեցաւ վերահսկող  
անդամներէն մէկուն հետ, քիչ յետոյ վերա-  
դարձաւ .

— Տիկին, տեսնեմ ձեր տոմսակը :  
Ցոյց տուի, և հեռացաւ .

Ամօթ, և հազար ամօթ : Պոլիս եղած  
ժամանակս, ֆրանսական, իտալական, յունական  
և թրբական թատրոններ միշտ եղած եմ, և ոչ  
մէկ կոպէկ չեն ընդունած ինձմէ :

Որդիս Հայկը գիշեր մը թատրոն էր գացեր:

Պ. Աւետեան տոմսակ է հարցուցեր քոմիթէի  
կողմէն, և տեսնելով որ չունի,

— Պ. Հայկ, գուրս ելէք թատրոնէն :

— Դուք գուրս ելէք թատրոնէն, կը պա-  
տասխանէ Հայկը : Դուք ո՞վ էք : Ես տեսարանի  
վրայ եմ ծներ : Զիս այս տեղէն հեռացնելու  
ոչ ոք իրաւունք ունի :

— Պարապ խօսք մի՛ ընէք, եթէ ձեր մայ-  
րիկն ալ գայ, պիտի վճարէ : Այսպէս ենք  
վճռած :

Ես իմ որդիկս աւելի հպարտ էի : Առանց  
վճարելու թատրոն չէի երթար :

Այժմ տեսնենք թէ այդ երեք տարուան  
շրջանը ի՞նչ տուաւ մեզ, ի՞նչ յառաջադիմու-  
թիւն ունեցանք, ի՞նչ նոր ուժեր հասուցինք :

Ոչի՞նչ, կրկին ոչի՞նչ, բաց ի Պ. Արէլեանի  
կատարած քանի մը լաւ գերերէն :

Եկաւ Պ. Յովհաննիսեան : Պիտի ներկայաց-  
նէր “Քին” : Ի՞նչ ոգեւորութիւն : Ի՞նչ “գիւտո” :  
Ի՞նչ տաղանդ, հանձար : Ոսկի “շիֆր”ով ու-  
սումնաւարտ :

Տկար, անկողնէս ելլելով գացի “Սիրք-Թատ-  
րոնը”, ուր պիտի տրուէր ներկայացումը, և որ  
լցցուն էր ժողովրդով : Բացուեցաւ վարագոյքը,  
տեսայ առաջին արարուածը : Տիկին մը եկաւ  
մօտս, հարցուց թէ ինչպէս կը գտնեմ : “Լաւ

է", ըսի: Այդ տիկինը շատ թատերասէր էր: Երբորդ արարուածին՝ կրկին եկաւ ու հարցուց:

— Ի՞նչպէս կը գտնէք:

— Լաւ:

— Բայց դուք ուղիղ չէք խօսիր:

— Տիկին, այս միայն պիտի ըսեմ, թէ մեղք որ կանուխ ենք ծներ. դէմ պղնձէ մէտայլի մըն ալ մենք կ'արժանանայինք:

Տիկինը բարկութեամբ հեռանալով քովէս, բարձր ձայնով իր ծանօթներուն ըստ.

— Պարոններ, դերասանները կը նախանձին:

Այսպիսի խօսքի մը վրայ կարող էի ծիծաղիլ:

Երկրորդ ներկայացման, խեղճը գլորեցին դետին ու հողի հաւասար ըրին. ինչո՞ւ այնքան բարձրացնել և ինչո՞ւ այդպէս գլորել:

Անոր անկմանը յանցանքը մերն է: Պ. Յովհաննիսեան ուղիղ ձանապարհի վրայ էր, բայց մենք զայն ետ քաշեցինք: Անոր ուսուցիչը ամենալաւ ուսուցիչն է եղեր, բնական դպրոցի մարդը և ատիկա յայտնի էր նոյն իսկ իր աշակերտի խաղացուածքէն: Այո՛, ան ձիշտ սորված էր տեսականը, լաւ էր ըմբռնած բնական դպրոցը, այդ պատճառաւ ստացեր էր ոսկի

"շիֆրը") , բայց այդ ուսուցիչը այժմ պէտք էր որ անոր հետ ըլլար գործնական դպրոցին մէջ գէմթ մէկ "սէզօն", որպէս զի իր աշակերտին իւրացնել տար բնականը: Անիկա "էֆէներու չէր կարող գիմել, իսկ իր ունեցածը տհան էր մենք մեմի վրայ, թոյլ պիտի չտար անոր "Քին"ով սկսիլ, իրեն ուժին համեմատ բեռ տալով՝ պիտի չձգէր որ անկման ենթարկուի: Մէկ "սէզօն", բաւական էր որ ան մեծնար և ըլլար իրապէս "Քին":

1899ին, տկարութիւնս կրկին սաստկացաւ:

Քժիշկ Տէր-Մելքիսեդէկեանց իննամեց զիս ամբողջ ձմեռ: 1900ի ամառը գացի Ժէլիզնօվոտնք: Միշտ ինքը կը իննամեր զիս, և ուրիշները կը կանչէր խորհրդակցութեան: Քիչ մը կազդուրուելով կը վերադառնայի: Այսպէս, ամառ ձմեռ, առանց տհաճութեան անձնութերաբար խնամեց զիս ազնիւ բժիշկը հինգ տարի շարունակ: Վերահսկողները զիս չէին ձանչնար իրրե աղքատիկ աղքին աղքատիկ դերասանունին, իսկ ազնիւ բժիշկը կը ձանչնար: Ի՞նչ

\* ) Քննությարարի աշակերտներուն ստացած ամենին բարձր ասիմմեն է, տիվլումն իւ ոսկի մետալէն աւելի բարձր աղքատիկ աղքին աղքատիկ դերասանունին, իսկ ազնիւ բժիշկը կը ձանչնար:

գրել, շնորհակալութիւն . ո՞չ . ատ շատ քիչէ  
է . ես չեմ կարող բառ մը գտնել որ փոխարինէ:

2եմ մոռնար նաև բժիշկ Յակոբեան աղնիւ  
երիտասարդը, որուն ինսամբներէն ալ շատ օգ-  
տուած ենք ամբողջ ընտանեօք :

1901ին ևս երթալով Ճելիզնօվոսուք, փոր-  
ձեր կընէի բժշկուելու :

1902ի ամսուը, զիս շատ յուսագրեց ոռւս  
բժիշկ մը, խոստացաւ բժշկել կոկորդս : Շատ  
ուրախ էի : Տիկին Աօֆի Ադամեանին՝ այդ գոր-  
ծունեայ և բանիբուն տիկնոջ՝ հետ միանալով  
դացի Քիսլավօսքս, ուր կը գտնուէին Մոսկուայի  
առաջնակարգ կար կարողները : Պատուէր տուի  
չորս փիէսի համար զգեստներ : Ուրախ զուարժ  
վերադառնք Ճելիզնօվոսուք :

Այդ գիշեր երկրորդ անգամ ըլլալով կո-  
կորդէս արիւն հոսեցաւ : Գացինք բժշկին մօտ :

— Տիկին, բաւական է որբան որ աշխա-  
տեր էք . այլ ևս հանգիստ ըրէք : Դեղերն ալ  
թողէք, մի՛ գրգռէք ձեր կոկորդը, ան ձեզ  
չի վխասեր :

Եթէ սիրելի տիկին Ադամեանը չըլլար իմ  
մօտս, չեմ գիտեր թէ ի՞նչ կը պատահէր ինձ :

1901—1902ի “սէզօն”ն, զերասանները  
ընկերութիւն մը կազմելով եկան բագու և տուին  
շաբք մը ներկայացումներ :

Նախկին հովանաւորող անդամներէն մին՝  
եկաւ ինձ ինդրել որ ներկայացում մը զեկա-  
վարեմ: Մասնակցողները պիտի ըլլային թատե-  
րասերներ: Ներկայացումը պիտի տրուէր յօգուտ  
թատրոնական ֆօնտի : Այս պարոնը այն վերա-  
հսկողներէն էր որոնց օրով թատրոնի մուտքս  
կը վճարէի :

Ընդունեցայ : Յաջող անցաւ ներկայացումը:  
Շատ զարմացայ տեսնելով վերջին արարուածին  
ինձ նուիրուած ծաղկեփունջը : Տիկին Լիզա  
Կրասիլնիկեանն էր մտածեր թէ՛ փունջով և  
թէ՛ մասնաւոր այցելութեամբ շնորհակալութիւն  
յայտնելու : Զգածուած սրտով ես ևս յայտ-  
նեցի աղնիւ տիկնոջ շնորհակալութիւնս :

1902—1903ի “սէզօն”ը կրկին մէկ քանի  
հովանաւորողներ պիտի պահէին անկատար  
խումբ մը . բայց “սէզօն”ը չվերջացած՝ գործը  
սնանկացաւ :

1903ի գարնան, նոյն հովանաւորողը տիկին  
Աօֆի Ադամեանը հետն առնելով եկաւ ինձ մօտ  
ինդրելու որ անպատճառ մասնակցիմ Պետրոս  
Ադամեանի մահուան տասնամեակի առթիւ  
տրուելիք ներկայացման :

— Դո՛ւք պիտի պասկէք Ադամեանը, տի-  
կին Հրաչեայ, ըսաւ : Եէք կարող մերժել ձեր  
նախկին ընկերոջ յարգանք մատուցանել :

— Ես կ'ընդունիմ այն ատեն երբ ներկայացման հասոյթը անոր յիշատակին նուիրէք . կամ անոր անշուք գերեզմանը կը զարդարէք և կամ ուեէ անկիւն փոքրիկ յուշարձան մը կը կանգնէք : Ըստ իս, դուք կը շահագործէք անոր անունը : Խեղճ Ադամեան . կենդանութեանը ոչինչ ենք ըրեր . եթէ ապրէր, անկէ ալ պիտի պահանջէինք որ մուտք վճարելով մտնէ թատրոն, մահուընէն յետոյ ալ անոր անունը կը շահագործենք :

Տիկին Ադամեանը սկսաւ պնդել : Ես չեի կարող մերժել . շատ կը յարգէի ու կը սիրէի զինքը : Տիկինը Մոսկուա պիտի երթար իր անձնական գործերուն համար : Խոստացայ : Տիկինը մեկնեցաւ յաջորդ օրը : Ինձ ըսեր էին թէ գովասանական ոտանաւոր մը պիտի կարդայի Ադամեանին ուղղեալ, “ափոթէօզ”էն անմիջապէս առաջ, և իսկոյն պիտի պսակէի Ադամեանի պատկերը :

Այդ իրիկունը՝ ազգարարութեան վրայ տեսայ որ գրուած էր՝ երկրորդ թէ երրորդ թիւ՝ Հրաշեայ : Սաստիկ յուզուեցայ : Ոչինչ կ'արժէր արտասանելիք գովարանական ոտանաւորս . եթէ “ափոթէօզ”էն անմիջապէս առաջ չըլլար : Այն ատեն, տիկին Աիրանոյշ զիս վստահացուց թէ՝  
— Միւնոյն բանն է, ես առաջ կը կար-

դամ, քանի որ Գուրեանէն կտոր մը պիտի կարդամ . դուն ալ յետոյ կարդա՛:

Տիկին Աիրանոյշ ինձմէ առաջ հագուելով գնաց տեսարան : Ես ալ կամաց կամաց հագուելով դուրս եկայ այն բոպէին՝ տիկին Աիրանոյշը լսելու : Բայց տիկինը յանկարծ ըսաւ .

— Ո՛չ, ես այս բոպէին բեմ չեմ ելլեր, անյարմար է . „ափոթէօզ”էն անմիջապէս առաջ են գրեր իմ անունս, այն ատեն կ'ելլեմ բեմ:

Ի՞նչ կարող էի ըսել : Թէւ պատրաստութիւն չունէի անմիջապէս բեմ ելլելու, բայց ժողովուրդն ինձ կը սպասէր . ելայ կտորս ըսի : Տիկին Աիրանոյշ ամենէն ետքը ելաւ : Իսկ “ափոթէօզ”ին՝ ուսւ աղախին մը պսակեց Ադամեանը :

Հապա ի՞նչ բանի համար էին ինձ ինզըերունդըեր և խարեր էին, որպէս զի իմ անունս ալ շահագործեն :

Խեղճ տիկին Ադամեան, ան ալ խարսուած էր ինձ նման :

Ի հարկէ, այդ ներկայացման իրիկունն ալ, չոփանաւորող պարոնէն չոր շնորհակալութեան մը չարժանացայ :

Տիկին Պոպով, իր հեղինակած “Ճմարտութեան Պահապան” փիէսին համար եկաւ ինդըելու որ ստանձնեմ գերացուցութեան

պաշտօնը . ընդունեցայ . ժողովուրդը շատ գոհ  
մաց . սիրող-դերակատարներն ու հեղինակուհին  
և զոհ մնալով՝ յայտնեցին ինձ իրենց շնորհա-  
կալութիւն , բեմին վրայ նուէր մը տալով ինձ :

Փիսադարձաբար յայտնելով շնորհակալու-  
թիւնս . հեռացայ Ակումբէն , ուր տեղի էր ու-  
նեցեր այդ ներկայացումը :

## ՃՌ.

Ի՞նչ պէտք է մեզի՝ թատրոնական գործը  
լաւ հիմքի վրայ դնելու , ժողովրդի մէջէն դե-  
րասաններ , մինչև անդամ տաղանդներ հանելու  
համար : Անոնք որ կային քսան տարի առաջ ,  
անոնցմէ շատերը ոչ ևս են : Անոնք որ կան այս  
միջոցիս , շատ կարելի է որ անոնցմէ շատերը  
տասը տարի յետոյ անհետացած ըլլան :

Պէտք է ձմեռը մտածել , գարնան ձեռք  
բերել . ամառը ցանել , ձմեռը չնձել . գէթ  
մէկ երկու տարի , մինչև որ բաւականաչափ  
պաշար ունենանք , այսինքն բէֆերթուար :

Այո՛ , պէտք է անպատճառ գարնան պատ-  
րաստ ըլլայ գէթ քսան խաղ , դերերը օրի-  
նակուած , մինչև անդամ մէն մի դեր թող  
երկու օրինակ արտագրուած ըլլայ :

Պէտք է հրաւիրել հմուտ ուսուցիչ , որ  
կարողանայ հետեւիլ գերակատարներուն , հար-  
կաւոր եղած ատեն ինքն անձամբ փորձէ փորձի  
ժամանակ և ցոյց տայ ներկայացուելիք անձնա-  
ւորութեան գոյնը :

Յետոյ , պէտք է հրաւիրել գերասանները՝  
ըստ բէֆերթուարի , յունիս , յուլիս , օգոստոս  
ամիսները , վճարելով անոնց կէս-կէս ամսական ,  
փորձեր ընել տալ անպատճառ : Պատրաստել  
տասը խաղ առաջուց , որպէս զի շաբաթական  
երկու լաւ ներկայացում կարելի ըլլայ տալ :  
Այն ժամանակ միայն կարելի է պահանջել  
դերակատարներէն որ անգիր գիտնան իրենց  
դերերը և ուսումնասիրած ըլլան իրենց ներ-  
կայացնելիք անձնաւորութեանց բնաւորութիւն-  
ները :

Պիտի առարկուի թէ անոնք արդէն բաւա-  
կան քանակութեամբ դերեր ունին պատրաստ՝  
հետզհետէ տրուած ներկայացումներէն : Ո՛չ ,  
ատիկա բաւական չէ : Անոնք միշտ հապճեպով  
պատրաստեր են իրենց դերերը , առանց ու-  
սուցչի , և աւելի հապճեպով ալ եղեր են միշտ  
կրկնութիւնները :

Բեմը պէտք է ունենայ իր ներքին կանո-  
նագրութիւնը , և պայմանաւորեալ դերասանը

պիտի ստորագրած ըլլայ նաև ներքին կանոնագրութիւնը :

Ծանուցում հարկաւոր է լրագրութեան միջոցաւ, թէ ցանկացողներուն համար ազատ է “փարթերով՝ շաբաթը գէթ երկու անգամներկայ ըլլալ փորձերուն, այն պայմանաւ որ բեժիսորէն ստացած ըլլան մուտքի տոմսակ : Եւ եթէ անոնք կը սիրեն արուեստը, կարող են դերեր առնել բեժիսորէն, և մասնաւոր փորձեր ընելով՝ օգուտ տալ ապագային թէ՛ հայ բեմին և թէ՛ իրենց անձին :

Առանց այս հիմնական սկզբունքին, ոչ լաւ ներկայացումներ կ'ունենանք և ոչ ալ ապագայ դերասաններ :

Ի՞նչ մեծ կորուստ է երեք ամիսը՝ այսքան տարիներու զոհողութեան փոխարէն, երեք ամիս կէս-կէս ամսական վճարել դերասաններուն՝ գէթ մէկ տարի . միթէ այդքան անիրականալի պահանջնջ է, և միթէ այդքան մեծ զոհողութի՞ւն կը պահանջէ :

Ո՛չ, ես կը պնդեմ թէ ո՛չ : Ատիկա չնչին զոհողութիւն է, և այդ բանի իրականացումը անցեալի, նոյն իսկ հեռու անցեալի սիալը պիտի սրբագրէ :

Մնակեան 22 տարիէ ի վեր խումբ կը պահէւ Բայց ոչ մէկ ուժ չկարողացաւ տալ մեզի: Որով-

հետեւ ուսուցիչ չունէր, ինքն էր ստանձներ այդ պաշտօնը : Մնակեան լաւ դերասան է, եթէ չհարթի : Գիտէ ուսումնասիրել իր դերերը : Թուրք լեզուաւ եւրոպական խաղեր է թարգմաներ՝ շատ յաջող, թուրքաց համար թատրոնական լեզու է ստեղծեր : Ատիկա կ'ընդունիմ: Բայց գէթ թուրքաց համար մէկ դերասան չէ տուեր, որ կարողանայ կատարել իր դերը այնպէս, ինչպէս որ խաղի հեղինակն է ցանկացեր:

Եթէ Մաղաքեանը եղած ըլլար, ոչ Ադամեան, ոչ Հրաչեայ, ոչ Աստղիկ, ոչ Սիրանոյշ, ոչ Գարագաշ և ոչ Թրեանց չպիտի ունենար հայ բեմը : Հետեւեցէք, պիտի տեսնէք դուք անձամբ թէ սոքա միւնոյն շրջանի դերասաններն են :

Կարծեմ, եթէ չեմ սիալիր, 1894ին, կը գտնուէի Պոլիս, Սենեքերիմ Արծրունին ինձ դիմած է նամակով մը, որպէս զի ցոյց տամ Պոլսոյ մէջ գտնուող ուժերէն մէկ քանին, որ կարող ըլլային փոխանորդել ինձ և կրտսէր Գարագաշին :

Մօտաւորապէս սա իմաստով պատասխան տուի պարոնին .

“Դուք ինչո՞ւ համար չեք մտածեր Հայոց թատրոնի ապագայի մասին : Միթէ կարելի՞ է ո և է Գարագաշի մը կամ Հրաչեայի մը քմա-

2013  
2005

Հաճոյքին զոհել այդ դպրոցը : Հրաչեան կ'ա-  
ռարկէ թէ հիւանդէ , Գարագաշը չ'ուզեր  
Կովկաս երթալ , պատճառ բռնելով թէ Կով-  
կասի օդը իրեն չի դար : Այսպիսի չնչին պատ-  
ճառներու համար պէտք է փակ մնայ Հայոց  
թատրոնը : Սիրելի՛ բարեկամ, ձեզի պէտք է  
ուսուցիչ , որպէս զի կարողանաք ապագայի հա-  
մար ուժեր պատրաստելով թատրոնական դործը  
հիմքէն վերականգնել :

Քսաներկու տարի յետոյ , դարձեալ կը  
կրկնեմ միևնոյն բանը , քաջ գիտնալով որ ձայնս  
անլսելի պիտի մնայ՝ ինչպէս մնաց մինչև ցարդ :



-50

ՀՀ Ազգային գրադարան



NL0683032

